



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



COUNTERPART
INTERNATIONAL



**ԲԱՆ՝ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱՅԱՍՏԱՆ
ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ
2012-2013 ԹԹ ԵՎ 2014-2016 ԹԹ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ**



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

COUNTERPART
INTERNATIONAL



Սույն գիրքը հնարավոր է դարձել տպագրել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի» և Ամերիկայի Միացյալ Նահանգների Ժողովրդի առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում՝ «Ասպարեզ» ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Ասպարեզ» ՀԿ-ին, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Ա. Ներածություն

ԲԿԳ գործընթացներում Հայաստանի Հանրապետության ներգրավվածության համառոտ պատմությունը

Բաց կառավարման գործընկերությունը (Open Government Partnership) միջազգային մի նախաձեռնություն է, որին Հայաստանը անդամակցել է 2011 թվականից եւ, որի նպատակը անդամակցած երկրներում իշխանությունների ու շահագրգիռ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ առավել բաց, առավել թափանցիկ եւ հաշվետու հանրային կառավարում ունենալն է:

ԲԿԳ մի շարժում է, որ սկիզբ է առել 2011-ի սեպտեմբերին՝ 8 երկրների նախաձեռնությամբ (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, ՅՄՐ, ՄԲ եւ Հի Միացյալ Թագավորություն, ԱՄՆ) եւ, որին առայժմ միացել է մոտ 60 երկիր, Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է նախաձեռնությանը 2011-ի նոյեմբերին: Շարժման նախաձեռնության հռչակագրում ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարողների գործողությունների մասին հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ունենալ առավել թափանցիկ եւ պատասխանատու իշխանություններ եւ այլն:

2012 թվի ապրիլի 17-ին Բրազիլիայում, Հայաստանը, ի դեմս ՀՀ ԱԳ փոխնախարար Աշոտ Յուզվադյանի, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ներկայացրեց ՀՀ Գործողությունների ծրագիրը, որը, քննարկումից հետո, ԲԿԳ ղեկավար մարմինը ընդունեց որպես 2012-2013թթ Հայաստանի գործողությունների ծրագիր:

Հայաստանի 2012-2013թթ գործողությունների ծրագրի հիմնական դրույթները, ընդհանուր առմամբ նպատակաուղղված են Հայաստանում էլեկտրոնային կառավարման զարգացմանը, հանրային կառավարման համակարգի արդյունավետության, թափանցիկության եւ հաշվետվողականության բարելավմանը. հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը, հանրային վարչարարության արդյունավետության եւ գործառնական բարեփոխմանը, տեղեկատվության ազատության զարգացմանը, այդ թվում պաշտոնական կայքերի ձեւաչափային համանմանեցմանը, բարձրաստիճան պաշտոնյաների եկամուտների եւ գույքի հայտարարագրերի հրապարակայնացմանը, հարկային վարչարարության թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին եւ այլն:

2012 թվականի սեպտեմբերին ՀՀ վարչապետը հրամանագրով սահմանեց այդ գործողությունների ծրագրի վերահսկող խորհրդակցական մարմին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ԲԿԳ հայաստանյան համակարգող Տիգրան Գեւորգյանի գլխավորությամբ: Այդ մարմինը 15 անդամ ունի, որոնցից 12-ը պետական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ են, իսկ 3-ը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Այդ մարմնի առաքելությունը գործողությունների այդ եւ հետագա ծրագրերի ընթացքը դիտարկելն է եւ հնարավոր խորհրդատվությունն ու աջակցությունը ծրագրի իրականացմանը՝ պետական պաշտոնյաները՝ ի պաշտոնե, իսկ ՀԿ ներկայացուցիչները՝ կամավորությամբ: Այդ խորհուրդն աշխատում է նիստերով, որոնք գումարվում են Կառավարական տանը:

2013 թվականի օգոստոսին ԲԿԳ հայաստանյան համակարգող Տիգրան Գեւորգյանն առաջարկեց խմբի անդամներին առաջարկություններ ներկայացնել ԲԿԳ-Հայաստանի հաջորդ՝ 2014-2016թթ գործողությունների ծրագրի նախագծի համար: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը մի քանի տասնյակ առաջարկ ներկայացրեց, որոնք վերաբերվում էին ՏԻՄ, ՉԼՄ, Ոստիկանության, ԱԱԾ, Բանակի եւ այլ ոլորտներում կառավարման թափանցիկությանը, այս նպատակով՝ օրենքով սահմանված մի շարք նորմերի պարտադիր կատարմանը, ինչպես նաեւ՝ նոր օրենսդրության

մշակմանն ու ընդունմանը: Աշխատանքային խմբի նիստերից մեկի ժամանակ եւ ավելի ուշ ակումբ ուղարկված թվով 9 գերատեսչություններից եւ նախարարություններից ստացված պատասխաններով ըստ էության մերժվեցին ակումբի ներկայացրած առաջարկությունները, եւ մի քանի դեպքում հնարավոր քննարկումների առաջարկություններ եղան: Համանման կերպով մերժվեցին նաեւ ԹԻՀԿ ներկայացրած մի քանի առաջարկությունները:

Հայաստանը ավարտել է 2012-2013թթ ԲԿԳ գործողությունների ծրագրով իր ստանձնած պարտավորությունները: ԲԿԳ ղեկավար մարմինը անկախ գնահատողի՝ մրցույթով այդ պարտականությունն ստանձնած Արտակ Զյուրումյանի միջոցով մի քանի ամիս շարունակ ուսումնասիրեց եւ գնահատեց ԲԿԳ-Հայաստան-2012-2013 ծրագրի կատարման ընթացքը եւ որակը:

ԲԿԳ ղեկավար մարմինը ԲԿԳ-Հայաստանի նոր՝ 2014-2016թթ Գործողությունների ծրագրի ժամանակացույց սահմանեց, ըստ որի՝ մինչեւ 2014 թվականի ապրիլի ավարտը՝ վերջնաժամկետ էր սահմանվել գործողությունների ծրագրի առաջարկությունների համար, իսկ հունիսի 15-ը՝ գործողությունների ծրագրի հաստատման վերջնաժամկետ:

ՀՀ կառավարության փոփոխման պատճառով ԲԿԳ նոր գործողությունների ծրագրի վերջնաժամկետը հետաձգվեց մոտ մեկ ամսով, ծրագիրը հաստատվեց ՀՀ կառավարությունում հունիսի 31-ի նիստում N32 արձանագրային որոշմամբ:

Հաշվի առնելով այդ ծրագրի կարելիությունը հանրային միջոցների եւ կառավարման թափանցիկության, իշխանությունների հաշվետվողականության ապահովման համար, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը Զառնաթերփարթ Ինթերնեյշնլ-Հայաստան կազմակերպության աջակցությամբ եւ գործընկեր կազմակերպությունների հետ՝ նպատակահարմար գտավ հնարավոր շահագրգիռ հանրությանը համախմբել, իրազեկել, եւ միացյալ ջանքերով մշակել ու հանրությանը եւ աշխատանքային խմբին ու ԲԿԳ ղեկավար մարմնին ներկայացնել ԲԿԳ-Հայաստան 2014-2016 գործողությունների ծրագրի նախագծի առաջարկություններ եւ լրացումներ: Մշակվեց եւ ներկայացվեց թվով 24 առաջարկ: Այդ առաջարկություններից մի քանիսը ընդգրկվեցին գործողությունների նոր ծրագրում, սակայն մեծ մասը մերժվեց:

ՀՀ ԲԿԳ գործող աշխատանքային խումբը

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ

Առաջին աշխատանքային խումբը ստեղծվել էր ՀՀ վարչապետի՝ 29 Սեպտեմբեր 2012, 931-Ա որոշման համաձայն: Աշխատանքային խումբը փոփոխվել է համալրվել է ՀՀ վարչապետի 2014 թվի հուլիսի 15-ի 656-Ա որոշմամբ: Այժմ գործող աշխատանքային խմբի կազմը հետևյալն է:

Գ.Դումանյան, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար),

Ա.Խուդավերդյան, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

Ն.Դանիելյան, ՀՀ վարչապետի օգնական

Ա.Գիլոյան, ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ,

Ա.Բաղդասարյան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տնտեսական զարգացման քաղաքականության վարչության պետ,

Վ.Վարդանյան, ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության պետ,

Ա.Մելիկյան, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ,

Ն.Բալայան, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ,

Ա.Հակոբյան, ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի Ամերիկայի վարչության պետի պաշտոնակատար,

Ս.Մակյան, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական եւ միջնակարգ կրթության քաղաքականության մշակման եւ վերլուծության բաժնի պետ,

Վ.Ասատուրյան, ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության Միավորված ազգերի կազմակերպության բաժնի վարիչ,

Ս.Խարազյան, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության բժշկական ծառայությունների գնման եւ տեղեկատվական բաժնի պետ,

Ա.Ասատրյան, ՀՀ կառավարության աշխատակազմի հանրային կառավարման հարցերով խորհրդատու,

Ռ.Վարդանյան, ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ,

Լ.Շուշանյան, ՀՀ վարչապետի գլխավոր գործավար,

Լ.Դոյրոյան, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ծրագրերի իրականացման ղեկավար (համաձայնությամբ),

Վ.Հոկտանյան, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն (համաձայնությամբ),

Լ.Քարսեղյան, Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ (համաձայնությամբ),

Թ.Աբրահամյան, «Արազա» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ, Հանրային ցանցի համակարգող-քարտուղար (համաձայնությամբ),

Վ.Սարգսյան, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության ծրագրերի փորձագետ (համաձայնությամբ),

Յ.Հարությունյան, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),

Կ.Չաղոյան, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ):

Բ. ԲԿԳ-Հայաստան, գործողությունների առաջին ծրագիր. 2012-2013թթ
1. ԲԿԳ-Հայաստան գործողությունների առաջին ծրագիրը¹. 2012-2013

ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ Հայաստանի Հանրապետության Գործողությունների ծրագիր 2012-2013թթ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությանը միանալու որոշումն արտահայտում է Հայաստանի պատրաստակամությունն առավել թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովել հանրային ծառայություններ մատուցելիս: Օրենքի գերակայությունը և արդյունավետ կառավարման ամրապնդումը պետության առաջնայնությունն է, և վերջին տասնամյակի ընթացքում երկրի իշխանությունն այս ուղղությամբ մի շարք միջոցառումներ է իրականացրել: 2000 թ.-ին առաջին անգամ ուղենշվեցին պետության հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները: Դրանք ներառում են արդյունավետ և առողջ կադրային քաղաքականության որդեգրում, հանրային ծառայողներին սոցիալական և իրավական պաշտպանության պետական երաշխիքների տրամադրում, բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գույքի և եկամուտի հայտարարագրում, պետական գնումները կարգավորող իրավական նորմերի պարտադիր կատարում, գործարարության լիցենզավորման գործընթացներ և գործարարության պետական գրանցում, ինչպես նաև պայքար ստվերային տնտեսության և տնտեսության քրեականացման դեմ:

Մի շարք բնագավառներում, ինչպես օրինակ՝ հանրային կառավարում, հարկային համակարգ, բանկեր, իրականացված բարեփոխումները զգալի արդյունքներ տվեցին: Մասնավորապես, ընդունվեցին հակակոռուպցիոն ուղղվածության տասնյակ օրենսդրական ակտեր, ներդրվեցին հակակոռուպցիոն տարրեր պարունակող նոր ենթակառուցվածքներ: Մշտական ջանքեր են գործադրվել հանրային սպասարկման յուրահատուկ ոլորտների թափանցիկության ապահովման, հանրային կրթության ոլորտում հաշվետվողականության, քաղաքացիական հասարակության հետ համագործակցության խթանման և քաղաքացիների ներգրավման ակտիվացման համար:

Քաղաքացիական հասարակության համախմբման և ներքին քաղաքական մթնոլորտի բարելավման նպատակով 2008թ.-ի հուլիսին ստեղծվեց Հայաստանի Հանրային խորհուրդը, որը հասարակական հիմունքներով միավորում է քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ հայկական Սփյուռքի ներկայացուցիչներին: Խորհրդի կազմում գործում են 12 հանձնաժողովներ և բազմաթիվ ենթահանձնաժողովներ ու աշխատանքային խմբեր, որոնց նպատակն է հանրային ինչեղություն ունեցող խնդիրների, օրենքների և որոշումների վերաբերյալ անցկացնել խորհրդակցություններ և լսումներ, իրականացնել ՀՀ օրենքների և այլ նորմատիվ ակտերի փորձաքննություններ՝ ներգավելով քաղաքացիներին, հասարակական միավորումներին և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին:

Հայաստանը ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող մի շարք կարևոր պայմանագրեր, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագիրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

¹<http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/ogp-armenia-action-plan-2012-2013-Arm.pdf>

1. ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՄ

1.1 Հանրային կառավարման կառուցվածքային եւ ֆունկցիոնալ բարեփոխումներ

- Հանրային կառավարման մարմիններում քաղաքական եւ հայեցողական պաշտոնյաների եւ աշխատակազմի գործառույթների հստակ տարանջատում:
- Հանրային կառավարման մարմիններում ծառայությունների մատուցման, կանոնակարգման ու տեսչական գործառույթների հստակեցում:
- Ստեղծվել է հանրային ծառայության կառավարման արդյունավետ ինստիտուտ: Քաղաքային կառավարման բոլոր մարմիններում ներդրվել է կատարողականի վրա հիմնված վարձատրության, իրախուսման եւ խթանման միասնական համակարգ: Հանրային ծառայության ոլորտում վարձատրության մրցունակությունը բարելավելու նպատակով մշակվել է պետական եւ համայնքային ծառայողների վարձատրության ու արտոնությունների միջնաժամկետ եւ երկարաժամկետ քաղաքականություն՝ ներառյալ բժշկական ապահովագրության եւ սոցիալական արտոնությունների ներդրումը: Հայաստանի հանրային կառավարման համակարգում աստիճանաբար բարելավվել է ընդհանուր հաշվետվողականությունը՝ ներդնելով պահանջներ, որոնց համաձայն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները պարբերաբար (առնվազն տարին մեկ անգամ) հրապարակում են իրենց գործողությունների ծրագրերը եւ հաշվետվությունները: 2010թ.-ի դրությամբ, ըստ պահանջի բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների 50%-ը հրապարակել են իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, իսկ արդեն 2011թ.-ին՝ 80%-ը:
- Թեեւ գործող օրենսդրությունը որեւէ կերպ չի արգելում քաղաքացիների մասնակցությունը, ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում քաղաքացիական մասնակցությունը խթանելու, տեղական եւ տարածքային մակարդակում ժողովրդավարությունը ամրապնդելու ուղղությամբ: Այս նպատակով նախատեսվել է փոփոխություններ իրականացնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, քաղաքացիական մասնակցության (ներառյալ մասնակցային բյուջետավարման) մասով:

1.2 Էլեկտրոնային կառավարության ներդրում

- 2008թ.-ին ներդրվել է փաստաթղթերի շրջանառության Mulberry Էլեկտրոնային համակարգը, որին ներկայումս միացած է 35 պետական մարմին: Համակարգը ապահովում է փաստաթղթերի հոսքի արդյունավետ կառավարում, փաստաթղթերի եւ կից նյութերի Էլեկտրոնային տարբերակների կենտրոնացված պահպանում, փաստաթղթերի շրջանառության պատմության գրանցում ու վերահսկում փաստաթղթի շարժի բոլոր փուլերում, անհրաժեշտ փաստաթղթերի արագ որոնում, փաստաթղթերի հետ աշխատանքի միասնական ձեւի կիրառում, մի քանի ստորաբաժանումների միաժամանակյա աշխատանքի հնարավորություն եւ փաստաթղթերի կորստի բացառում:
- 2008թ.-ին կառավարությունը հիմնել է Էլեկտրոնային ստորագրություն տրամադրող կենտրոնը: Ներկայումս տրամադրված էլեկտրոնային 5 ստորագրությունների քանակը հասնում է 6500-ի, որից շուրջ 300-ը պատկանում է պետական պաշտոնյաներին:
- Գործարկվել է իրավաբանական անձանց պետական գրանցման Էլեկտրոնային համակարգը, որի ներդրմամբ քաղաքացիներին եւ կազմակերպություններին հնարավորություն է տրվել գրանցել իրենց բիզնեսը մեկ պատուհանի սկզբունքով եւ ժամանակի էական խնայողու-

թյամբ: Այն ներառում է հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրում եւ կազմակերպության գրանցում համացանցի միջոցով (www.e-register.am)՝ բոլոր այլ պետական մարմիններից ստացվող գրանցման համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու հնարավորություն:

- Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ներկայացման համակարգը հնարավորություն է տալիս գյուտերը եւ օգտակար մոդելները, ապրանքային նշանները եւ արդյունաբերական նմուշներն էլեկտրոնային եղանակով ներկայացնել մտավոր սեփականության գործակալություն:
- Յրապարակային ծանուցման համակարգը (www.azdarar.am) առցանց հնարավորություն է ընձեռում հրապարակել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիների կամ կազմակերպությունների հայտարարությունները:
- «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական էլեկտրոնային կառավարման եւ տեղեկության տրամադրման հանրային տեղեկատվական համակարգը առցանց տեղեկություն է տալիս դատարաններում քննվող գործերի մասին եւ տրամադրում մի շարք այլ ծառայություններ:
- Յարկային հաշվետվության ներկայացման էլեկտրոնային համակարգը պարզեցնում է հարկային հաշվետվության հանձնման գործընթացն ու ավտոմատացնում դրա լրացումն ու ստուգումը՝ խնայելով հարկատուների ռեսուրսներն ու ժամանակը, նվազեցնելով հարկատու-հարկային տեսուչ անմիջական շփումը:
- Էլեկտրոնային կառավարման համակարգի (ԷԿՀ) ներդրմամբ հեշտացել է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման գործընթացը: 2010թ.-ին աշխատանքներ են կատարվել «Յարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման ուղղությամբ եւ իրականացվել է համակարգի պիլոտային ծրագրի ներդրում ՀՀ ԿԱ ՊԵԿ բոլոր տարածքային տեսչություններում: Միաժամանակ, հաստատվել են 6 «Յարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ենթածրագրերի տեխնիկական առաջադրանքները, որոնք հնարավորություն են ընձեռել նախագծել եւ գործարկել ԷԿՀ մյուս ենթահամակարգերը, մասնավորապես՝ էլեկտրոնային հաշվարկ-հաշվետվությունների ստացում, էլեկտրոնային եղանակով անձնական հաշիվների քարտերի վարում, հատուկ հարկային հաշիվների խաչաձեւ ստուգում, փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառություն:

1.3 Յանրային հատվածում ներքին աուդիտի համակարգի կատարելագործում

- Յանրային ռեսուրսների կառավարման գործում թափանցիկությունը խթանելու նպատակով չափազանց կարեւոր է ամրապնդել ներքին աուդիտի համակարգը, որը Յանրային ներքին ֆինանսական վերահսկողության համակարգի (ՀՆՖՎ) երեք հիմնական տարրերից մեկն է: 2010 թ.-ի նոյեմբերի 11-ին Կառավարությունն ընդունել է ՀՆՖՎ ռազմավարությունը, որը սահմանում է Յայաստանում միասնական եւ արդիական հանրային ներքին ֆինանսական հսկողության համակարգի ներդրման համար անհրաժեշտ նախադրյալներն ու գործողությունները: Այնուհետ, 2010թ.-ի դեկտեմբերի 22-ին ընդունվեց ներքին աուդիտի մասին նոր օրենքը՝ բարելավելով գոյություն ունեցող համակարգը եւ համապատասխանեցնելով այն ԵՄ չափանիշներին: Առայժմ այն կիրառվել է միայն ֆինանսական աուդիտի ոլորտում, սակայն օրենքը նախատեսում է ներառել նաեւ կատարողականը, համապատասխանությունն ու համակարգի աուդիտը: 2011թ.-ի օգոստոսի 13-ին կառավարության որոշմամբ ընդունվել են ներքին աուդիտի պրոֆեսիոնալ մոտեցման չափորոշիչները, Էթիկայի կանոնները եւ իրականացման ժամանա-

կացույցը: Չափորոշիչների խորհրդատվական ընդունվել է 2011թ.-ի դեկտեմբերի 8-ի ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով:

1.4 Բարելավել պետական գնումների ընթացակարգերը եւ ապահովել դրանց թափանցիկությունը

- Պետական գնումների թափանցիկությունը, հաշվետվողականությունը եւ օրինականությունն ապահովելու համար բարելավվել է գնումների գոյություն ունեցող համակարգը եւ պետական գնումների մարմինների ինստիտուցիոնալ հնարավորությունները: Ընդունվել է պետական գնումների բարեփոխման մասին ռազմավարությունը, վերանայվել «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առետրային կազմակերպության կարգավիճակը, ինչպես նաեւ մշակվել են պետական մարմիններում գնումների հարցերով պատասխանատուների որակավորման չափորոշիչները:
- 2011թ.-ի հունվարի 1-ին ուժի մեջ մտավ «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը: Չգալի աշխատանք է տարվել գնումների մասին օրենսդրությունը ՄԱԿ-ի միջազգային առետրային իրավունքի հանձնաժողովի մոդելային օրենքի, Առետրի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) գնումների գլխավոր համաձայնագրի եւ Եվրոպական հանձնաժողովի պետական գնումների դիրեկտիվների հետ համապատասխանեցման ուղղությամբ: Բացի այդ, Առետրի միջազգային կազմակերպության պետական գնումների կոմիտեն ընդունել է որոշում, որով Հայաստանը հրավիրվում էր միանալ Պետական գնումների համաձայնագրին (ՊԳՀ): 2011թ.-ի օգոստոսի 16-ին ՀՀ կառավարությունը համաձայնագրին միանալու իր փաստաթուղթը հանձնեց ի պահ ԱՄԿ գլխավոր քարտուղարին: Համաձայն ՊԳՀ 26-րդ հոդվածի 2-րդ կետի, համաձայնագիրը Հայաստանի համար ուժի մեջ մտավ 2011թ.-ի սեպտեմբերի 15-ին: ՊԳՀ նպատակն է պետական գնումների համար ընդհանուր օրենսդրական դաշտ ապահովել կիրառելի օրենսդրական համապատասխանեցման միջոցով:
- «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը նաեւ ներկայացնում է որոշ էական փոփոխություններ: Առաջին պետական գնումների լիովին ապակենտրոնացված համակարգ՝ մոտ 3000 պայմանագրային կողմերով: Դերակատարություն ունեցող երեք կենտրոնական մարմիններն են Ֆինանսների նախարարությունը, որը պատասխանատու է գնումների կանոնակարգման, քաղաքականության եւ համակարգման համար, Գնումների աջակցման նորաստեղծ կենտրոնը, որը տրամադրում է ծառայություններ պայմանագրային կողմերին եւ Գնումների բողոքարկման վերանայման խորհուրդը, որը նախարարությունից անկախ բողոքարկման մարմին է հայտային գործընթացներին վերաբերող բողոքները քննարկելու գործառնություն:
- Ինչ վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգին, ապա այն մշակված է, փորձարկված եւ պատրաստ շահագործման: Էլեկտրոնային գնումների համակարգը 2012թ.-ի հունվարի 1-ից գործում է պետական հաստատություններում (www.armeps.am):

1.5 Բյուջեի պլանավորման, հաշվետվության եւ քաղաքականության ձեւավորման համակարգի բարելավում:

- Հայաստանն արդեն նախաձեռնել է բազմաթիվ բարեփոխումներ բյուջեի պլանավորման, կատարման եւ հաշվետվողականության ոլորտներում: 2003 թվականից սկսած Հայաստանը հաջողությամբ ներդրել է բյուջետավորման միջնաժամկետ համակարգեր եւ, ելնելով այդ հաջողված փորձից, նախաձեռնել է ծրագրի վրա հիմնված բյուջետավորման անցնելու բարեփոխումներ: Հայաստանը կխթանի այս բարեփոխումների ընթացքը, որպեսզի ծրագրային

բյուջետավորման բարեփոխումները վերաժվեն կայուն, համապարփակ եւ գործառնական համակարգի՝ հիմնված քաղաքականությունից բխող եւ կատարողականի ավելի մեծ հաշվետվողականություն ունեցող բյուջետավորման համակարգերի վրա: Հարկավոր է որոշակի անցումային շրջան: Այդպիսով կառավարության նպատակը կլինի ծրագրային բյուջետավորման լիարժեք ինստիտուցիոնալացումը (ներառյալ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները) մինչեւ 2014թ.-ի բյուջետային տարվա ավարտը:

2. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Թափանցիկության եւ հաշվետվողականության ապահովում

- 2010թ.-ից ներդրվեց առցանց համակարգ, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս հետեւել պետական մարմիններ ուղարկված գրությունների ընթացքին:
- 2010 թ.-ից գործում է «Ինտերակտիվ բյուջե» առցանց համակարգը, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս տեղեկանալ, թե ինչ նպատակով, ուղղությամբ եւ ինչպես են ծախսվում պետական բյուջեի գումարները:
- Առցանց համակարգում հասանելի են կառավարության եւ վարչապետի բոլոր որոշումները:
- Կառավարությունը քայլեր է ձեռնարկել պետական գնումների ոլորտում թափանցիկություն ապահովելու համար՝ ստեղծելով գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագիր: Այն քաղաքացիներին թույլ է տալիս ծանոթանալ գնումներին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությանը (օրենսդրություն, գնումների ծրագրեր, տենդերների ծանուցումներ, առաջարկների հայցեր, պայմանագիր կնքելու հայտարարություններ եւ այլն):
- Հանրության համար հասանելի է նաեւ պետական ոչ առետրային կազմակերպությունների կողմից իրականացվող բոլոր ծրագրերի, պայմանագրերի եւ ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը:
- Կոռուպցիայի դեմ պայքարը հռչակվել է ՀՀ կառավարության կարեւոր առաջնայություններից մեկը, ինչը դեռեւս 2003թ.-ին արտացոլվել է «Հակակառուպցիոն ռազմավարության» եւ 2003-2007թթ.-ի ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունների ծրագրում: Առաջնորդվելով մինչ այժմ արձանագրված արդյունքներով եւ հիմք ընդունելով ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը՝ Հայաստանի երկրորդ (2008թ.) Հակակառուպցիոն ռազմավարությունը որպես գլխավոր նպատակ սահմանեց կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոցների ընդգրկումը, հանրային կառավարման եւ տնտեսական գործունեության ոլորտներում աշխատանքային, վարչական եւ քաղաքական կառուպցիայի քրեականացումը եւ դրա նվազեցմանն ուղղված հանրային աջակցությունը: 2009-2012թթ.-ի գործողությունների ծրագիրն ընդունվել է, եւ այն իրականացնող իրավասու մարմինները պարտավորված են պարբերաբար հրապարակել առաջընթացի արդյունքները: Ռազմավարության իրականացման մոնիտորինգի գործընթացում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լայն ներգրավվածությունը երաշխավորված է: Իրավապահ մարմինների եւ քաղաքացիական հասարակության միջեւ արդյունավետ համագործակցությունը եւ պետության հակակոռուպցիոն գործողությունների թափանցիկությունը խթանելու եւ ավելացնելու համար որոշվել է պետության հակակոռուպցիոն մարմինների գործունեությունը լիովին հասանելի դարձնել հանրության համար: Այս նպատակով 2010-2011թթ.-ին հանրապետության 10 մարզերում եւ մայ-

րաքաղաքում քաղաքացիներին անվճար խորհրդակցություն մատուցող անանուն «թեժ գծերը» հիմնադրվեցին բոլոր հակակոռուպցիոն մարմիններում եւ հանրային ընդունելության վայրերում:

3. ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Բարելավել հանրային ծառայությունները

- Ներդրվել է էլեկտրոնային համակարգ (www.e-gov.am), որն էապես կրճատել է լիցենզիա կամ թույլտվություն ստանալու ժամկետը: Մինչեւ 2011թ. լիցենզավորման ենթակա գործողությունները կրճատվել են 169-ից 96-ի, որոնցից 12-ը լիցենզավորման պարզ ընթացակարգ են պահանջում, իսկ 2011թ.-ից հետո «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարված մի շարք փոփոխությունների արդյունքում լիցենզավորման ենթակա գործողությունները կրճատվել են 169-ից 97-ի, որոնցից 10-ը լիցենզավորման պարզ ընթացակարգ է պահանջում:
- Բարեփոխում ավտոմեքենաների տեխնիկական զննման իրականացման գործընթացում: 2011թ. ուժի մեջ մտած այս նորարարության նպատակն է 10 կոռուպցիայի վերացումը: Որպես արդյունք, քաղաքացիները ավտոմեքենայի տեխզննման կտրոնները ստանալու են միայն բանկերում համապատասխան վճարում անելուց հետո:
- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում երկրորդային գրանցման բարեփոխում: Եթե մինչեւ վերջերս իրավունքի յուրաքանչյուր պետական գրանցումից կամ միասնական տեղեկության տրամադրումից առաջ իրականացվում էր անշարժ գույքի տեղազննում (չափագրում), ապա 2011թ.-ի ապրիլից երկրորդային գրանցման ժամանակ գույքի տեղազննության ու չափագրման պարտադիր պահանջը հանվել է: 2011թ.-ի հունիսից վերացվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված անշարժ գույքի գործարքների (բացառությամբ միակողմ գործարքների) պարտադիր նոտարական վավերացման պահանջը, ու ներմուծվեց ստորագրության իսկության ճանաչմամբ գործարքի կնքման եղանակը:
- Հարկային համակարգում ծառայությունների որակի բարձրացման նպատակով գործարկվել է հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ու վճարողների սպասարկման օժանդակելուն ուղղված հեռախոսազանգերի ժամանակակից կենտրոնը (Call Center): Ինտերնետային կայքում պարբերաբար թարմացվում է հաճախ տրվող հարցերի ու պարզաբանումների շտեմարանը: Հարկային տեսչություններում, մաքսատներում, մաքսակետերում ու հարկ վճարողների սպասարկման կենտրոններում տեղադրվել են էլեկտրոնային տերմինալներ, որոնք հնարավորություն են տալիս հարկ վճարողներին կազմել ու ներկայացնել հաշվետվություններ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաեւ տեղեկանալ հարկային օրենսդրության փոփոխությունների մասին:
- Արտահիվանդանոցային բուժօգնություն ցուցաբերող բուժհաստատության (պոլիկլինիկայի) կողմից տեղեկանք տալու կանոնակարգում: 2011թ.-ի հունիսին ընդունված կառավարության որոշմամբ սոցիալական, կրթական, առողջապահական հաստատությունների դիմորդներից ու աշխատողներից կամ աշխատանքի ընդունվելու համար դիմած քաղաքացիներից այլուս չի պահանջվի ներկայացնել օրենսդրությամբ չնախատեսված տեղեկանքներ:
- Վարորդական վկայականների ստացման կարգի բարեփոխում: Վերացվել է ճանապարհային ոստիկանությանը պոլիկլինիկայից ու հոգեբուժարանից տեղեկանքներ ներկայացնելու պահանջը:

- Նոտարների կողմից մատուցվող ծառայությունների բարեփոխում: 2011թ.-ի մայիսի 26-ի «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների 11 սակագները հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի ապրիլի 25-ի N 919-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության թիվ 733-Ն որոշմամբ հաստատվեցին նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները: Նոր որոշմամբ մանրամասնորեն կարգավորվում է գործընթացը, եւ հնարավորինս հստակ թվարկվում են նոտարների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները: Մասնավորապես, վերացվում է «առանձնապես բարդ գործարքներ» հասկացությունը, որի համար ծառայության վճար էր նախատեսված նվազագույն աշխատավարձի 52-ապատիկի չափով: Սահմանվում է, որ նոտարի կողմից կատարվող վճարը ներառում է ոչ միայն բոլոր փաստաթղթերի ուսումնասիրումը, պարզաբանումը, այլեւ օրինակելի ձեւերի տրամադրումը: Սակագների հստակեցմամբ նոտարին դիմած անձանց համար կապահովվեն առավել բարենպաստ պայմաններ՝ սահմանափակելով նոտարների կողմից իրենց հայեցողությամբ որոշակի ծառայություններն առանձնապես բարդ համարելու եւ դրանց համար առավել բարձր սակագին սահմանելու հնարավորությունը: Սահմանվել է նաեւ նոտարների մոտ հաշվիչ դրամարկղային մեքենաների պարտադիր տեղադրման պահանջը:
- Դատական ակտերի հարկադիր կատարման համակարգում տեղ գտած մի շարք փոփոխությունների շնորհիվ ներդրվել է «Առցանց աճուրդ» համակարգը, որը հնարավորություն է տվել կատարել հարկադիր էլեկտրոնային աճուրդ, բացառելով պետական որեւէ մարմնի կամ որեւէ անձի օրենքով չնախատեսված միջամտությունն աճուրդի ընթացքին:
- Զաղաքացիական կացության ակտերի գրանցման գործընթացի բարեփոխումներ: Վերացվել է ամուսնության պետական գրանցման ոլորտում տարածքային պատկանելության սահմանափակումը՝ թույլ տալով մարզերի բնակիչներին ամուսնության պետական գրանցում իրականացնել Երեւանում: Կրճատվել են ամուսնության գրանցման ժամկետները, բացի այդ, օրենքով հստակեցվել են այն հանգամանքները, որոնց բերումով ամուսնության գրանցումը կարող է արագացվել (հղիություն, զինծառայություն եւ այլն):

ԲԿԳ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բաց կառավարում ստեղծելու Հայաստանի հանձնառությունը ներառում է պետական ռեսուրսների արդյունավետ կառավարման եւ հանրային օրինավորության մարտահրավերներ, որոնց արձագանքելու համար կիրառործվեն հետեւյալ նպատակները:

1. ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՄ

1.1. Էլեկտրոնային կառավարման միջոցով բաց կառավարության խթանում

- Միասնական վճարումների համակարգի ներկայացում (պորտալ). Պետական տուրքերի (լիցենզիաների, թույլտվությունների, ծառայությունների եւ այլն) միասնական վճարման համակարգի ներդրումը հնարավորություն կտա վճարում իրականացնել բանկային քարտով կամ տերմինալով: Այս համակարգի միջոցով վճարված գումարը դիտարկելի կլինի պետական մարմնի համար:
- Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ՝ մեքենաների գրանցման, վարորդական իրավունքի տրամադրման, տուգանքների եւ վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրումը:

րում. մեքենաների գրանցումը, վարորդական իրավունքի տրամադրումը, տուգանքների վճարումը կիրականացվի մեկ պատուհանի սկզբունքով, ինչպես նաև հաճախորդին նախապես տրամադրված, 12-նիշանի ծածկագրի միջոցով հնարավորություն կստեղծվի հետեւել գործարքի ընթացքին:

- Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար. հյուպատոսական ծառայությունները կիրականացվեն Էլեկտրոնային համակարգի միջոցով (անձնագրերի տրամադրում եւ փոխանակում, անձնագրի վավերականության ժամկետի երկարաձգում, տվյալների ստուգում, վերադարձի վկայականների տրամադրում եւ այլն):
- «Mail-Armenia» համակարգի ներդրում. առաջին անգամ անձնագիր ստանալու համար դիմած ՀՀ քաղաքացիներին կտրամադրվի անձնական Էլեկտրոնային հասցե: Պետության կողմից բոլոր կարգի ծանուցումները կներկայացվեն այդ հասցեով:
- «E-statistics» համակարգի ներդրում. պետական վիճակագրական ծառայությունը հաշվետվությունները իրականացնելու Է Էլեկտրոնային հաշվետվությունների համակարգի միջոցով:
- Քաղաքային համայնքներում Էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում. Հայաստանի Հանրապետության բոլոր 48 քաղաքային վարչական մարմինները կմիանան «Mulberry» Էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգին:

1.2. Կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում (Կարգավորման «Guillotine» ծրագիր)

- ՀՀ կառավարությունը գործի Է դրել լայն ոլորտների կարգավորման պարզեցման բարեփոխումների ծրագիրը՝ «կարգավորման guillotine» անվանմամբ: Հիմնվելով միջազգային լավագույն գործելակերպի վրա՝ բարեփոխման նպատակն Է վերացնել կամ պարզեցնել իրավական այն նորմերը, որոնք կարիքը չկա կամ որոնք չեն նպաստում բիզնեսի զարգացմանը: Այս շրջանակային ծրագիրը կհանգեցնի գործարար միջավայրի բարելավմանը առավել լայն հնարավորություններ ստեղծելով արտաքին ուղղակի ներդրումների համար եւ խթանելով տնտեսական զարգացումն ու աշխատատեղերի ստեղծումը: Ավելին, կառավարության քննարկման են ներկայացվել իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձին միավորների, հաստատությունների, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառմանը եւ մի շարք այլ խնդիրներին վերաբերող օրինագծեր, որոնք ուղղված են բարելավելու գործարար միջավայրը:

1.3. Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում

- Կառավարությունը կշարունակի աուդիտի համակարգի հզորացման աշխատանքները՝ պետական ռեսուրսների կառավարման թափանցիկության առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Կառավարությունը նախատեսում Է սկսել ներքին աուդիտի նոր համակարգի ներդրման իրականացումը 2012թ.-ի երկրորդ եռամսյակից: 2012թ.-ի ավարտին ներքին աուդիտի համակարգը պետք Է ներդրվի բոլոր հիմնական պետական կառույցներում, քաղաքային համայնքներում, առևտրային եւ պետական ոչ առևտրային կազմակերպություններում: Սա կպահանջի ռիսկի գնահատման արդյունավետ մեթոդների եւ ընթացակարգերի, ներքին աուդիտի մեթոդների եւ գործիքների ներդրում, որոնք կհամապատասխանեն միջազգային չափանիշներին եւ լավագույն գործելակերպերին, նաև կիրականացվեն համապատասխան աշխատակիցների ուսուցման ծրագրեր: Ներքին աուդիտի ոլորտի հետագա զարգացումները խթանելու համար կպահանջվի նաև ներքին աուդիտի որակավորման համակարգի ներդրում:

րում, ինչպես նաև ներքին 14 աուդիտորների շարունակական ուսուցման եւ զարգացման ծրագրերի իրականացում:

1.4. Գնումների ընթացակարգերի բարելավում

- Պետական գնումների թափանցիկությունը, հաշվետվողականությունը եւ օրինականությունն ապահովելու նպատակով կառավարությունն ստանձնել է գնումների առկա համակարգը բարելավելու եւ պետական գնումներով զբաղվող մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու աշխատանքները: Նախատեսվում է ներկայացնել հաշվետվական համակարգ, ըստ որի՝ իրավասու մարմինը պետք է հրապարակի կապալառուների կողմից իրականացված գնումների մասին առավել մանրամասն տեղեկատվություն: Բացի այդ, շահերի բախման ռիսկը նվազեցնելու եւ պետական գնումների ընթացակարգերին համապատասխանությունն ապահովելու նկատմամբ առավել խիստ վերահսկողություն իրականացնելու նպատակով նախատեսվում է մշակել գնումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց վարքի նորմեր: Մինչ այդ, կմշակվեն եւ կներկայացվեն շարունակական ուսուցման եւ վերապատրաստման ծրագրեր: Մինչեւ 2013թ.-ի ավարտը նախատեսվում է ամբողջությամբ իրականացել եւ ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի արդյունավետ կիրառումը՝ գործընթացի թափանցիկությունը եւ պետական գնումների ոլորտում մրցակցությունն ամրապնդելու նպատակով: www.gnumner.am եւ www.armeps.am պաշտոնական կայքերը կկատարելագործվեն, որպեսզի առավել արդյունավետ գործեն եւ տրամադրեն ամբողջական տեղեկատվություն գնումների ընթացակարգերի վերաբերյալ:

1.5. Բյուջեի պլանավորման եւ հաշվետվական համակարգերի բարելավում՝ ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով

- Որպեսզի ապահովվի բյուջեի վերաբերյալ որոշումների կայացումը ապացույցներով հիմնավորված քաղաքականության համաձայն, կառավարությունն ամբողջությամբ կներկայացնի ծրագրի բյուջետավորումը մինչեւ 2014թ.-ը: Բյուջեի կազմավորման բարելավումներին զուգընթաց, նոր համակարգերը կբարելավեն պետական միջոցների օգտագործման հաշվետվությունը եւ հաշվետվողականությունը՝ պետական մարմինների/նախարարությունների կատարողականների (այլ ոչ միայն ֆինանսական ծախսերի) մասին թափանցիկ հաշվետվությունների ներկայացման միջոցով: Այդ բարեփոխումները կնպաստեն նաև ներքին եւ արտաքին աուդիտի համակարգի բարելավմանը:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՂՈՒՄ

2.1. Տեղեկատվության մատչելիության խթանում

- Գույքի եւ եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում: Բարձրաստիճան պաշտոնյաների գույքի եւ եկամուտների հայտարարագրերը կհրապարակվեն հանրության համար հասանելի կերպով, ինչպես օրինակ Էթիկայի հանձնաժողովի նորաստեղծ պաշտոնական ինտերնետային կայքում: Էթիկայի հանձնաժողովը նաև կապահովի հայտարարագրերի բովանդակության վերլուծությունը եւ դրանց հրապարակայնությունը:
- Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում: Գործընթացն ուղղված է լինելու պետական ինտերնետային կայքերի միասնական կառուցվածքի, պետական կայքերում անհրաժեշտ տեղեկությունների հրապարակման եւ թիրախային խմբերի համար կայքերի արդյունավետ կիրառելիության ապահովմանը: Ստանդարտացման միասնա-

կան չափանիշները նաեւ կապահովեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը, ինչպես օրինակ բյուջեն, բյուջեի կատարման հաշվետվությունները, բյուջեի հետ կապված տվյալները համապատասխան ձեւաչափերով ներկայացնելը, որն առավել լայն հնարավորություն կտա համապարփակ վերլուծություն իրականացնել:

- Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների եւ հմտությունների բարելավում: Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով՝ քաղաքացիական եւ համայնքային ծառայողների համար պարբերաբար կկազմակերպվեն դասընթացներ: Այս դասընթացները հանրային ծառայողներին կօգնեն բաց եւ հաշվետու աշխատել հանրության հետ, ինչպես նաեւ պատշաճ կերպով մշակել եւ արձագանքել տեղեկատվություն ստանալու հարցումներին:

2.2. Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության եւ օբյեկտիվության խթանում

- Մինչեւ 2013թ.-ի ավարտը ծրագրված է հարկային վարչարարությունում բարեփոխել մասնագիտական եթիկայի կանոնները եւ պատասխանատվությունները, ներկայացնել հարկային վարչարարության ծառայությունների շրջանակներում մասնագիտական վարքագծի վերահսկողության եւ շահերի բախման կառավարման համակարգը: Նաեւ նախատեսված է ամբողջությամբ անցնել առցանց համակարգով գործընթացին, ինչը նշանակում է, որ հարկատուների առնվազն 90%-ի 16 հաշվետվությունները պետք է մշակվեն առցանց: Հասարակության իրազեկությունը բարձրացնելու եւ հաճախորդների սպասարկումը բարելավելու նպատակով կստեղծվի հաճախորդների սպասարկման եւ տեղեկատվության կենտրոն: Մինչեւ 2013թ.-ի ավարտը նախատեսված է ելակետային տվյալների համեմատ 15%-ով մեծացնել սպասարկման ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը: Հարկատուների համար համապատասխան ուղեցույցները հասանելի կլինեն առցանց եւ պարբերաբար կթարմացվեն:

2.3. Կոռուպցիայի դեմ պայքար

- Կոռուպցիայի եւ ինստիտուցիոնալիզացված կաշառակերության դեմ իրավապահ մարմինների եւ քաղաքացիական հասարակության միջեւ արդյունավետ համագործակցությունը խթանելու նպատակով, կառավարությունը կանոնավոր կերպով հասարակական կազմակերպությունների հետ կքննարկի կոռուպցիայի մակարդակի եւ ծավալների, ինչպես նաեւ մոնիտորինգային եւ հետազոտական ծրագրերի արդյունքները: Հիմնվելով այդ քննարկումների վրա՝ կառավարությունը կկատարի անհրաժեշտ ուղղումներ իր կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության ձեւակերպման եւ իրականացման մեջ:
- Կառավարության կառուցվածքում կստեղծվի ստորաբաժանում (Քարտուղարություն), որը կաշակցի Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին եւ նրան առընթեր Մոնիտորինգային հանձնաժողովին՝ արդյունավետ կերպով իրականացնելու իրենց գործառույթները: Քարտուղարությունը նաեւ կնպաստի պետական մարմինների եւ հասարակական կազմակերպությունների միջեւ համագործակցությանը:

2. ԲԿԳ-Հայաստան 2012-2013թթ գործողությունների ծրագրի ինքնագնահատականի գեկույց²:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«... Կառավարության ցանկացած ծրագիր կարող է ունենալ հաջողություն, եթե այդ ծրագիրը նախապես ներկայացվում է հանրությանը, դառնում քննարկման եւ քննադատության առարկա ...

- 1) Իշխանությունների ցանկացած գործողություն հասարակության կողմից ոչ միայն պետք է լինի վերահսկելի, այլև պետք է դրվի կասկածի տակ ...
- 2) Պետք է լինի թափանցիկություն բոլոր մակարդակներում, ինչպես նաև հասարակության ներգրավվածություն՝ որոշումների կայացման գործընթացում
- 3) Այս երկու կարելորագույն գոյաբանական խնդիրներն իրականացնելիս պարտավոր ենք, միեւնույն ժամանակ, ապահովել նաև պատասխանատվություն եւ պրոֆեսիոնալիզմ...»

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը ներկայացրեց վերոնշյալ երեք գոյաբանական թեզերը ուղղված քաղաքացիական հասարակության կայացմանը եւ բաց կառավարման ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնությանը 2011թ. սեպտեմբերին: Նախաձեռնությանը միանալով՝ Հայաստանի Հանրապետությունը եւս մեկ անգամ արտահայտեց իր պատրաստակամությունն ապահովելու առավել թափանցիկություն եւ հաշվետվողականություն հանրային կառավարման ոլորտում եւ հանրային ծառայություններ մատուցելիս: Արդյունավետ եւ հաշվետու կառավարման համակարգի ամրապնդումը պետության առաջնայնություններից է եւ գտնվում է Հայաստանի կառավարության մշտական ուշադրության կենտրոնում: ԲԿԳ եւս մեկ հնարավորություն է կառավարությունները դարձնել առավել բաց եւ պատասխանատու, ունենալ այնպիսի ինստիտուտներ, որոնք կնպաստեն քաղաքացու ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման եւ քաղաքականության մշակման գործընթացներում:

ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում բաց կառավարում ստեղծելու Հայաստանի հանձնառությունը համապատասխանում է առավել արդյունավետ, թափանցիկ եւ հաշվետու կառավարման համակարգ զարգացնելու իր նախորդ եւ ընթացիկ ջանքերին: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի իշխանություններն այս ուղղությամբ իրականացրել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ պետության հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները, որոնք ներառում են բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գույքի եւ եկամուտների հայտարարագրում, պետական գնումները կարգավորող իրավական նորմերի պարտադիր կատարում, պայքար ստվերային տնտեսության եւ տնտեսության քրեականացման դեմ, գործարարության լիցենզավորման գործընթացներ, գործարարության պետական գրանցում եւ այլն, ուղենշվեցին 2000թ.: Իրականացված բարեփոխումների արդյունքում մի շարք բնագավառներում զգալի արդյունքներ արձանագրվեցին:

Ավելին՝ Հայաստանն աշխարհի այն հինգ պետություններից է, որը պետական բյուջեի ծախսերն ամբողջությամբ դարձրել է թափանցիկ: 2010 թվականից գործում է «Ինտերակտիվ բյուջե» առցանց համակարգը (www.e-gov.am/interactive-budget): Համակարգը հնարավորություն է տալիս աշխարհի ցանկացած ծայրից ցանկացած պահի օնլայն տեղեկանալ, թե ինչ նպատակով, ուղղությամբ եւ ինչպես են ծախսվում պետական բյուջեի գումարները:

Քաղաքացիական հասարակության համախմբման նպատակով 2008թ. հուլիսին ստեղծվեց Հայաստանի Հանրային խորհուրդը, որը հասարակական հիմունքներով միավորում է քաղաքացիա-

² http://www.ogp.am/u_files/file/SELF%20ASSESSMENT%20REPORT-2013.pdf

կան հասարակությանը: Խորհրդի նպատակն է հանրային հնչեղություն ունեցող խնդիրների, օրենքների եւ որոշումների վերաբերյալ անցկացնել խորհրդակցություններ եւ լսումներ, իրականացնել ՀՀ օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի փորձաքննություններ՝ ներգրավելով քաղաքացիներին, հասարակական միավորումների եւ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին:

ԲԿԳ նախաձեռնությունում Հայաստանի ներգրավվածությունն ուշագրավ է, հատկապես, քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ: Վերջին տասնամյակում Հայաստանը, թերեւս, չի ունեցել խոշոր ծրագրերում քաղաքացիական հասարակության այնպիսի ծավալի ներգրավում, ինչպիսին Հայաստանն ականատես եղավ ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրի նախագծի նախապատրաստական աշխատանքների ընթացքում:

ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագիրը մշակելու նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ 2012թ. հունվարին (ՀՀ վարչապետի՝ թիվ 50-Ա առ 27/01/2012թ. որոշում) ստեղծվեց աշխատանքային խումբ: Հարկ է նկատել, որ գործողությունների ծրագրի մշակման գործընթացում աշխատանքային խմբում հավասարապես ընդգրկված են եղել ինչպես պետական գերատեսչությունների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Գործողությունների ծրագրի հիմնական դրույթներն առավելապես նպատակաուղղված են Հայաստանում հանրային կառավարման համակարգի արդյունավետության, թափանցիկության եւ հաշվետվողականության բարելավմանը: ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագիրը պաշտոնապես ներկայացվել է միջազգային հանրությանը 2012թ. ապրիլի 17-18-ին Բրազիլիայում կայացած «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության բարձր մակարդակի տարեկան համաժողովի ժամանակ:

ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրից բխող աշխատանքները ներկայումս համակարգում է համապատասխան աշխատանքային խումբը (ստեղծվել է ՀՀ վարչապետի թիվ 931-Ա առ 29/09/2012 թ. որոշմամբ) ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի գլխավորությամբ: Պետական գերատեսչություններից բացի, աշխատանքային խմբում ընդգրկված են նաեւ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, մասնավորապես՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, «Transparency International» հակակոռուպցիոն կենտրոնը, Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը:

Աշխատանքային խմբի նիստերի ժամանակ խմբի անդամները ներկայացնում են հաշվետվություններ ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրի իրենց առնչվող կետերի կատարման ընթացքի վերաբերյալ, առաջարկություններ եւ դիտարկումներ՝ ստանձնած պարտավորությունների իրականացման հետագա ընթացքը խթանելու, ԲԿԳ հերթական նիստերին նախապատրաստվելու նպատակով եւ այլն: Աշխատանքային խումբը նաեւ լավ հնարավորություն է տալիս բացահայտելու պետական կառավարման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության եւ ներգրավվածության հետ կապված խնդիրները, քննարկելու եւ փորձելու գտնել համապատասխան լուծումներ դրանց հաղթահարման ուղղությամբ, ինչպես նաեւ ակտիվացնելու քաղաքացիական հասարակության հետ հետագա համագործակցությունը: Այն նաեւ բավական արդյունավետ գործիք է քննարկելու խմբում ընդգրկված շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքականության առաջնահերթությունները եւ նպատակները ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում, ինչպես նաեւ մշակելու այն հնարավորությունները, թե ինչպես կարող է ԲԿԳ պարտավորությունների իրականացման գործընթացը լինել արդյունավետ հարթակ այդ նպատակները խթանելու համար:

II. ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ/ՅԱՅԱՍԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔ

ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում Յայաստանի Յանրապետությունն իր գործողությունների ծրագրով ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց հիմնական դրույթներն առավելապես նպատակաուղղված են Յայաստանում հանրային կառավարման համակարգի արդյունավետության, թափանցիկության եւ հաշվետվողականության բարելավմանը, մասնավորապես՝ հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը, էլեկտրոնային կառավարման զարգացմանը, ներքին աուդիտի համակարգի կատարելագործմանը, պետական գնումների գործընթացի կատարելագործմանը եւ թափանցիկության ապահովմանը, հանրային ծառայությունների որակի բարելավմանը, տեղեկատվության ազատության զարգացմանը, հարկային վարչարարության թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին եւ այլն:

ԲԿԳ/Յայաստան գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունները կարելի է բաժանել հետեւյալ խմբերի.

1. Պարտավորություններ, որոնք արդեն իսկ կատարվել են եւ այսօր հաջողությամբ կիրառվում են,
2. Պարտավորություններ, որոնք գտնվում են իրականացման փուլում, եւ որոնց ավարտը նախատեսված է մինչեւ տարեվերջ,
3. Պարտավորություններ, որոնք ենթադրում են շարունակական աշխատանքներ կոնկրետ ոլորտների բարելավման եւ կատարելագործման ուղղությամբ:

1. Կատարված պարտավորություններ

- **Միասնական վճարումների համակարգի ներկայացում (պորտալ)**

E-payments համակարգը գործում է շուրջ մեկ տարի: Համակարգը հնարավորություն է ընձեռում բոլոր պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կատարել էլեկտրոնային եղանակով: Մինչ օրս համակարգից մոտավորապես 4,000 օգտվող է եղել:

Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի պաշտոնական կայքէջն է www.e-payments.am:

Վճարումների պետական էլեկտրոնային համակարգը ներդրվել է գործարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ (ՀՀ կառավարության թիվ 496-Ն առ 19-ը ապրիլի, 2012թ.):

Պարտավորությունը կատարված եւ ավարտված է:

- **Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ մեքենաների գրանցման, վարորդական իրավունքի տրամադրման, տուգանքների եւ վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրում**

Ստեղծվել է մեկ միասնական կենտրոն, որտեղ կենտրոնացված են պետավտոտեսչության կողմից իրականացվող բոլոր գործառնություններն ու մատուցվող ծառայությունները: Կենտրոնը հնարավորություն է ընձեռում իրականացնելու այնպիսի գործարքներ, ինչպիսիք են մեքենայի գրանցում, վարորդական իրավունքի տրամադրում, տեխնիկական անձնագրի ձեռքբերում, աքցուվաճառք եւ այլն:

Պարտավորությունը կատարված եւ ավարտված է:

● **Կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում (Կարգավորման «Guillotine» ծրագիր)**

Ծրագիրն ուղղված է ավելորդ կարգավորումների կրճատմանը, գործարար միջավայրի բարելավմանը եւ հնարավոր ներդրումների ներգրավմանը:

2012թ. մայիսից գործարկվել է «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ՀՀ կառավարության թիվ 1462-Ն առ 13-ը հոկտեմբերի, 2011թ.), որի առջեւ բարեփոխումների խորհրդի կողմից դրվել է հանրային ծառայությունների, տրանսպորտի եւ առողջապահության ոլորտների ուսումնասիրությունը եւ համապատասխան իրավական ակտերի նախագծումը: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի պաշտոնական կայքէջն է՝ www.regulations.am:

Հանրային ծառայությունների ոլորտի մասին օրենքների փաթեթը (վերաբերում է էներգետիկայի եւ հեռահաղորդակցության բնագավառներին) ԱԺ-ում անցել է երկու ընթերցում: Բարելավվում են, հիմնականում, հոսանքի միացման աշխատանքները քաղաքացիների կամ բիզնեսի կողմից, կարգավորվում է փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզավորման գործընթացը: Հեռահաղորդակցության ոլորտում կրճատվում է երկու տեսակի լիցենզիա, փոխարենը դրվում է ծանուցման մեխանիզմ: Կապի բնագավառում ներմուծվում է «number portability» գաղափարը. այսինքն՝ լինելով մի օպերատորի սպասարկման դաշտում, հնարավոր է կամավոր կերպով փոխել օպերատորին՝ առանց փոխելու հեռախոսահամարը:

Էապես պարզեցվել են տաքսի ծառայությունների հիմնման եւ գործունեության հետ կապված գործընթացները՝ կրճատվել են մի շարք տեղեկանքներ եւ քայլեր, որոնք մինչ այդ տաքսի ծառայությունը պարտավոր էր իրականացնել լիցենզիա ստանալու եւ գործունեություն ծավալելու համար: Փոփոխություններ են կատարվել նաեւ բեռնափոխադրումների ոլորտում:

Առողջապահության ոլորտի նախագծերը դեռեւս քննարկման փուլում են: Դրանք, հիմնականում, վերաբերում են դեղատնային գործունեությանը, ինչպես նաեւ դեղերի գրանցման ընթացակարգին: Քննարկվող ոլորտում ՀՀ կառավարության կողմից զուգահեռաբար իրականացվում են նաեւ առավել խորքային բարեփոխումներ:

Ներկայումս հիմնարկի առջեւ դրված են հողային օրենսդրության բարեփոխումները, համապատասխան աշխատանքները կմեկնարկեն նաեւ հարկային եւ մաքսային ոլորտներում:

Պարտավորությունը կատարված եւ ավարտված է:

● **Գույքի եւ եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ստեղծվել է 2012 թվի հունվարի 9-ին, «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Բարձրաստիճան պաշտոնատար էթիկայի հանձնաժողովի անդամները նշանակվել են ՀՀ Նախագահի՝ 2012թ. հունվարի 9-ի հրամանագրով:

Այժմ արդեն բոլոր հայտարարագրերը հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (www.ethics.am)՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հայտարարագրման ենթակա տվյալների ցանկի:

Հայտարարագրերի վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակումները (ավելի քան 35 առանձին հոդվածներ), ավաղ, եղել են ճանաչողական բնույթի, որոնցում բացակայել է մասնագիտական մոտեցումը: Հանձնաժողովին ուղղվել է նաեւ ավելի քան 20 դիմում կապված բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված գործողությունների հետ: Դրանցից երկուսի վե-

րաբերյալ հարուցվել է վարույթ, որն ընթացքի մեջ է, իսկ մյուսներին տրվել են պատշաճ պատասխաններ:

Հայտարարագրերի վերլուծության արդյունքում բացահայտվել է 25 անհամապատասխանություն, որոնց հիմնական պատճառները հայտարարագիրը ուղեցույցի պահանջներին չլրացնելն է կամ հայտարարագիր լրացնելու կանոններ չիմանալը:

Ներկայումս Համաշխարհային բանկի հետ համապատասխան ծրագրի շրջանակներում աշխատանքներ են տարվում հայտարարագրման ողջ համակարգի էլեկտրոնայնացման ուղղությամբ: Ծրագրի նպատակն է ապահովել հայտարարագրված տվյալների հավաստիությունը, ինչպես նաև հեշտացնել հայտարարագրերի՝ կայքում տեղադրելու գործընթացը:

Պարտավորությունը կատարված է ավարտված է:

2. Իրականացման փուլում գտնվող պարտավորություններ

● «Mail-Armenia» համակարգի ներդրում

2013թ. մարտի 19-ին ընդունվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Օրենքով նախատեսվում է մեկ էլեկտրոնային հասցե, որտեղ բոլոր քաղաքացիները կստանան պետական բոլոր ծանուցումները:

2013թ. հունիսի 25-ին «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում են փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ուղարկվել է ՀՀ ԱԺ: Համաձայն նշված նախագծի 2-րդ հոդվածի՝ օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է անհատական ծանուցում, անձը համարվում է պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, երբ տեղեկատվությունն ուղարկվել է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և առկա է այն կարգալու մասին էլեկտրոնային հավաստում: Եթե համապատասխան ծանուցագիր ուղարկված անձը կամ մարմինը մեկշաբաթյա ժամկետում չի ստանում կարգալու մասին էլեկտրոնային հավաստումը, սակայն առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, ապա ծանուցագիրն ուղարկվում է ևս մեկ անգամ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով՝ նույն ծանուցագիրը միաժամանակ հրապարակելով Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Ծանուցագիրն ևս մեկ անգամ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելուց հետո՝ յոթերորդ օրը՝ անձը համարվում է պատշաճ ծանուցված:

Նախատեսված է պարտավորությունը կատարել և ավարտել մինչև այս տարվա վերջ:

● «E-statistics» համակարգի ներդրում

Համակարգի միջոցով պետական վիճակագրական ծառայությունը հաշվետվությունները կարող է ներկայացնել օնլայն տարբերակով:

Պարտավորության կատարմանն ուղղված աշխատանքներն արդեն մեկնարկել են. ներկայումս իրականացվում են գույքագրման աշխատանքներ, վերանայվում են վիճակագրական ծառայության հաշվետվությունների բոլոր ձևերը, վեր են հանվում առկա հնարավոր կրկնությունները, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվում այդ կրկնությունները բացառելու ուղղությամբ: Գույքագրման փուլին հաջորդելու է ծրագրի նախագծման աշխատանքների մեկնարկը:

Ծրագրի ավարտը նախատեսված է մինչև տարեվերջ:

● **Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար**

2012թ. հոկտեմբերից ՀՀ ԱԳՆ համակարգում ներդրվել է «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգ: Համակարգն ապահովում է Էլեկտրոնային կապ արտաքին գործերի նախարարության եւ դեսպանությունների միջեւ, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս քաղաքացիներին մատուցվող մի շարք ծառայություններ իրականացնել առավել օպերատիվ կերպով: Համակարգի միջոցով իրականացվում է ՀՀ քաղաքացու անձնագրի ընդհանուր եւ օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի երկարաձգում, ՀՀ վերադարձի վկայականի տրամադրում: Սույն գործընթացն էապես նվազեցրել է ծառայությունների մատուցման ժամկետները: Առաջիկայում նախատեսվում է ընդլայնել այս համակարգի միջոցով իրականացվող հյուպատոսական ծառայությունների ցանկը:

Այս պահի դրությամբ համակարգը ներդրված է 45 հյուպատոսական կետերից 24-ում:

Վերոնշյալ համակարգի հիման վրա ավելացվելու է նաեւ հյուպատոսական հաշվառման բաղադրիչը, որը ենթադրում է ինստիտուցիոնալ փոփոխություն. մինչ օրս վեց ամսից ավելի արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիները պարտավոր էին այդ մասին տեղեկացնել դիվանագիտական մարմիններին: Այժմ մոտեցումը փոխվում է. պարտադիր պահանջը վերածվում է կամավորության սկզբունքի, իսկ հաշվառման կանգնելը հնարավոր կլինի իրականացնել Էլեկտրոնային կայքի միջոցով: Հարցի առնչությամբ օրենսդրական փոփոխությունների փաթեթն ուղարկվել է ՀՀ կառավարություն, որից հետո ՀՀ կառավարության որոշմամբ կմեկնարկի համապատասխան ընթացակարգերի մշակման փուլը (նախատեսվում է փոփոխություններ կատարել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում, «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքում, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքում, որով նախատեսվում էր տուգանք վեց ամսից ավել արտասահմանում գտնվելու մասին դիվանագիտական մարմիններին չհայտնելու համար, ինչպես նաեւ ՀՀ մաքսային օրենսգրքում: Փոփոխությունների համաձայն՝ հաշվառումն այսուհետ ունի գրոյական դրույքաչափ):

● **Քաղաքային համայնքներում Էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում**

ՀՀ 48 քաղաքապետարաններից 45-ում իրականացվել են Էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման անհրաժեշտ աշխատանքներ, եւ հնարավորություն է ստեղծվել Էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակել պետական մարմիններում շահագործվող «Mulberry» Էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի հետ:

Նմանատիպ աշխատանքներ իրականացվել են նաեւ թվով 179 գյուղական, որոնցից 34-ը խոշոր (5000-ից ավելի բնակիչ ունեցող) համայնքներում: Ընդ որում, թվով 108 գյուղական համայնքներում աշխատանքներն իրականացվել են 2013թ. ընթացքում:

Թվով 81 համայնքներ ունեն համացանցային կայք-էջեր:

Համայնքապետարանները փաստաթղթաշարժը իրականացնում են իրենց կողմից շահագործվող համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) միջոցով, որն, ի թիվս այլ ենթահամակարգերի, ունի նաեւ փաստաթղթաշարժի բաղադրիչ:

Ընդհանուր առմամբ՝ ՀԿՏՀ-ն տեղադրված է մոտ 440 համայնքներում եւ աշխատանքներ են իրականացվում այն շահագործող բոլոր համայնքներում նույնպես Էլ-փաստաթղթաշրջանառություններդնելու ուղղությամբ:

Աշխատանքները դեռեւս չեն ավարտվել Ախթալայի, Շամլուղի եւ Դաստակերտի քաղաքապետա-

րաններում:

Պարտավորության կատարման ավարտը նախատեսված է մինչև տարեվերջ:

● **Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում**

ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը եւ գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման 1-ին հավելվածի 54-րդ կետի համաձայն՝ 2011թ. ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունը՝ մի շարք հասարակական կազմակերպությունների աջակցությամբ, մշակել է ՀՀ կառավարության «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» որոշման նախագիծը: Նախագիծը քննարկվել է հանրապետական գործադիր մարմինների, ինչպես նաեւ տեխնիկական մասնագետների հետ, որոնց կողմից բարձրացված հարցադրումները հաշվի են առնված քննարկող նախագծում: Ներկայումս որոշման նախագծի լրամշակված տարբերակը, ֆինանսական տեղեկանքի հետ միասին, ներկայացված է ՀՀ կառավարության քննարկմանը:

3. Շարունակական աշխատանքներ ենթադրող պարտավորություններ

- Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության եւ օբյեկտիվության խթանում

2013թ. երկրորդ եռամսյակում էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնողների թվաքանակը կազմել է 43,4 հազ. տնտեսվարող սուբյեկտ, որոնք կազմում են հաշվետվություններ ներկայացնողների 46.0 տոկոսը: Վերջիններիս կողմից 2-րդ եռամսյակում ներկայացված էլեկտրոնային հաշվետվությունների տեսակարար կշիռը բոլոր հարկային հաշվետվությունների թվում կազմել են 71.4 տոկոս (1-ին եռամսյակի 46,6%-ի համեմատ): Նույն ժամանակահատվածում էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտների հարկային մուտքերը կազմել են 142,8 մլրդ դրամ, կամ հարկային մուտքերի ընդհանուր գումարի 95,6 տոկոսը (նախորդ եռամսյակի՝ 94.2%-ի համեմատ):

Երկրորդ եռամսյակում էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ դուրս գրողների թվաքանակը կազմել է 5.4 հազ. տնտեսվարող սուբյեկտ, որոնք կազմում են հարկային հաշիվներ դուրս գրողների ընդհանուր թվաքանակի 87,4%:

ՊԵԿ շարունակում է ձեռնարկել քայլեր իր էլեկտրոնային ծառայությունների տեսակների եւ կիրառության ընդլայնման ուղղությամբ:

Տարվա ընթացքում կատարելագործվել է հարկ վճարողների եռաստիճան ծանուցման համակարգը: Ներդրվել են հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկման սխեմաներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ներկայումս գործում են հարկ վճարողների սպասարկման 14 սրահներ (այդ թվում՝ 9-ը Երեւանում եւ 5-ը՝ մարզերում): Բոլոր մարզերում հարկ վճարողների սպասարկման սրահներ գործարկելու նպատակով ՊԵԿ կողմից միջոցներ են ձեռնարկվում՝ սրահների գործարկման համար անհրաժեշտ ֆինանսավորում հայթայթելու նպատակով:

Հարկ վճարողների սպասարկման ծառայությունները տնտեսվարող սուբյեկտներին առավել հասանելի դարձնելու նպատակով, 2013թ. հուլիսի 18-ին ՊԵԿ-ը համագործակցության պայմանագիր է կնքել Հայաստանի ազգային փոստային օպերատոր «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ՝ վերջինիս փոստային բաժանմունքներում հարկ վճարողների կետերի գործարկման ծրագրի իրագործման նպատակով: Ակնկալվում է, որ սպասարկման կետերը մատուցելու են դիմողներին առավել պահանջված սպասարկման ծառայությունները, որը հատկապես կարելու է այն բնակավայրերի եւ տարածք-

ների տնտեսվարող սուբյեկտների համար, որտեղ չկան հարկ վճարողների սպասարկման կենտրոններ:

Հարկ վճարողների զանգվածային իրազեկման նպատակով, ՊԵԿ-ը 2013թ.-ից մեկնարկել է «TAX ինֆո» հեռուստահաղորդաշար «Արմնյուզ» հեռուստաընկերության եթերում, որն ուղղված է ներկայացնելու հանրությանը հարկային եւ մաքսային օրենսդրական ու վարչարարական նորություններ եւ հրատապ տեղեկատվություն: Միջինում 15-րոպեանոց տեղողությամբ հեռուստանախագիծը հեռարձակվում է շաբաթական պարբերությամբ, 2 կրկնություններով:

Եռամսյա պարբերականությամբ լույս են տեսնում ՊԵԿ «Մաքսատուն» եւ «Հարկատուն» ամսագրերը, որտեղ ոչ միայն ներկայացվում են գերատեսչության իրականացրած աշխատանքներն, այլև՝ հարկատուներն իրենք են անդրադարձ կատարում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախաձեռնած նորամուծություններին, հարկային ու մաքսային ընթացակարգերի պարզեցմանը:

Միաժամանակ, տարեսկզբից ՊԵԿ կողմից հարկ վճարողների համար պատրաստվել է հրապարակվել են մի շարք ուղեցույցներ, որոնք հասանելի են նաեւ էլեկտրոնային եղանակով, ՊԵԿ պաշտոնական կայքում: Այդ թվում.

- «Ինչ է պետք իմանալ եկամտային հարկի մասին» ուղեցույցը,
- «Ինչ է անհրաժեշտ իմանալ շրջանառության հարկի մասին» ուղեցույցը,
- «Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի՝ վարձու աշխատողների գրանցումը (գրանցման հայտը ներկայացնելը) ապահովող մոդուլի օգտվողի ձեռնարկը»,
- «Հսկիչ-դրամարկղային մեքենա օգտագործողի ուղեցույցը»,
- ««Օրինապահ հարկ վճարող» համակարգում գրանցվելու ուղեցույցը»,
- «IT BOOK» ձեռնարկը:

Օրենսդրական փոփոխություններին տնտեսվարող սուբյեկտներին ծանոթացնելու եւ այն ավելի ընկալելի դարձնելու նպատակով տարեսկզբից «Երկիր մեդիա» եւ «Հ2» հեռուստաընկերությունների եթերով հեռարձակվող համապատասխանաբար «Կապիտալ» եւ «Հրատապ ռեպորտաժ» հեռուստահաղորդումների միջոցով կազմակերպվել է մանրամասն լուսաբանում, ինչը հնարավորություն է ընձեռել գործարարներին հանգամանալի ծանոթանալ ներդրված օրենսդրական փոփոխություններին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության հիմնական ուղղություններին:

Հանրապետության ողջ տարածքում, տարբեր հարկ վճարողների համար հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ «Հարկային օրենսդրության եւ վարչարարության նորություններ» թեմայով, որոնց միջին գնահատականներով մասնակցել են ավելի քան 10 000 հարկ վճարող: Իրազեկման հանդիպումներ են անցկացվել նաեւ մի շարք պետական մարմինների, մասնագիտական հասարակական կազմակերպությունների անդամների համար, այդ թվում՝ ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, Հայաստանի բանկերի միության, եւ այլն:

2013թ-ին շարունակում է աճել ՊԵԿ հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի կողմից սպասարկվող դիմումների քանակը: 2013թ. 1-ին կիսամյակի ընթացքում հեռախոսազանգերի կենտրոնում ստացվել է կատարվել են 82001 դիմումներ, որից 81390-ը հեռախոսային կապով, 611-ը էլեկտրոնային եղանակով: Դիմումների բացարձակ մեծամասնությունը եղել է հարցադիմումներ՝

հարկային, մաքսային օրենսդրության եւ վարչարարության վերաբերյալ: Հեռախոսագանգերի կենտրոնում եւ հարկ վճարողների սպասարկման կենտրոններում ստացված հարցերից 132 առավել հաճախ հանդիպող հարցերն ու պատասխանները ամփոփվել են եւ տեղադրվել են հարկային մարմնի պաշտոնական կայքում:

ՊԵԿ-ում շարունակվել են աշխատանքները գանգատարկման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: 2013թ. 1-ին կիսամյակի ընթացքում հարկային եւ մաքսային միջգերատեսչական գանգատարկման հանձնաժողովի կողմից քննության է առնվել 90 բողոք, որից բավարարվել է 39-ը, մասնակի բավարարվել՝ 10-ը, մերժվել՝ 29-ը, կարճվել՝ 9-ը, եւ կասեցվել՝ 3-ը:

● **Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում**

Հանրային ռեսուրսների կառավարման գործում թափանցիկությունը խթանելու նպատակով չափազանց կարեւոր է ամրապնդել ներքին աուդիտի համակարգը, որը Պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի (ՊՆՖՀ) երեք հիմնական տարրերից մեկն է: 2010թ. նոյեմբերի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատել է ՊՆՖՀ ռազմավարությունը, որը սահմանում է Հայաստանում միասնական եւ արդիական պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի ներդրման համար անհրաժեշտ նախադրյալներն ու գործողությունները: Այնուհետեւ, 2010թ. դեկտեմբերի 22-ին, ընդունվեց «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը՝ բարելավելով գոյություն ունեցող համակարգը եւ համապատասխանեցնելով ԵՄ չափանիշներին: Մինչ այդ այն կիրառվել է միայն ֆինանսական աուդիտի ոլորտում, սակայն օրենքը նախատեսում է ներառել նաեւ կատարողականի, համապատասխանության ու համակարգի աուդիտ: 2011թ. օգոստոսի 13-ին ՀՀ կառավարության թիվ 1233-Ն որոշմամբ ընդունվել են ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտները, ներքին աուդիտորի էթիկայի կանոնները եւ ներքին աուդիտի ներդրման ժամանակացույցը: Ստանդարտների կիրառման ցուցումները հաստատվել են 2011թ. դեկտեմբերի 8-ի ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 974-Ն հրամանով:

2012 թվականի ընթացքում շարունակվել են ներքին աուդիտի համակարգի ներդրման եւ հզորացման աշխատանքները, մասնավորապես.

ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատվել են «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների եւ ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները», որոնք սահմանում են հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի կազմակերպման, իրականացման եւ գնահատման բոլոր ընթացակարգերը՝ միջազգային չափանիշներին եւ լավագույն գործելակերպերին համապատասխան:

2012թ. փետրվարի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 165-Ն հրամանով հաստատվել են նաեւ «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը եւ ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները», որոնցով սահմանվել են ստորաբաժանման ստեղծմանը, հաստիքների նվազագույն քանակին, մասնագիտական փորձին եւ ներքին աուդիտի կոմիտեին ներակայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված «Ներքին աուդիտի համակարգի ներդրման ժամանակացույցի» համաձայն՝ 2012թ. ապրիլի 1-ից սկսած ներքին աուդիտի համակարգը ներդրվել է 52 պետական կառավարման մարմիններում եւ Երեւանի քաղաքապետարանում: 2013թ. հունվարի 1-ից 48 քաղաքային համայնքներից 44-ում ստեղծվել են ներքին աուդիտի ստորաբաժանումներ:

2012թ. ընթացքում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջն ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել են «Հանրային

հատվածի ներքին աուդիտ» թեմայով վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են պետական կառավարման մարմինների եւ Երեւանի քաղաքապետարանի ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 160 աշխատակիցներ, որոնցից ներքին աուդիտորի որակավորում են ստացել 155-ը: Քաղաքային համայնքներից Նշված դասընթացներին մասնակցել են ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 50 աշխատակիցներ, որոնցից ներքին աուդիտորի որակավորում են ստացել 40-ը:

Մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել «Ներքին աուդիտորի որակավորման քննությունների կազմակերպման կարգը եւ ներքին աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող հիմնական պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 8-ի N 896 որոշմամբ հաստատվել է «Կազմակերպությունների ներքին աուդիտի որակի երաշխավորման եւ բարելավման նպատակով կազմակերպության գործունեության հետ չառնչվող անձանց կողմից կազմակերպության ներքին աուդիտի համակարգի գնահատումների իրականացման, ինչպես նաեւ եւ ստուգում իրականացնող մարմինների եւ արտաքին աուդիտի մարմնի հետ ներքին աուդիտի համագործակցության» կարգերը:

● **Գնումների ընթացակարգերի բարելավում**

2012թ. հունվարի 1-ից գործարկվել է Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային գնումների համակարգը, որի արդյունքում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից բաց ընթացակարգով իրականացվող գնումների գործընթացները կազմակերպվում են էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am կայքի միջոցով: Մասնավորապես, 2013թ. ՀՀ պետական մարմինների կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպվել են շուրջ 120 գնման գործընթացներ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է նաեւ էլ. գնումների համակարգի գործարկման մշտադիտարկում եւ պատվիրատուներին ու գնումների մասնակիցներին տրամադրվել է անհրաժեշտ մեթոդական օժանդակություն: Ներկայումս աշխատանքներ են տարվում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումները էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am կայքի միջոցով իրականացնելու ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1169-Ն հրամանով հաստատվել է «Գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության եւ էլեկտրոնային տեղեկատուի վարման կարգը (ներառյալ հաշվետվության ձևեր)», որով նախատեսվում է պատվիրատուների կողմից նախագծով հաստատվող ձեւաչափով գնման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում գնումների աջակցման կենտրոնին: Վերջինս այդ տեղեկատվության հիման վրա իրականացնում է վերլուծություններ ըստ գնումների արժեքային եւ(կամ) քանակական բնութագրիչների եւ դրանց տարբեր համակցությամբ:

Պետական պատվիրատուների կողմից գանձապետական համակարգում գնումների վերաբերյալ տեղեկատվության ամբողջական գրանցումն ապահովելու նպատակով «CLIENT-TRESUARY»-«LSFinance» (ԳԳՕ) համակարգերում մշակվել են 2012թ. դեկտեմբերի 1-ից ներդրվել է նոր ծրագրային փաթեթ, որով պետական պատվիրատուները պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հաշվետվությունը համակարգ մուտքագրում են ինքնուրույն: Այդ տեղեկատվության հետ մեկտեղ համակարգ է մուտքագրվում նաեւ գնման պայմանագիրը: Առաջին անգամ ստեղծվել է գնման պայմանագրերի ավտոմատ հաշվառման էլեկտրոնային շտեմարան: Նշված համակարգը հնարավորություն է տալիս նաեւ բացառել պետական կառավարման մարմինների կողմից թե՛ ձեւական եւ թե՛ բովանդակային առումներով տարբերվող տեղեկատվության ներկայացումը ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գնումների էլեկտրոնային տեղեկատվում հրապարակված շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա իրականացվել են վերլուծություններ եւ կազմվել ու հրապարակվել են ամսական հաշվետվություններ, որտեղ կարելի է տեսնել ըստ մարմինների եւ ըստ գնման առարկաների մասնակիցների ներկայացրած առավելագույն, նվազագույն գները, հաղթող մասնակցիների գների կշռված եւ թվաքանակական միջինը, ստանդարտ շեղումը, մասնակիցների անվանումը:

ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 30-ի թիվ 1104-Ն որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ կնքված պայմանագրերը, հրապարակում է ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում:

Գնումների համակարգողների որակավորման գնահատման նպատակով 2013թ. ընթացքում կազմակերպվել են ՀՀ պետական կառավարման մարմինների, դրանց համակարգում գործող պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների (ԾԻԳ-երի, ՊՈԱԿ-ների, ՓԲԸ-ների եւ այլն) եւ ՀՀ քաղաքային համայնքների գնումների համակարգողների գնումների մասին ՀՀ օրենսդրության իմացության գնահատման քննությունները: Արդյունքում, Նշված քննությունները հաջողությամբ հանձնել են ՀՀ պետական կառավարման մարմինների եւ դրանց համակարգում գործող պետական հիմնարկների թվով 9, ՀՀ պետական կառավարման մարմինների համակարգում գործող ՊՈԱԿ-ների, ՀՈԱԿ-ների եւ ՓԲԸ-ների թվով 113 եւ ՀՀ քաղաքային ու գյուղական համայնքների թվով 7 գնումների համակարգողներ, որոնք ընդգրկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների որակավորված մասնագետների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2012թ. ընթացքում կազմակերպվել է ՀՀ պետական կառավարման մարմինների, վերջիններիս ենթակա ՊՈԱԿ-ների եւ ՓԲԸ-ների գնումների մասնագետների, իսկ «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ քաղաքային եւ գյուղական համայնքների գնումների մասնագետների վերապատրաստման դասընթացներ: Նշված դասընթացները շարունակվում են նաեւ 2013թ.:

Սկսած 2013թ. հունիսից ընտրանքային կարգով մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ պետական մարմինների եւ Պետական հիմնարկների գնման ընթացակարգերը եւ կնքված պայմանագրերը: Միջոցառումներ են իրականացվում հայտնաբերված սխալների շտկման ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է գնումների ընթացակարգերի փաստաթղթերի օրինակելի ձեւերը:

● **Բյուջեի պլանավորման եւ հաշվետվական համակարգերի բարելավում**

Ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով ՀՀ ֆինանսների նախարարությունը 2005թ. նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում բյուջետավորման մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսների) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված (ծրագրային բյուջետավորման) եղանակին անցնելու նպատակով անհրաժեշտ պայմաններ ստեղծելու՝ ծրագրային բյուջետավորման պահանջներից բխող բյուջետավորման տարրերը փորձնական կարգով աստիճանաբար ներդնելու եւ այդ փորձնական ծրագրում ընդգրկված պետական կառավարման մարմինների շրջանակը տարեցտարի ընդլայնելու համար: Առաջին երկու տարիներին ծրագրային բյուջետավորման ներդրման փորձնական ծրագրում ընդգրկվել են սոցիալական ոլորտի 4 պետական կառավարման մարմիններ, 2007թ. վերջին դրանց թիվը կազմել է 14, իսկ սկսած ՀՀ 2010թ.՝ այդ աշխատանքներում արդեն ընդգրկված են բոլոր պետական կառավարման մարմինները:

Փորձնական կարգով իրականացված աշխատանքների արդյունքների հիման վրա մշակվել են ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 27-ի թիվ 48/18 արձանագրային որոշմամբ հավանության է

արժանացել Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգը, որի համատեքստում էլ շարունակվել են բարեփոխումների հետագա խորացման աշխատանքները: Ըստ այդմ, ՀՀ պետական բյուջեների նախագծերը, ավանդական ձեւաչափին զուգահեռ, մշակվել են նաեւ ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձեւաչափով եւ ներառվել են համապատասխան տարիների բյուջետային փաստաթղթերում:

ՀՀ 2012թ. բյուջետային գործընթացում փորձնական կարգով ներդրվել են ծրագրային բյուջետավորման պահանջներից բխող նոր տարրեր.

- ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի եւ այդ ծրագրերի նոր դասիչների համակարգ, համաձայն որի էլ կազմվել են ՀՀ 2012 եւ 2013 թվականների պետական բյուջեների նախագծերը,

- 2012թ. բյուջետային գործընթացի շրջանակում փորձարարական երեք գերատեսչություններում (ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, գյուղատնտեսության նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն) կազմվել է յուրաքանչյուրում մեկական բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր), իսկ 2013թ. այդպիսի բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր) կազմվել է թվով ութ գերատեսչություններում՝ 10 բյուջետային ծրագրերի համար: Դրանք բոլորն էլ զետեղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում: Բյուջետային ծրագրի նկարագիրը (անձնագիրը) սահմանում է տվյալ բյուջետային ծրագրով անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը եւ թիրախները, ինչը ֆինանսների արդյունավետ պլանավորման (արդյունքի հիման վրա ծրագրավորման) համար առանցքային կարելուորության խնդիր է:

Ծրագրային բյուջետավորման գործընթացը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու եւ բարեփոխումների ներկայիս ձեռք բերված արդյունքները զարգացնելու ու անհրաժեշտ օրենսդրական հիմքեր ստեղծելու նպատակով մշակվել են ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013թ. ապրիլի 30-ին դրանք ընդունվել եւ գործում են:

- **Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների եւ հմտությունների բարելավում**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի գործունեության ուղղություններից մեկը պետական եւ համայնքային ծառայողների վերապատրաստումն է տեղեկատվության ազատության ոլորտում: Այդ առումով, կենտրոնը համագործակցում է ՀՀ կառավարության, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ, գործում է համագործակցության հուշագիր ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ: Արդեն հինգ տարի է, ինչ ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ, որի ընթացքում վերապատրաստվել է ավելի քան 400 պետական եւ համայնքային ծառայող: Ներկայումս (մայիս ամսին) նախատեսվում է 20-30 քաղաքացիական ծառայողների վերապատրաստում:

- **Կոռուպցիայի դեմ պայքար**

2012թ. հունվարին ստեղծվել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը: Հանձնաժողովի հիմնական առաքելությունը երկրում գործող հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացումն է եւ արդար կառավարման համակար-

գի ներդրումը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեությունը հասարակության համար առավել թափանցիկ ու հրապարակային դարձնելը:

Ստանձնած տվյալ պարտավորության շրջանակներում ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել ստեղծելու մասնագիտական մարմին (Քարտուղարություն), որը կաջակցի Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին եւ նրան առընթեր Մոնիտորինգային հանձնաժողովին՝ արդյունավետ կերպով իրականացնելու իրենց գործառնությունները: Քարտուղարությունը նպաստելու է նաև պետական մարմինների եւ հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությանը: Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության կողմից առաջարկվել է ներկայումս աշխարհում գործող կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության իրականացմանն ուղղված երեք մոդել՝ ունիվերսալ (ներառում է եւ՝ կանխարգելում, եւ՝ հետաքննություն, գործում է մի շարք երկրներում, այդ թվում՝ Լեհաստանում, Լատվիայում, Լիտվայում), իրավակիրառ (վերջինս ավելի շատ հետաքննող մոդել է) եւ կանխարգելիչ մոդելներ: Մոդելների ընտրության հարցը դեռևս գտնվում է քննարկման փուլում, որի հաստատումը նախատեսվում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի հաջորդ նիստում: Մոդելներից որեւէ մեկի ընտրությունից հետո կձեռնարկվեն համապատասխան քայլեր՝ վերոնշյալ Քարտուղարության ստեղծման ուղղությամբ:

2012թ. դեկտեմբերին կայացած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստում ամփոփվել են Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ գործողությունների ծրագրի իրականացման արդյունքները: Նիստի ժամանակ ներկայացվել է գործողությունների ծրագրի կատարման մակարդակը, այն խնդիրները, որոնք առաջ են եկել գործողությունների իրականացման ընթացքում, ինչպես նաև այս կամ այն գործողության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառները:

Թեև ներկայումս առկա է կոռուպցիայի դեմ պայքարի համապարփակ քաղաքականության իրականացման որոշակի ընդհատում, սակայն ՀՀ կառավարության կողմից իրականացվող շատ միջոցառումներ ուղղված են հենց կոռուպցիայի դեմ պայքարին կամ կոռուպցիայի նվազեցմանը: Էլեկտրոնային կառավարման համակարգի մի շարք ծրագրերի առանցքային նպատակը կոռուպցիայի դեմ պայքարն է: Մասնավորապես, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնած հանրային ռեգիստրների ստեղծման նպատակն է միավորել պետության կողմից քաղաքացուն մատուցվող ծառայությունները մեկ պատուհանի սկզբունքով (անձնագրերի ստացում, ՉԱԳՍ-երի, ռեգիստրի կողմից մատուցվող ծառայություններ, շարժական գույքի գրանցման հետ կապված ծառայություններ եւ այլն): Այժմ հայեցակարգը ներկայացվել է ՀՀ կառավարություն եւ այն գտնվում է համաձայնեցման փուլում:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, կարելի է վստահաբար փաստել, որ Հայաստանը թե՛ իր պարտավորությունների ծավալով եւ թե՛ դրանց իրականացման ընթացքով զբաղեցնում է բավական առաջատար դիրքեր: Այդ գործընթացում բարձր է գնահատվում, հատկապես, հայաստանյան պարտավորությունների կատարման շրջանակներում ներգրավված բոլոր գործընկերների ցուցաբերած աջակցությունը եւ ներդրած ջանքերը:

Հիմնական մարտահրավերները. ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընդհանուր համատեքստում, թերեւս, ամենահիմնական մարտահրավերը պայքարն է կոռուպցիայի դեմ: Համաշխարհային բանկի տվյալներով՝ Հայաստանի տնտեսության զարգացման խոչընդոտների շարքում կոռուպցիան զբաղեցնում է առաջին հորի-

գոնականը: Այդ իսկ պատճառով կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ կառավարության կարելի է անվերապա անաշխատասերություններից մեկն է: Հայաստանն ավարտել է հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ գործողությունների ծրագիրը, եւ այժմ ՀՀ կառավարությունը գործուն քայլեր է ձեռնարկում հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակման եւ ընդունման ուղղությամբ:

Այսօր աշխարհում մարդիկ կառավարություններից պահաջում են լինել բաց, հաշվետու եւ արդյունավետ՝ ակնկալելով առավել ակտիվ քաղաքացիական մասնակցություն հանրային կառավարման գործընթացներում: Այս համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի կառավարության կողմից իրականացվող քայլերը ծառայում են ժամանակակից աշխարհի վերոնշյալ պահանջներին եւ հրամայականներին: Այնուամենայնիվ, ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում նկատելի էր այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարության կողմից առավել թափանցիկ եւ հաշվետու լինելու առաջարկն ու պատրաստակամությունն ավելի շատ է, քան դրա պահանջարկը քաղաքացիական հասարակության կողմից: Այս առումով առավել արդյունավետ կլինեք, եթե քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ցուցաբերեին ավելի ակտիվ մասնակցություն ԲԿԳ/Հայաստան գործընթացներում՝ հնարավորինս լիարժեքորեն օգտվելով ԲԿԳ գաղափարախոսության ընձեռած հնարավորություններից:

ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրի նորարարական բաղադրիչը. ԲԿԳ/Հայաստան գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների համատեքստում, թերեւս, ամենանորարարական բաղադրիչը էլեկտրոնային կառավարումն է եւ այդ համակարգում ունեցած ձեռքբերումները: Համակարգը հնարավորություն տվեց փոխելու մեր պատկերացումները պետական կառավարման մասին ունեցած ստանդարտ ընկալումների շուրջ: Էլեկտրոնային կառավարումը մեծապես նպաստում է հանրային կառավարման գործընթացների եւ պետական կառավարման մարմինների գործունեության թափանցիկության, արդյունավետության եւ հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը: Այն նվազագույնի է հասցնում պետություն-քաղաքացի շփումը, որն էլ իր հերթին հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը:

Ներկայումս պետական կառավարման տարբեր ոլորտներում ներդրվել են էլեկտրոնային կառավարման այնպիսի համակարգեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ բյուջե, պետական գնումների էլեկտրոնային համակարգ, պետական վճարումների էլեկտրոնային համակարգ, հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգ, էլեկտրոնային թույլտվություններ եւ լիցենզիաներ, «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, բիզնեսի էլեկտրոնային գրանցում, անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգ, հյուպատոսական ծառայությունների էլեկտրոնային մատուցման համակարգ, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքներ, մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ, ԴԱՀԿ էլեկտրոնային աճուրդի համակարգ եւ այլն:

2013թ. հունիսի 14-ին Երեւանում տեղի ունեցավ ԲԿԳ/Հայաստան առաջին միջազգային համաժողովը, որին ներկա էին եւ մասնակցում էին փորձագետներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից՝ ԱՄՆ, Եստոնիա, Բուլղարիա, Վրաստան, ներկայացուցիչներ ինչպես կառավարությունից, այնպես էլ քաղաքացիական հասարակությունից: ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում համաժողովը Հայաստանի առաջին փորձն էր համախմբելու կառավարության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին եւ ծառայելու որպես արդյունավետ հարթակ մտքերի եւ փորձի փոխանակման, ինչպես նաեւ համագործակցության հետագա ուղիներ գտնելու համար:

Հայաստանի կառավարությունը քաջ գիտակցում է, որ բաց եւ պատասխանատու կառավարություն ունենալը, ինչպես նաեւ որոշումների կայացման եւ քաղաքականության մշակման գործընթացներում քաղաքացու ակտիվ մասնակցությունն ապահովելն այնքան էլ դյուրին գործընթաց չէ, քանզի պահանջում է քաղաքական կամք, հետեւողական ջանքեր, համագործակցություն կառավարության եւ քաղաքացիական հասարակության միջեւ, ինչպես նաեւ տեխնոլոգիական գիտելիքներ,

հմտություններ եւ բավարար պայմաններ: Թեեւ Յայաստանը լուրջ առաջընթաց է գրանցել իր ԲԿԳ/Յայաստան գործողությունների ծրագրի իրականացման գործում, այնուամենայնիվ, պետք է նշել, որ դեռեւս շատ անելիքներ կան կառավարությունն առավել թափանցիկ եւ մասնակցային դարձնելու ուղղությամբ, քանի որ կառավարության հեռահար նպատակներին հնարավոր չէ հասնել մեկամյա ծրագրի միջոցով: Այդ է պատճառը, որ ՀՀ կառավարությունն արդեն նախաձեռնել է ԲԿԳ/Յայաստան նոր գործողությունների ծրագրի մշակման գործընթացը: Առկա է ՀՀ վարչապետի հանձնարարականը համապատասխան գերատեսչություններին ներկայացնելու իրենց առաջարկությունները ԲԿԳ/Յայաստան գործողությունների նոր ծրագրում ներառելու մասին: Լիա-
հույս ենք, որ ԲԿԳ/Յայաստան նոր գործողությունների ծրագիրը կհաստատվի մինչեւ այս տար-
վա վերջ: Այս առումով հարկ է շեշտել, որ Յայաստանի կառավարությունը հաստատակամ է իր քա-
ղաքական կամքի դրսեւորման մեջ եւ հետեւողականորեն կշարունակի իր ստանձնած եւ դեռեւս
ապագայում ստանձնելիք պարտավորությունների կատարումը ԲԿԳ շրջանակներում:

3. ԲԿԳ-Հայաստան 2012-2013 թթ. գործողությունների ծրագրի անկախ հետազոտական մեխանիզմ. Հայաստան 2012-2013 թթ. հաշվետվություն³:



Սեղմագիր

Անկախ հետազոտական մեխանիզմի (ԱՀՄ) Հայաստանի Բաց կառավարման գործընկերության (այսուհետ՝ ԲԿԳ) 2012-13թթ. ընթացիկ հաշվետվության

Գործողությունների ազգային ծրագիրը պարունակում էր 15 պարտավորություն, որոնցից 5-ը՝ հավակնոտ: Պարտավորություններից 7-ը համապատասխանում են ԲԿԳ արժեքներին, 8-ը էականորեն կամ ամբողջությամբ կատարվել են: Գործողությունների հաջորդ ծրագրի նախապատրաստման գործընթացը քաղաքացիական հասարակությանը և կառավարությանը հնարավորություն է տալիս միասին աշխատել իրենց քաղաքացիների համար ԲԿԳ դերը մեծացնելու ուղղությամբ:

Բաց կառավարման գործընկերությունը կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կառավարությունների կողմից իրենց քաղաքացիների առջև թափանցիկության խթանմանը, նրանց լիազորություններ տալու, կոռուպցիայի դեմ պայքարելու և կառավարման որակը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված պարտավորությունների ստանձնումը: ԱՀՄ-ն երկու տարին մեկ կատարում է ԲԿԳ մասնակից բոլոր երկրների կողմից իրականացվող միջոցառումների ուսումնասիրություն:

Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես անդամակցում է ԲԿԳ-ին 2011թ. հոկտեմբերից, երբ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը

Ամփոփ	
Անդամակցություն՝ 2011թ. Պարտավորությունների քանակը՝	15
<i>Կատարման աստիճանը</i>	
Կատարված՝	15-ից 7-ը
Չգալի չափով՝	15-ից 1-ը
Սահմանափակ՝	15-ից 7-ը
<i>Ժամկետայինությունը</i>	
Ժամանակին կատարված՝	15-ից 7
Ժամկետից շուտ կատարված՝	15-ից 1
<i>Պարտավորությունների ուղղվածությունը</i>	
Տեղեկատվության հասանելիություն	15-ից 3-ը
Հանրային մասնակցություն՝	15-ից 1-ը
Հաշվետվողականություն՝	15-ից 7-ը
Տեխնոլոգիաները և նորարարությունը թափանցիկ-կույթյա և հաշվետվողա-կանության համար՝	15-ից 1-ը
<i>Պարտավորություններ, որոնք՝</i>	
Հստակ կերպով կապված են ԲԿԳ արժեքներից որևէ մեկի հետ՝	15-ից 7-
Հնարավոր զգալի ազդեցություն կարող են ունենալ՝	15-ից 5-ը
Լրիվ կամ զգալի չափով կատարված՝	15-ից 8-ը
Բոլոր երեքը (☺)՝	15-ից 1-ը

հայտարարեց նախաձեռնությանն անդամակցելու կառավարության մտադրության մասին: ԲԿԳ գործողությունների ծրագրի նախագծումը դրվել էր վարչապետի կողմից ստեղծված աշխատանքային խմբի վրա: Աշխատանքային խմբում ընդգրկված են եղել արտաքին գործերի, տարածքային կառավարման, արդարադատության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներ: Գործողությունների ծրագրի նախագծման հետ կապված աշխատանքների համակարգումը դրվել էր արտաքին գործերի նախարարության ամերիկայի վարչության վրա: Մշտապես գործող նախարարական պետաիրավական կոմիտեի 2012թ. ապրիլի 5-ի նիստում հավանության է արժանացել Հայաստանի ԲԿԳ գործողությունների ծրագիրը հաստատող ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

ԲԿԳ գործընթաց

ԲԿԳ-ին անդամակցող երկրներն իրենց գործողությունների ծրագրերի նախագծման և ներդրման ժամանակ հետևում են խորհրդակցությունների որոշակի ընթացակարգերի:

Հայաստանը ԲԿԳ գործողությունների իր ծրագիրը մշակել է տեղեկատվության ազատության, հաշվետվողականության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում աշխատող քաղաքացիական հասարակության մի քանի ընտրված կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) մասնակցությամբ: Սակայն մի շարք գործոններ սահմանափակել են քննարկումներին մասնակցությունը: Նախ և առաջ կառավարությունը կանխավ հայտարարություն չի տարածել խորհրդակցությունների մասին և ՔՀԿ-ներին չի առաջարկել գործողությունների ծրագրի նախագծում ընդգրկելու համար առաջարկություններ ներկայացնել:

ՔՀԿ-ների ուժ ներկայացուցիչներ մասնակցել են դեմ առ դեմ քննարկումներին, որոնք նրանք համարել են իմաստալից: Սակայն այդ կազմակերպությունները նշել են, որ գործողությունների ծրագրի նախագիծը կարծիքներ ստանալու նպատակով չի տեղադրվել կառավարության ինտերնետային կայքում: Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն ստեղծել է ԲԿԳ-ին նվիրված ինտերնետային կայք, որը կառավարության կողմից ճանաչվել է որպես պաշտոնական կայքէջ:

Գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ ինքնագնահատման զեկույցի նախագծման ժամանակ կառավարության կողմից շահառուներից մեկնաբանություններ ստանալու գործընթացը մի շարք թերություններ է ունեցել: Մինչև 2013թ. սեպտեմբերի 30-ի վերջնաժամկետը կառավարությունը ԲԿԳ ուղեցույցներով պահանջվող երկշաբաթյա ժամկետ չի տրամադրել հանրությունից կարծիքներ ստանալու համար:

Պարտավորությունների կատարումը

Որպես ԲԿԳ մասնակիցներ, երկրները պետք է երկամյա գործողությունների ծրագրով պարտավորություններ ստանձնեն: Աղյուսակ 1-ում ամփոփված են Հայաստանի կողմից ստանձնած բոլոր 15 պարտավորությունները, ներառյալ դրանց հնարավոր ազդեցությունը, կատարման աստիճանը, թե, արդյո՞ք, դրանց ընթացքը սահմանված ժամկետի շրջանակներում է, ինչպես նաև ԲԿԳ գործողությունների հաջորդ ծրագրերի հետ կապված հետագա քայլերի վերաբերյալ առաջարկություններ: Հայաստանի ծրագրում ներկայացված էին տարատեսակ ոլորտներ և հավակնոտ պարտավորություններ: Հայաստանը կատարել է իր 15 պարտավորություններից 7-ը: Աղյուսակ 2-ում ամփոփված են յուրաքանչյուր պարտավորության գծով առաջընթացի վերաբերյալ ԱՀՄ հետազոտողի գնահատակները:

Աղյուսակ 1. Առանձին պարտավորությունների գծով առաջընթացը

Պարտավորության կարճ նկարագիրը	Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը				Կատարման աստիճանը	Հետագա քայլերը
	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսած	Սահմանափակ	Զգալի	Կատարված		
<p>⊕ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է</p>										
<p>1.1.ա. Միասնական վճարումների համակարգի ստեղծում (պորտալ). Պետական տուրքերի (լիցենզիաների, թույլտվությունների, ծառայությունների և այլ) վճարման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրում</p>									Համաձայն ծրագրի	Պարտավորությունը կատարված է
<p>1.1.բ. Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ. Մեքենաների գրանցման և այլ ծառայությունների մատուցման նպատակով մեկ պատուհանի սկզբունքի ներդրում</p>									Համաձայն ծրագրի	Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա նորի ձևակերպում
<p>1.1.գ. Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայություններում. Հյուպատոսական ծառայությունների մատուցման համար էլեկտրոնային համակարգի ստեղծում</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Հրաժարվել պարտավորությունից
<p>1.1.դ. «Mail-Armenia» համակարգի ներդրում. Առաջին անգամ անձնագիր ստանալու համար դիմած քաղաքացիներին էլեկտրոնային հասցեի տրամադրում՝ պետության կողմից կատարվող ծանուցումների համար</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Վերաձևակերպել պարտավորությունը
<p>1.1.ե. «E-statistics» համակարգի ներդրում. Ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրվող հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի ներդրում</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա նորի ձևակերպում

Պարտավորության կարճ նկարագիրը	Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը				Կատարման աստիճանը	Հետագա քայլերը
	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսած	Սահմանափակ	Չգալի	Կատարված		
<p>⊕ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է</p>										
<p>1.1.գ. Քաղաքային համայնքներում փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության համակարգի ներդրում. 48 քաղաքային համայնքների վարչական մարմինների ընդգրկում Mulberry էլեկտրոնային համակարգում</p>									Համաձայն ծրագրի	Կարիք չկա շարունակել ԲԿԳ գործողությունների հաջորդ ծրագրում
<p>1.2. Կարգավորող իրավական ակտերի վերանայում (կարգավորման «Guillotine» ծրագիր). միջազգային լավագույն փորձի հիման վրա պետական կարգավորման համակարգի ստեղծում՝ գործարարների ու քաղաքացիների համար բարենպաստ կարգավորող միջավայրի ապահովման նպատակով</p>									Համաձայն ծրագրի	Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա նորի ձևակերպում
<p>1.3. Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում. Միջազգային ստանդարտների և լավագույն փորձի վրա հիմնված ներքին աուդիտի նոր համակարգի ներդրում կարևոր պետական կառույցներում, քաղաքային համայնքներում և առևտրային ու պետական ոչ առևտրային կազմակերպություններում</p>									Համաձայն ծրագրի	Հետագա քայլեր անհրաժեշտ չեն
<p>1.4. Գնումների համակարգի բարելավում. Գնումների համակարգի և գնումներով զբաղվող մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավում, մանրամասն տեղեկատվության հրապարակում, օրենքների ավելի լավ կատարման երաշխիք, թափանցիկության և մրցակցության ապահովում, էլեկտրոնային գնումների համակարգի ներդրում և այլն</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Շարունակել պարտավորության կատարման ուղղությամբ աշխատանքը

Պարտավորության կարծ նկարագիրը	Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը				Կատարման աստիճանը	Հետագա քայլերը
	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսած	Սահմանափակ	Զգալի	Կատարված		
<p>⊕ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է</p>										
<p>1.5. Ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով բյուջեի պլանավորման և հաշվետվության համակարգերի բարելավում. պետական միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների բարելավման, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով մինչև 2014թ. ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Շարունակել պարտավորության կատարման ուղղությամբ աշխատանքը
<p>2.1.ա. Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում. բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակում էթիկայի հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ դրանք հանրությանը հասանելի դարձնելու նպատակով</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Շարունակել պարտավորության կատարման ուղղությամբ աշխատանքը
<p>2.1.բ. Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բյուջեների և կառավարության ամենօրյա գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման համար</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Պահպանել պարտավորությունը և դիտարկել դրա կատարումը

Պարտավորության կարճ նկարագիրը	Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը				Կատարման աստիճանը	Հետագա քայլերը
	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսած	Սահմանափակ	Չգալի	Կատարված		
<p>⊕ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է</p>										
<p>⊕ 2.1.գ. Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում. ՔՀԿ-ների հետ համատեղ տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանը նպատակաուղղված դասընթացների կազմակերպում</p>									Համաձայն ծրագրի	Պահպանել պարտավորությունը և դիտարկել դրա կատարումը
<p>2.2. Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանում. 2013թ. վերջի դրությամբ հարկատուների առնվազն 90 տոկոսի հաշվետվությունների առցանց մշակում, իրազեկվածության բարելավում և հարկատուներին օժանդակելու նպատակով տեղեկատվական կենտրոնների ստեղծում, այլ բարեփոխումներ</p>									Համաձայն ծրագրի	Կատարված պարտավորության հիման վրա ներ պարտավորության ձևավորում
<p>2.3. Կոռուպցիայի դեմ պայքար. ՔՀԿ-ների հետ քննարկումների հիման վրա Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության ձևակերպումների և իրականացման գործընթացում ուղղումների կատարում և կառավարության կառուցվածքում Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին և նրան առընթեր Մոնիտորինգային հանձնաժողովին աջակցող Քարտուղարության ստեղծում՝ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությանը նպաստելու համար</p>									Ժամանակացույցից հետ է մնում	Շարունակել պարտավորության կատարման ուղղությամբ աշխատանքը

Աղյուսակ 2. Պարտավորությունների գծով առաջընթացի ամփոփում

Պարտավորության կարճ նկարագիրը	Արդյունքների ամփոփումը
<p>⊕ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է</p>	
<p>1.1.ա. Միասնական վճարումների համակարգի ստեղծում (պորտալ).</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. պարզ չէ • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. կատարված 	<p>Այս համակարգը նախատեսված է վճարումները պետական մարմինների համար դիտարկելի դարձնելու համար: Այս պարտավորությունը բավարար չափով չի առնչվում ԲԿԳ արժեքային համակարգի հետ: ՔՀԿ-ների ներկայացուցիչները հետաքրքրություն հանդես չեն բերել այս պարտավորության նկատմամբ:</p>
<p>1.1.բ. Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. պարզ չէ • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. կատարված 	<p>Այս պարտավորությունը բարելավել է մեքենաների գրանցման և տրասնպորտային միջոցների հետ կապված այլ ծառայությունների մատուցման աշխատանքները: Սակայն համաձայն ՔՀԿ-ների ներկայացուցիչների այս պարտավորությունը չի առնչվում ԲԿԳ արժեքային համակարգին:</p>
<p>1.1.գ. Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. պարզ չէ • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. զգալի չափով կատարված 	<p>Այս համակարգը ներդրվել է հյուպատոսական կետերի մեծ մասում: ՔՀԿ-ներն այս պարտավորությունները չեն դիտարկել որպես ԲԿԳ կարևոր պարտավորություն:</p>

<p>1.1.դ. «Mail-Armenia» համակարգի ներդրում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ չէ</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. <p>սահմանափակ չափով կատարված</p>	<p>Պարտավորությունը որոշ չափով կատարվել է, սակայն միայն կառավարությունից ծանուցումներ ստանալու փոխարեն այն պետք է քաղաքացիներին հնարավորություն տա նաև կառավարությանը հարցեր և դիմումներ ներկայացնել: Լրացուցիչ աշխատանք է հարկավոր այս պարտավորությունը ԲԿԳ տեղեկատվության հասանելիության և հանրային մասնակցության արժեքների պահանջներին համապատասխանեցնելու համար:</p>
<p>1.1.ե. «E-statistics» համակարգի ներդրում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ չէ</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. <p>սահմանափակ չափով կատարված</p>	<p>Պարտավորության իմաստը դժվար է հասկանալ: Ներկա ձևակերպմամբ չի մանրամասնվում, թե այն ինչպես է խթանում ԲԿԳ տեղեկատվության հասանելիության և հաշվետվողականության արժեքները:</p>
<p>1.1.զ. Քաղաքային համայնքներում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ չէ</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. <p>կատարված</p>	<p>Այս պարտավորությունը կատարված է: Սակայն ԲԿԳ արժեքային համակարգի հետ կապը պարզ չէ: «Mulberry» համակարգի միջոցով փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառությունը թեև բարելավել է պետական մարմինների միջև տեղեկատվության փոխանակումը, սակայն պարտավորությունը կառավարության ունեցած տեղեկատվությունը հասանելի չի դարձնում հանրության համար:</p>
<p>1.2. Կարգավորող իրավական ակտերի վերանայում («Guillotine» ծրագիր)</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ չէ</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. <p>կատարված</p>	<p>Այս պարտավորությունը կատարված է: Որոշ ԲՀԿ-ներ այն կարևոր են համարել: Գործողությունների հաջորդ ծրագրում կառավարությունը կարող է այս պարտավորության հիման վրա ձևակերպել նորը՝ Հայաստանում գործարար միջավայրը բարելավելու նպատակով:</p>

<p>1.3. Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ չէ</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. <p>Կատարված</p>	<p>Ներքին աուդիտի համակարգի կատարելագործումը նպատակ ունի հզորացնել պետական ֆինանսական կառավարման համակարգը և բարելավել թափանցիկության ապահովումը: ՔՀԿ-ները քիչ էին հետաքրքրված այս պարտավորությամբ, քանի որ ներքին աուդիտի հետազոտության արդյունքները հանրությանը հասանելի չեն:</p>
<p>1.4. Գնումների համակարգի բարելավում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ է</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. <p>չափավոր</p> <ul style="list-style-type: none"> • Կատարման աստիճանը. <p>սահմանափակ չափով կատարված</p>	<p>Չնայած գոյություն ունի կարծիք, որ գնումների վերաբերյալ հայկական օրենսդրությունն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է միջազգային չափանիշներին, սակայն լրացուցիչ ջանքեր են պահանջվում գոյություն ունեցող խնդիրները բացահայտելու և օրենսդրությունն ավելի լավ կիրառելու համար:</p>
<p>1.5. Ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով բյուջեի պլանավորման և հաշվետվության համակարգերի բարելավում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ է</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. <p>տրանսֆորմարիվ</p> <ul style="list-style-type: none"> • Կատարման աստիճանը. <p>սահմանափակ չափով կատարված</p>	<p>Այս պարտավորության կատարումը կհզորացնի բյուջետային տարբեր ծրագրերի կատարման նկատմամբ խորհրդարանի և հանրության վերահսկողությունը: Արդյունքում, հանրությունը և խորհրդարանը ավելի շատ տեղեկատվություն կստանան ծրագրերի և ոլորտների ծրագրային ցուցանիշների վերաբերյալ: Ծրագրային բյուջետավորումը պետք է ամբողջությամբ ներդրվեր 2014թ., ինչպես սահմանված է գործողությունների ծրագրում, սակայն այս պարտավորության կատարումը ետ է մնացել ժամանակացույցից և համաձայն կառավարության գործունեության վերջին ծրագրի, այն ամբողջությամբ կներդրվի 2018թ.:</p>
<p>2.1.ա. Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ է</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. <p>տրանսֆորմարիվ</p> <ul style="list-style-type: none"> • Կատարման աստիճանը. <p>սահմանափակ չափով կատարված</p>	<p>Այս պարտավորությունը ենթադրում էր ինտերնետային կայքի ստեղծում, որտեղ կիրապարակվեն բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերը: ՔՀԿ-ները ակտիվորեն դիտարկել են պարտավորության կատարումը: Թեև պարտավորությունը նշանակալից առաջընթաց քայլ է, սակայն բարձրաստիճան պետական պաշտոնյաների միայն կեսի գույքի և եկամուտների հայտարարագրերն են հասու եղել հանրությանը:</p>

<p>2.1.բ. Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ է</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. <p>չափավոր</p> <ul style="list-style-type: none"> • Կատարման աստիճանը. <p>սահմանափակ չափով կատարված</p>	<p>Պատրաստվել է կառավարության որոշման նախագիծ, որի համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով պահանջվող տեղեկատվությունը ստանդարտացված կերպով պարբերաբար պետք է հրապարակվի: Սակայն կառավարության որոշման այս նախագիծը դեռևս ավարտուն տեսք չունի: Կառավարության ինքնագնահատման զեկույցում նշվում է, որ այն քննարկվել է տեխնիկական մասնագետների հետ, սակայն պարզ չէ, թե ՔՀԿ-ների հետ, արդյո՞ք, եղել են քննարկումներ: Կառավարությունը դեռևս պետք է հրապարակի քննարկումների արդյունքները և հաստատի որոշումը:</p>
<p>2.1.գ. Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ է</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. <p>չափավոր</p> <ul style="list-style-type: none"> • Կատարման աստիճանը. <p>կատարված</p>	<p>ՔՀԿ-ի հետ համագործակցությամբ կառավարությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ վերապատրաստել է պաշտոնյաներին: Այս պարտավորությունը կառավարության և քաղաքացիական հասարակության համագործակցության լավ օրինակ է:</p>
<p>2.2. Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ է</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. փոքր • Կատարման աստիճանը. <p>կատարված</p>	<p>Այս պարտավորությամբ նապատեսվում էր հարկատուների հաշվետվությունների առնվազն 90 տոկոսը մշակել առցանց: Ստեղծվել են հարկատուների սպասարկման և տեղեկատվական կենտրոններ: Դեռևս վաղ է գնահատել բարեփոխումների ազդեցությունը հարկային վարչարարության թափանցիկության և օբյեկտիվության վրա:</p>
<p>2.3. Կոռուպցիայի դեմ պայքար</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. <p>պարզ է</p> <ul style="list-style-type: none"> • Հնարավոր ազդեցությունը. փոքր 	<p>2009թ. ի վեր ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ շարունակական ջանքեր է գործադրում: Սակայն հանրությանը քիչ տեղեկատվություն է հասու կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ կառավարության կողմից իրականացվող կոնկրետ միջոցառումների վերաբերյալ:</p>

<p>• Կատարման աստիճանը. սահմանափակ չափով կատարված</p>	<p>Պարտավորությունը ենթադրում էր կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին աջակցող Քարտուղարության ստեղծում և քաղաքացիական հասարակության հետ քննարկումներ ունենալու ու դրանց հիման վրա իրակա-նացվող հակակոռուպցիոն քաղաքականության մեջ փոփոխությունների կատարում: Սակայն 2013թ. հունիսի դրությամբ քարտուղարությունը չի ստեղծվել և չկա վկայություն, որ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ քննարկումներ է ունեցել քաղաքացիական հասարակության հետ ու դրանց հիման վրա փոփոխություններ կատարել իր գործողություններում:</p>
--	--

Առաջարկություններ

Հայաստանում կառավարության գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքացիների կարիքներին արձագանքման գործում ԲԿԳ-ն կարևոր գործիք դարձնելու համար ՔՀԿ-ները և կառավարությունը պետք է միասին աշխատեն ԲԿԳ դերը բարձրացնելու և նրա հիմնական արժեքները քաղաքացիների ու պաշտոնյաների շրջանում արմատավորելու համար: Սույն հաշվետվության բացահայտումների և հայտնաբերված մարտահրավերների հիման վրա այս բաժնում ներկայացվում են հիմնական առաջարկությունները:

1. Գործողությունների ծրագրի նախագծման գործընթացը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պահանջները. (ա) ապահովի հասարակության ավելի լայն շերտերի ընդգրկում; (բ) նախօրոք տեղեկատվություն տարածի առաջիկա բոլոր հանրային քննարկումների վերաբերյալ; (գ) հրապարակի ստացված առաջարկությունների ամփոփումը; (դ) հստակ ձևակերպի պարտավորությունների կատարման ժամանակացույցերը և ներգրավված մարմինների ու պաշտոնյաների պարտականությունները:
2. Որպեսզի երաշխավորվի, որ հայ ժողովրդի համար կարևոր հարցերը ներառված են գործողությունների ծրագրում, ՔՀԿ-ները պետք ներգրավվեն ԲԿԳ գործընթացում, մասնակցեն քննարկումներին և օգտագործեն գործողությունների հաջորդ ծրագրի նախագծման ժամանակ կառավարության կողմից տրվող հնարավորությունները:

3. Գործողությունների ծրագիրը պետք է ներառի պարտավորություններ հետևյալ ոլորտների վերաբերյալ, որոնք ուղղակի առնչվում են ԲԿԳ արժեքներին. (ա) կոռուպցիայի դեմ պայքար, (բ) պետական ֆինանսական կառավարում (ներառյալ պետական գնումներ և ծրագրային բյուջետավորում), (գ) կրթություն, (դ) առողջապահություն, (ե) բնապահպանություն, (զ) հարկային վարչարարություն, (է) բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկություն:

2012թ. ընտրության չափանիշները: ԲԿԳ-ին անդամակցելու համար կառավարությունները պետք է հավատարմություն ցուցաբերեն բաց կառավարության սկզբ-բունքների նկատմամբ՝ բավարարելով բաց կառավարության չափորոշիչների նվազագույն պահանջները: Յուրաքանչյուր ոլորտում երկրի զարգացումը գնահատելու համար օգտագործվել են երրորդ տարբեր կողմերի ցուցանիշները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://www.opengovpartnership.org/eligibility>: Առկա տվյալները ԲԿԳ աշխատակազմի կողմից դասակարգվել է մեկից չորս սանդղակով, որոնք ստորև ներկայացված են փակագծերում:

Բյուջեի թափանցիկություն. 4-ից՝ 0

Տեղեկատվության ազատություն. Օրենքը գործում է (4-ից՝ 2)

Հայտարարագրերի հրապարակում. Միայն ընտրված պաշտոնյաները՝ խորհրդարանին (4-ից՝ 3)

Հանրային մասնակցություն. 10-ից՝ 5.88 (4-ից՝ 3)

Արտակ Բյուրոյանը պետական քաղաքականության և կառավարման բնագավառում փորձ ունեցող անկախ հետազոտող է, ով աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարությունում: 1995թ. նա ճարտագիտության բնագավառում մագիստրոսի կոչում է ստացել Հայաստանի ամերիկյան համալսարանից, իսկ 2003թ. գործարար կառավարման բնագավառում մագիստրոսի կոչում է ստացել Թյուլեյնի համալսարանից:

Բաց կառավարության գործընկերությունը նպատակ է հետապնդում անդամակցող կառավարությունների կողմից թափանցիկության, հանրային մասնակցության, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարումը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաներն օգտագործելուն նպատակաուղղված կոնկրետ պարտավորությունների ստանձնում: Շահառուների միջև երկխոսությունը խթանելու և հաշվետվողականությունը բարելավելու նպատակով ԲԿԳ անկախ հետազոտական մեխանիզմը գնահատում է ազգային գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը:



Հաշվետվությունն ամբողջությամբ կարող եք գտնել այստեղ.
<http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/armenia-ogp-irm-draft-public-comment-armenian.pdf>

Գ. ԲԿԳ-Հայաստան, գործողությունների երկրորդ ծրագիր. 2014-2016թթ

1. ՀՀ կառավարության մշակած ԲԿԳ-Հայաստան 2014-2016թթ գործողությունների նախնական ծրագիր. օգոստոս 2013թ.

**Հայաստանի Հանրապետության Գործողությունների ծրագրի առաջին
նախագիծ
(2014-2016 թվականներ)**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակում է հավատարիմ մնալ ավելի բարձր աստիճանի թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու իր հանձնառությանը, ինչպես նաև քաղաքացիների համար ապահովել այնպիսի կառավարում, որը լավագույնս կհամապատասխանի նրանց կարիքներին և ձգտումներին: Հանրային հաստատությունների և արդյունավետ կառավարման ամրապնդումը եղել է պետության առաջնահերթություններից, և վերջին տասնամյակում Հայաստանի իշխանություններն իրականացրել են մի շարք միջոցառումներ այդ կապակցությամբ:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությանը միանալու մասին որոշումը համապատասխանում է այդ քաղաքականությանը և արտահայտում է կառավարության հանձնառությունն էապես բարելավելու վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների որակը: 2011 թվականից սկսած ԲԿԳ գործընթացը կառավարության օրակարգի կարելորագույն մաս է կազմում՝ գտնվելով կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալի անմիջական վերահսկողության ներքո:

2012-2013 թվականներին Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական և նախագահական ընտրությունների հաջողված արդյունքը կարելի է քայլ էր ժողովրդավարության և ազատականացման ճանապարհին: Ակնկալվող դրական ազդեցությունը կառավարության գործունեության վրա նշանակալի է: Համաձայն Համաշխարհային բանկի 2013 թվականի գեկույցի, Հայաստանը «doing business» ցուցանիշով զբաղեցնում է 32-րդ հորիզոնականը 185 երկրների շարքում, բարձրանալով 18 կետով՝ 2012 թվականի համեմատությամբ: Օգոստոսին «Մուդիս» վարկանիշային կազմակերպությունը Հայաստանի վարկանիշը գնահատել է «կայուն» Baa2՝ նախորդ տարվա «բացասականի» փոխարեն: 2013 թվականի այլ խոշոր միջազգային վարկանիշավորումները նույնպես նպաստավոր են եղել Հայաստանի համար:

Կոռուպցիան մնում է որպես առաջնային մարտահրավեր, և Հայաստանի կառավարությունը համապատասխան քայլեր է ձեռնարկում այդ ոլորտում ևս առաջընթաց արձանագրելու ուղղությամբ:

ԲԿԳ Հայաստանի առաջին գործողությունների ծրագիրը ներառում է մի շարք հավակնոտ նպատակներ և պարտավորություններ: Ինքնագնահատման գործընթացը, որն իրականացվել է ԲԿԳ-Հայաստան գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կողմից, ցույց տվեց, որ այդ հանձնառությունների մեծամասնությունը հաջողությամբ կատարվել է կամ ավարտին կհասցվի մոտ ապագայում:

Նոր գործողությունների ծրագրում ներառված են այն պարտավորությունները, որոնք առավել մարտահրավերային են և դեռևս իրականացման ժամանակ, ջանքեր են նվիրում են պահանջում: Այն նաև արտացոլում է այն փորձը, որը կուտակվել է կառավարության և քաղաքացիական հասա-

րակության ներկայացուցիչների նախադեպը չունեցող համագործակցության արդյունքում, ինչպես նաև քաղված դասերը: Թեև չգրված, սակայն քաղաքացիական հասարակության ներգրավման եւ ԲԿԳ գործընթացին վերջինիս կողմից ցուցաբերվող աջակցության աստիճանի բարձրացումը մեկ այլ պարտավորություն է, որը Հայաստանի կառավարությունը մտադիր է առավելագույն չափով իրականացնել:

ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂԱԾ ՀԱՅՎԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՅՆԵՐԸ

Նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկել է մի շարք քայլեր՝ ուղղված կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության եւ արդյունավետության բարձրացմանը: Այս համատեքստում Բաց կառավարման գործընկերությունը եւս մեկ հնարավորություն է կառավարությունները դարձնել առավել բաց եւ պատասխանատու, ունենալ այնպիսի ինստիտուտներ, որոնք կնպաստեն քաղաքացու ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման եւ քաղաքականության մշակման գործընթացներում:

Առավել թափանցիկ եւ մասնակցային կառավարում ապահովելու նպատակով կառավարությունը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են պետական մարմինների նկատմամբ մարդկանց վստահության մակարդակի, ինչպես նաև պետական պաշտոնյաների պատասխանատվության աստիճանի բարձրացմանը: Մասնավորապես.

Կառավարության որոշումների նախագծերի մշակում. կառավարության որոշման նախագիծ մշակող մարմիններն այսուհետեւ նախագիծը տեղադրում են իրենց ինտերնետային կայքում, որպեսզի հանրությունը դեռեւս քննարկման փուլում իրագեկվի նախագծի վերաբերյալ եւ իր առաջարկություններով մասնակից դառնա կառավարության որոշումների ընդունմանը:

Կառավարության նիստերի օնլայն հեռարձակում. կառավարության նիստերը բաց են լրագրողների համար, դրանք զուգահեռաբար հեռարձակվում են online եղանակով: Մենք ապահովելու ենք կառավարության նիստերի ուղիղ հեռարձակում՝ կառավարության նիստերի դահլիճից կառավարության մամլո ասուլիսների սրահ: Մենք այսօր ունենք հավատարմագրված մեծ թվով լրատվամիջոցներ, որոնք բոլորը հնարավորություն են ունենալու առաջին հարկում գտնվող սրահից հետեւել կառավարության նիստերին՝ օնլայն ռեժիմով: Այնտեղ տեղակայված են համակարգիչներ, որոնցից նրանք ազատորեն պետք է կարողանան օգտվել՝ ապահովելով կառավարության գործունեության հրապարակայնությունը:

ՀՀ վերահսկիչ պալատի գործունեության թափանցիկության ապահովում. այսօր ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքները եւս բաց են ու թափանցիկ: Դրանք գտնված են www.e-gov.am կայքէջում:

Գույքի եւ եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում. այժմ արդեն բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերը հրապարակվում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (www.ethics.am) համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հայտարարագրման ենթակա տվյալների ցանկի: Հանձնաժողովը ստեղծվել է 2012թ. հունվարի 9-ին՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հանձնաժողովն անկախ գործող մարմին է: Հանձնաժողովի առաքելությունը երկրում գործող հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացումն է, «արդար կառավարման» համակարգի ներդրումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեությունը հասարակության համար առավել թափանցիկ ու հրապարակա-

յին դարձնելը:

Ներկայումս Համաշխարհային բանկի հետ համապատասխան ծրագրի շրջանակներում աշխատանքներ են տարվում հայտարարագրման ողջ համակարգի էլեկտրոնայնացման ուղղությամբ: Տվյալ ծրագրի նպատակն է ապահովել հայտարարագրված տվյալների հավաստիությունը, ինչպես նաև հեշտացնել հայտարարագրերի՝ կայքում տեղադրելու գործընթացը:

Պետական կառավարման համակարգում հաշվետվողականության ապահովման նպատակով ներդրվել են նոր սկզբունքներ եւ մոտեցումներ:

Ցանկացած միջոցառում կամ միջոցառումների ծրագիր, որ ներկայացվում է որեւէ պետական մարմնի կողմից, պետք է պարունակի ծրագրի արդյունքների հստակ ձեւակերպում, ընդ որում՝ այդ արդյունքները պետք է լինեն չափելի:

Պետական կառավարման մարմինները պարբերաբար ներկայացնում են կատարողական հաշվետվություններ, որոնց հիման վրա գնահատվում է նրանց իրականացրած աշխատանքը:

Կատարողականի հիման վրա գնահատվում է ոչ միայն պետական մարմնի, այլև ամեն մի աշխատակցի կատարած աշխատանքը:

Մատուցվող ծառայությունների որակի եւ արդյունավետության բարձրացում

ՀՀ կառավարության կողմից մի շարք ոլորտներում իրականացվել են բարեփոխումներ, որոնց նպատակը ՀՀ քաղաքացիների համար որոշ ծառայություններից օգտվելու առավել բարենպաստ պայմաններ ստեղծելն է: Մասնավորապես.

Ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրում եւ փորձաքննության անցկացում. այժմ մինչեւ 2.5 տոննա գյուղատնտեսական մթերք արտահանող անձինք ներկայացնում են ընդամենը 4 փաստաթուղթ, ստանում հավաստագիր 1 աշխատանքային օրվա ընթացքում եւ վճարում 2000 դրամ: Նախկինում ծագման երկրի հավաստագիր ստանալու համար արտահանողները պարտավոր էին ներկայացնել թվով 7 փաստաթուղթ, սպասել 5 աշխատանքային օր եւ վճարել 25-35 հազ. դրամ:

Քաղաքաշինարարական թույլտվություններ. այժմ մինչեւ 1500 քմ շինություն կառուցելու համար թույլտվությունը տրամադրվում է 27 օրում նախկին 5 ամսվա փոխարեն: Իսկ եթե բնակելի տուն կառուցելիս նախագիծը ընտրում եք «ՀՀ համայնքներում բազմակի օգտագործման անհատական բնակելի տների նախագծերի կատալոգից», շինթույլտվություն այլեւս չի պահանջվում: Այդ կատալոգը կարելի է ստանալ յուրաքանչյուր քաղաքապետարանում եւ գյուղապետարանում:

Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ. 2012թ. հունվարի 1-ից գործարկվել է անշարժ գույքի կադաստրի վարման համար նախատեսված՝ «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգը, ինչպես նաև հանրությանը անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, որը, ի թիվս այլ էլեկտրոնային ծառայությունների, հնարավորություն է տալիս նաև էլեկտրոնային եղանակով ներկայացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները:

Միասնական վճարումների համակարգի ներկայացում (պորտալ). վճարումների պետական էլեկտ-

րոնային համակարգը (www.e-payments.am) ներդրվել է գործարկվում է ՀՀ կառավարության 2012թ. որոշմամբ: E-payments համակարգը հնարավորություն է ընձեռում բոլոր պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կատարել էլեկտրոնային եղանակով:

Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ՝ մեքենաների գրանցման, վարորդական իրավունքի տրամադրման, տուգանքների եւ վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրում. ստեղծվել է մեկ միասնական կենտրոն, որտեղ կենտրոնացված են պետավտոտեսչության կողմից իրականացվող բոլոր գործառնություններն ու մատուցվող ծառայությունները: Կենտրոնը հնարավորություն է ընձեռում իրականացնելու այնպիսի գործարքներ, ինչպիսիք են մեքենայի գրանցում, վարորդական իրավունքի տրամադրում, տեխնիկական անձնագրի ձեռքբերում, առքուվաճառք եւ այլն:

Կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում (Կարգավորման Guillotine ծրագիր). ՀՀ կառավարության՝ 2011թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ ստեղծվել է ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի նպատակն է Եականորեն թեթեւացնել բիզնեսի եւ քաղաքացիների վրա ընկնող կարգավորումների բեռը՝ առնվազն երկու անգամ կրճատելով գործառնական ծախսերը:

Կառույցն իր գործունեության ընթացքում նկարագրում է պետության հետ բիզնեսի եւ քաղաքացիների փոխհարաբերությունները, համադրում դրանք միջազգային լավագույն փորձի հետ, կարգավորման բեռի թեթեւացման նպատակով համապատասխան պետակա կառավարման մարմինների հետ պատրաստում առաջարկությունների փաթեթ, այն քննարկում բիզնես ոլորտի, հասարակական կազմակերպությունների հետ եւ ներկայացնում Բարեփոխումների խորհրդի հաստատմանը:

Ծրագրի արդյունքում կկրճատվի կարգավորում պարունակող իրավական ակտերի նվազագույնը 30 տոկոսը, մնացած կարգավորումների 20-30 տոկոսն էականորեն կպարզեցվի, ինչի արդյունքում զգալիորեն կնվազի բիզնեսի եւ քաղաքացիների ուսերին ընկնող ֆինանսական բեռը:

Տեսչական բարեփոխումներ

Ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգայցերի հաճախականությունը խիստ սահմանափակվել է.

Տարին 1 անգամ՝ բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների մոտ,

3 տարին 1 անգամ՝ միջին ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների մոտ,

5 տարին 1 անգամ՝ ցածր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների մոտ:

Այսուհետ ստուգում իրականացնող պետական մարմինները պարտավոր են մինչեւ ստուգումներին նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը հաստատել եւ իրենց պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել ստուգումների տարեկան ծրագիրը (բացառությամբ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող ստուգումների): Ինչպես նաեւ մինչեւ յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը ստուգում իրականացնող մարմինները հրապարակելու են նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների վերաբերյալ հաշվետվություն: Տարեկան պլանից դուրս ստուգումները անց են կացվելու բացառապես օրենքով սահմանված հստակ դեպքերում՝ թվով ինը:

Հարկերի վճարում

Շահութահարկի եւ եկամտահարկի կանխավճարները եւ նվազագույն վճարումները կրճատվել են 8-ով: Այդ վճարումները կատարվում են եռամսյակային կտրվածքով (տարեկան 4 անգամ)՝ նախկին ամենամսյա (տարեկան 12 անգամ) վճարումների փոխարեն:

Գույքահարկի եւ հողի հարկի վճարումները կրճատվել են 2-ով: Այդ վճարումները կատարում են կիսամսյակային կտրվածքով (տարեկան 2 անգամ)՝ նախկին եռամսյակային փոխարեն (տարեկան 4 անգամ):

Ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, անկախ ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից, այսուհետ չեն ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ (Ձեւ1 եւ Ձեւ2) հարկային մարմին:

Անկախ վարձու աշխատողների քանակից՝ գործատուները հարկային մարմին պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվետվությունները ներկայացնում են եռամսյակային կտրվածքով՝ նախկին ամենամսյա (տարեկան 12 անգամ) վճարումների փոխարեն:

Ոչ ռեզիդենտներին եկամուտներ վճարելիս հարկային գործակալները վճարված եկամուտների եւ պահված շահութահարկի վերաբերյալ ամփոփ հաշվարկը ներկայացնում են տարեկան կտրվածքով՝ նախկին եռամսյակային փոխարեն (տարեկան 4 անգամ):

ԱԱՀ ամսական հաշվետվության ներկայացման պահանջը վերացվել է այն տնտեսվարողների համար, որոնց տարեկան շրջանառությունը փոքր է 100 մլն դրամից՝ նախկին 60 մլն դրամի փոխարեն:

Պետական մարմինների կողմից ստուգայցեր

Ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգայցերի հաճախականությունը խիստ սահմանափակվել է.

Տարին 1 անգամ՝ բարձր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների մոտ,

3 տարին 1 անգամ՝ միջին ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների մոտ,

5 տարին 1 անգամ՝ ցածր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների մոտ:

Ոչ պլանային ստուգումները անց են կացվում բացառապես հստակ դեպքերում՝ թվով ինը:

ԲԿԳ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդարադատության ոլորտ

Էլեկտրոնային նոտարի ամբողջական համակարգի ներդրում
 Էլեկտրոնային ԶԿԱԳ համակարգի ներդրում
 Տարածքային կառավարման ոլորտ

Հայաստանի Հանրապետության թվով 250 համայնքներ կմիանան «Mulberry» Էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգին, թվով 200 համայնքներում կգործարկվեն համացանցային կայք-էջերը:

Մշակույթի ոլորտ

Մշակութային ծառայությունների ոլորտում տեղեկատվության եւ ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ կշարունակվի մշակութային ժառանգության թվանշայնացման գործընթացը, ինչը հնարավորություն է ստեղծում իրականացնել թանգարանային արժեքների հանրահռչակումը տեղեկատվական շտեմարանների կայքերի եւ վիրտուալ ցուցադրությունների միջոցով:

Պաշտպանության ոլորտ

Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես կմիանա ՆԱՏՕ-ի հովանու ներքո իրականացվող «Բարեվարքության ամրապնդում» Նախաձեռնությանը: Նախաձեռնության նպատակը պաշտպանության ոլորտում կոռուպցիայի նվազեցումն ու բաց կառավարման էթիկայի բարելավումն է:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի ոլորտ

Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում

Ի գիտություն.

2012 թվականից ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով, հնարավորություն տալով ՀՀ քաղաքացիներին աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող որեւէ հարցով դիմել միասնական ընդունարան եւ ստանալ հնարավոր խնդիրների լուծումը, բացառելով դրամական վճարների (կենսաթոշակներ, նպաստներ կամ դրամական օգնություն) համար դիմելիս քաղաքացի-սոցիալական աշխատող անմիջական կապը, դրանով նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: 2013թ. օգոստոսի դրությամբ հանրապետությունում գործում են ինտեգրված սոցիալական ծառայությունների 19 կենտրոններ, եւս 35 կենտրոններ նախատեսվում է ձեւավորել մինչեւ 2017թ.:

Քաղաքաշինության ոլորտ

Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման Էլեկտրոնային համակարգի ներդրում եւ համայնքների կողմից դրանց փուլային գործարկում.

Ի գիտություն.

Հանրապետությունում շինարարական թույլտվությունների Էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքներին աջակցելու նպատակով ՀՀ վարչապետի 2013թ. հուլիսի 10-ի N548-Ս որոշմամբ

ստեղծվել է աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է մշակել եւ սահմանված ժամկետում ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով ներկայացնել շինարարական թույլտվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը:

Պետական եկամուտների ոլորտ

Մաքսային ձեւակերպման ոլորտում՝ նախնական հայտարարագրման եւ ամբողջովին էլեկտրոնային հայտարարագրման համակարգերի ներդրում:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման ոլորտ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց թղթային տարբերակով ներկայացվող հայտարարագրերից անցում հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգի, ինչպես նաեւ նշված հայտարարագրերի ավտոմատ կերպով հրապարակայնացում հանձնաժողովի կայքէջի միջոցով:

Էներգետիկայի եւ բնական պաշարների ոլորտ

Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերության էլեկտրոնային շտեմարանի ներդրում:

1.1.1. ՀՀ քաղաքացիական հասարակությունից Կառավարությանը 2013թ., սեպտեմբերին ներկայացված ԲԿԳ-Հայաստան 2014-2016 թթ. գործողությունների ծրագրի լրացման առաջարկությունները եւ համապատասխան պետական մարմիններից արձագանքը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի առաջարկները⁴

Ա. Հայաստանում տեղական ինքնակառավարման ոլորտում

1. Տարածքային եւ տեղական ինքնակառավարման բարեփոխումների հայեցակարգերի եւ օրենսդրության նախագծերի մշակումները դարձնել հանրամատչելի, հանրային, ոչկառավարական մասնագիտական եւ ոչմասնագիտական մասնակցություն ապահովել բոլոր հանրավոր եղանակներով:

2. Պարտադրել տեղական ինքնակառավարման մարմիններին կատարել ՏԻՄ եւ բյուջետային օրենսդրություններով սահմանված պարտավորությունները, այդ թվում.

2.1. Հանրային պատշաճ իրազեկում ապահովել կայանալիք ավագանու նիստերի մասին, հրապարակելով հրապարակային ծանուցումները,

2.2. Պատշաճ պայմաններ (տարածք, նստատեղեր եւ այլն) ապահովել ավագանու նիստերին հանրության ազատ, առանց խոչընդոտների մասնակցության համար,

2.3. Բոլոր համայնքներում սահմանել ավագանու նստավայրեր, դրանցում՝ համապատասխան, օրենքով սահմանված պարտադիր հրապարակումների ծավալներով:

2.4. Համայնքներում հանրային լսումներ-քննարկումներ իրականացնել Համայնքի զարգացման տարեկան բյուջեների, քառամյա ծրագրերի եւ համայնքային կարեւոր խնդիրների եւ դրանց լուծումների մասին, ապահովելով հանրության պատշաճ մասնակցությունը դրանցում եւ լայն հանրային իրազեկումը, ինչպես մինչեւ քննարկումը, այնպես էլ քննարկումների ընթացքի եւ արդյունքների մասին:

2.5. Բոլոր համայնքներում ընդունել ավագանիների՝ օրենքով նախատեսված կանոնակարգը (գործունեության աշխատանքային փաստաթուղթը),

2.6. Բոլոր համայնքներում ընդունել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

3. Պարտադրել տեղական ինքնակառավարման մարմիններին կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտավորությունները, ինչպես տեղեկությունների հանրայնացման/ տրամադրման պրոակտիվ ռեժիմով (հոդված-7) այնպես էլ քաղաքացիների բանավոր եւ գրավոր հարցումներին պատասխանելու ռեակտիվ ռեժիմով (հոդված-9).

4. Պարտադրել տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող եւ համայնքային բյուջեից ֆինանսավորվող բոլոր կազմակերպություններին (ՓԲԸ, ՀՈԱԿ)՝ մակապարտեզներ, արվեստի, երաժշտական, սպորտի դպրոցներ, թանգարաններ, գրադարաններ եւ այլն, կատարել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված պարտավորությունները, ինչպես տեղեկությունների հանրայնացման/տրամադրման պրոակտիվ ռեժիմով, այնպես էլ քաղաքացիների բանավոր եւ գրավոր հարցումներին պատասխանելու ռեակտիվ ռեժիմով:

5. Օրենսդրական բարեփոխումներ կատարել հետեւյալ ուղղություններով.

5.1. ՀՀ ընտրական օրենսգրքում եւ տեղական ինքնակառավարման մասին օրենքում վերականգնել համայնքապետերի՝ 2-ից ավելի անգամ անընդմեջ համայնքապետ ընտրվելու սահմանափակումը՝ այդպիսով վերացնել համայնքապետերի ցմահ վերընտրության հնարավորությունը:

5.2. Օրենքով սահմանել ՏԻՄ մարմինների՝ համայնքապետերի եւ ավագանու անդամների շահերի բախումը, նկարագրել հնարավոր բախումների հանգամանքները, համապատասխան արգելքների սահմանամբ:

5.3. Օրենքով սահմանել ՏԻՄ մարմինների՝ իրականացրած գնումների, մրցույթների, ծախսերի բոլոր մանրամասները՝ մատակարարները, մրցութային պայմանները, ծախսը, ձեռք բերված ապրանքները կամ ծառայությունը:

5.4. Օրենքով սահմանել ավագանու նիստերի ուղիղ ինտերնետային հեռարձակումը որպես համայնքային իշխանությունների պարտավորություն:

Բ. Հեռուստառադիոհեռարձակման ոլորտում

1. Օրենսդրական փոփոխություններով պարտադիր դարձնել հեռուստա/ռադիոկայանների սեփականատերերի անձանց հրապարակումը՝ ունեցած մասնաբաժիններով, եւ՝ դրանց փոփոխությունները դարձնել հրապարակային 10-օրյա ժամկետներում:

2. Օրենսդրական փոփոխություններով առավել հրապարակայնություն ապահովել հեռուստառադիոընկերությունների եկամուտների մասին՝ սկսած նույն աղբյուրից տարեկան մեկ եւ առավել տոկոս կազմող եկամուտներից, հրապարակելով եկամուտների աղբյուրները եւ չափերը:

3. Պարտավորեցնել ՀՀ լիազոր մարմինն՝ տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝ տարեկան առնվազն մեկ անգամ հրապարակել Հայաստանի թափուր եւ զբաղեցված հեռուստառադիոհաճախականությունների ցանկը:

4. Օրենսդրական փոփոխություններով ՀՌԱՀ-ի համար որպես պարտավորություն սահմանել մինչ օրս տեղի ունեցած հեռուստառադիոհաճախականությունների բոլոր մրցույթների հայտատուների եւ հետագա բոլոր մրցույթների մրցութային փաթեթների ամբողջական հրապարակումը:

5. Օրենսդրական փոփոխություններով ՀՌԱՀ-ի անդամների համար սահմանել էթիկական ստանդարտներ, քաղաքական անկախության եւ շահերի բախման կանխարգելման մեխանիզմով:

6. Թվային հեռարձակման անցման մասով.

6.1. Թվայնացման անցման ռազմավարություն մշակել եւ ներկայացնել հանրությանը:

6.2. Թվայնացման գործընթացը դարձնել թափանցիկ եւ հաշվետու, ապահովել հանրային հանգամանալից իրազեկում թվայնացման անցման մասին:

7. Հայաստանի հանրային հեռուստաընկերության մասով՝ օրենսդրական փոփոխություններով.

7.1. Հիմնական հեռուստաալիքը օրենքով ազատել առևտրային գովազդից, լրացուցիչ հատկացնելով համապատասխան գումար պետական բյուջեից, արդյունքում հանրությունը կշահի տարեկան մոտ 630 ժամ հանրային եթերաժամանակ (մոտ 27 ամբողջական օր), կվերանա գովազդ իրացնող ընկերության/ընկերությունների հետ կապված կոռուպցիոն ռիսկը:

7.2. Սահմանել ֆինանսական եկամուտների, ծախսերի, գնումների, մրցույթների, հեռուստահաղորդումների, աշխատակազմի ձեւավորման եւ փոփոխման մասին առավել մանրամասն պարտադիր հաշվետվողականություն, քան նախատեսված է գործող օրենսդրությամբ:

7.3. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմում նշանակել միայն այն անձանց, ովքեր կունենան ոլորտային հասարակական կազմակերպություններից առնվազն 5-ի երաշխավորությունը, կամ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմից 2 հոգուն նշանակել անձանց՝ միայն ոլորտային հասարակական կազմակերպությունների առաջադրած ցուցակից:

8. Պարտադրել ՀՌԱՀ-ին կատարել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքով նախատեսված իր պարտականությունները, մասնավորաբար.

8.1. Որակյալ վերահսկողություն իրականացնել լիցենզավորված հեռուստառադիո ընկերությունների մրցութային հայտերում բերված պայմանների եւ լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ: Վերահսկողության մասին հրապարակել հանրային կիսամյակային հաշվետվություններ:

8.2. Որակյալ վերահսկողություն իրականացնել հեռուստառադիոհեռարձակման ոլորտում ՀՀ գովազդային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողության մասին հրապարակել հանրային կիսամյակային հաշվետվություններ:

8.3. Հրապարակել մինչ օրս տեղի ունեցած հեռուստառադիոհաճախականությունների բոլոր մրցույթների հայտատուների մրցութային փաթեթները:

9. Տեղեկատվության ազատության եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի մասով.

9.1. Տեղեկություն տնօրինողներին պարտադրել կատարել օրենքով նախատեսված սեփական պարտականությունները տեղեկությունների տրամադրման պրոակտիվ եւ ռեակտիվ ռեժիմներում:

9.2. Կառավարության կողմից ընդունել օրենքով նախատեսված՝ տեղեկությունների մշակման, դասակարգման, պահպանման եւ տրամադրման կարգը:

9.3. Պետական իշխանության մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների վեբ կայքերը բերել նույնական ստանդարտների:

9.4. Մինչեւ 5.000 բնակչությամբ համայնքների համար ապահովել պաշտոնական վեբ կայքեր:


10. Գովազդային օրենսդրության եւ համապատասխան օրենքներում կատարել լրացումներ, որոնցով կսահմանվի քողարկված գովազդը որպես հարկային զանցանք, կսահմանվի գովազդի ապրանքանիշի անուղղակի տեղադրման (product placement) գովազդի տեսակը:

11. Պետությունից տպագիր լրատվամիջոցներին հատկացվող օժանդակությունները դարձնել այդ լրատվամիջոցների վճարած հարկերի համամասնությամբ եւ պարտադիր՝ հրապարակվող:

Գ. Այլ եւ խառը

1. Օրենսդրական փոփոխություններով ներքին աուդիտի եւ պետական մարմինների կողմից պետական եւ համայնքային բյուջետային հիմնարկների աուդիտորական եւ այլ ստուգումների արդյունքները/եզրակացությունները դարձնել հրապարակային:
2. Հրապարակային դարձնել պետական եւ համայնքային հիմնարկների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից/մասնակցությամբ ստեղծված բոլոր հիմնադրամների գործունեությունը, եկամուտների եւ ծախսերի մանրամասն տարեկան հաշվետվողականությամբ:
3. Գույքի եւ եկամուտների մասին տարեկան հայտարարագրերի համակարգ ներդնել Հայաստանի բոլոր համայնքապետերի եւ 30.000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների ավագանիների անդամների համար:
4. Հրապարակային դարձնել ոստիկանության, դատախազության, դատարանական եւ քրեակատարողական համակարգերի կառուցվածքը, կադրային կազմը, թվակազմը:
5. Բանակի համար արված գնումները՝ բացառությամբ գեներալի, զինամթերքի եւ հարակից նյութերի գնումների, օրենսդրության փոփոխություններով դարձնել հրապարակային:
6. Դատախազության, Ոստիկանության, ԱԱԾ, դատարանական եւ քրեակատարողական համակարգերի գնումները օրենսդրության փոփոխություններով դարձնել հրապարակային:
7. Բարեփոխել պետական եւ համայնքային կարիքների համար գնումների քաղաքականությունը, այն դարձնելով առավելագույնս թափանցիկ, հրապարակային դարձնել հրատապ գնումները եւ դրանց հիմնավորումները:

1.1.2. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի առաջարկներին՝ ՀՀ կառավարության եւ գերատեսչությունների պատասխանները⁵:



**STAFF OF THE GOVERNMENT
OF THE REPUBLIC OF ARMENIA**

Government House 1, Yerevan-10, Republic Square

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

Երևան-10, Հանրապետության հր., Կառավարական տուն 1

« 19 » 12 2013թ.

№ 02/12.9/19491-13

Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ»
ակումբի խորհրդի նախագահ
պարոն Լևոն Բարսեղյանին


Հարգելի պարոն Բարսեղյան,

Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի առնչությամբ Ձեր կողմից ներկայացված առաջարկությունները ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ուղարկվել են ՀՀ իրավասու պետական մարմիններին՝ քննության առնելու նպատակով:

Կից ներկայացվում են համապատասխան գերատեսչություններից ստացված պատասխանները վերոնշյալ առաջարկությունների վերաբերյալ:

Առդիր՝ 17 էջ:

Հարգանքով՝



Տիգրան Գևորգյան

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի առաջին տեղակալ,
ԲԿԳ հայաստանյան համակարգող



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358
Վեբ կայք՝ www.minfin.am

№ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
պարոն ՎԱԶԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 26.11.2013թ.

№ 02/12.9/18069-13 հանձնարարականի

Հարգելի պարոն Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը ժողովրդի «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանի կողմից ներկայացված առաջարկությունների (այսուհետ՝ Առաջարկություններ) վերաբերյալ, իր իրավասությունների շրջանակներում, ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը.

1. Առաջարկությունների «Բ» բաժնի 7-րդ կետի 7.1. ենթակետով առաջարկվում է հիմնական հեռուստաալիքը օրենքով ազատել առևտրային գովազդից, լրացուցիչ հատկացնելով համապատասխան գումար պետական բյուջեից, որը կարծում ենք առանձին քննարկման անհրաժեշտություն ունի, ինչպես նապատակահարմարության, այնպես էլ պետական բյուջեից տրամադրվող լրացուցիչ հատկացումների տեսանկյունից:

2. Նույնը վերաբերում է նաև «Բ» բաժնի 11-րդ կետով ներկայացված Առաջարկությանը, որով առաջարկվում է պետությունից տպագիր լրատվամիջոցներին հատկացվող օժանդակությունները դարձնել այդ լրատվամիջոցների վճարած հարկերի համամասնությամբ և պարտադիր հրապարակվող: Բացի այդ, Առաջարկության գծով անհրաժեշտ է ունենալ նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության դիրքորոշումը:

3. Առաջարկությունների «Գ» բաժնի 1-ին կետով առաջարկվում է կատարել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որից հետո հնարավոր կլինի ներքին աուդիտի և պետական մարմինների կոմից պետական և համայնքային բյուջետային հիմնարկների աուդիտորական և այլ ստուգումների արդյունքները (եզրակացությունները) դարձնել հրապարակային, որի կապակցությամբ հայտնում ենք, որ «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ աուդիտորական եզրակացությունը գաղտնիք չպարունակող փաստաթուղթ է, որի հրապարակման անհրաժեշտությունը որոշում է աուդիտի ենթարկվող անձը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքի (minfin.am) «Հաշվետվություններ» բաժնում հրապարակվում են աուդիտորական գործունեության վերաբերյալ որոշակի հաշվետվություններ:

4. Առաջարկությունների «Գ» բաժնի 2-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածով սահմանված են հիմնադրամների գործունեության հրապարակայնության վերաբերյալ դրույթներ:

5. Առաջարկությունների «Գ» բաժնի 5-7-րդ կետերի կապակցությամբ հայտնում ենք, որ գնումների պլանների հրապարակման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները հաշվի առնելով, մասնավորապես՝ դրանք հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Հարգանքով՝

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝

Գ. Օսիպյան՝ (060) 700-261



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱԽԱԶԻ
ՏԵՂԱԿԱԼ

№ 3/6-005-13

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5

«04» 12 2013թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պարոն Վ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆԻՆ»

Հարգելի պարոն Գարրիելյան

Ձեր 26.11.2013թ. հ/հ 02/12.9/18069-13 գրության կապակցությամբ հայտնում ենք, որ կից ուղարկված փաստաթղթի Գ բաժնում նշված՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով հրապարակայնության ապահովման հետ կապված «ՀՀ գլխավոր դատախազությունը սկզբունքային առարկություններ չունի: Հայտնում ենք նաև, որ գրության Գ բաժնի 5-րդ կետում նշված օրենսդրական փոփոխությունները՝ կապված բանակի համար արված գնումների հետ, ենթակա են լրացուցիչ քննարկման:

Հարկ է նշել նաև, որ գրության մեջ նշված հարցադրումներին առավել հանգամանալից հնարավոր է անդրադառնալ կոնկրետ օրենսդրական փոփոխությունների նախագծերի առկայության պարագայում:

Հարգանքով՝

Արդարադատության առաջին
դասի խորհրդական

Է. ԲԱՐԱՅԱՆ

Հ.Հ. ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԵՆՏՐԱԼՆԵՐ
05 12 2013
072-34371



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

0078 Երևան, Հալաբյան 41^ա, հեռ. 380389
Էլ. փոստ press@moj.am

**ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար պարոն Վ. Գաբրիելյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 26-ի
թիվ 02/12.9/18069-13 հանձնարարականի

Հարգելի պարոն Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն ուսումնասիրել է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանի կողմից ներկայացված գրությունը, որում տեղ գտած ՀՀ արդարադատության նախարարության իրավասության շրջանակներում գտնվող առաջարկությունների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

Գրության «ա» կետի 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով արված առաջարկությունների վերաբերյալ.

ՀՀ Սահմանադրությամբ նույն անձի՝ երկու անգամ անընդմեջ ընտրվելու սահմանափակումը նախատեսված է բացառապես Հանրապետության Նախագահի համար /50-րդ հոդվածի 3-րդ մաս/:

ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու և քաղաքացու՝

Սահմանադրության 30-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքները ևս կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Համադրելով ընտրվելու իրավունքի սահմանափակումներին վերաբերող ՀՀ Սահմանադրության վերը հիշատակված դրույթները՝ գտնում ենք, որ համայնքի ղեկավարի համար վերընտրվելու սահմանափակում նախատեսելն արդարացված չէ, քանի որ չի բխում այդ դրույթների համակարգային տրամաբանությունից, բացի այդ՝ համաչափ չէ ժողովրդավարական հասարակությունում ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար: Նման սահմանափակումները նախատեսվում են հիմնականում այնպիսի պաշտոնների համար, որոնցում անսահմանափակ երկարատև պաշտոնավարումը կարող է հանգեցնել ընտրովիության և փոփոխելիության սկզբունքների խաթարմանը:

Անդրադառնալով համայնքապետերի և ավագանու անդամների շահերի բախման հարցին՝ հայտնում ենք հետևյալը:

Եթե խոսքը վերաբերում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով շահերի բախմանը, ապա այդ կարգավորումները տրված են հիշատակված օրենքի համապատասխան դրույթներով:

Իսկ եթե առաջարկությունն առնչվում է համայնքապետի և ավագանու անդամների միջև ծագած իրավասությունների, լիազորությունների վերաբերյալ տարաձայնություններին, ապա նշենք, որ առաջարկության բովանդակությունից հստակ չէ, թե կոնկրետ որ լիազորությունների հետ կապված շահերի բախմանն է այն վերաբերում: Իսկ, եթե այդպիսիք կան, ապա գտնում ենք, որ այդ հարցերը ենթակա են կարգավորման սահմանադրական բարեփոխումների շրջանակներում, ինչից հետո միայն հնարավոր կլինի օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելը:

Ինչ վերաբերում է գրության «բ» կետի 7.1-րդ ենթակետով կատարված

առաջարկությանը, հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից արդեն իսկ մշակվել և շահագրգիռ մարմիններին է ներկայացվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով նախատեսված են առաջարկվող կարգավորումները ևս:

Մասնավորապես՝ հասարակական կյանքում հանրային հեռուստատեսության տեղն ու դերը, համբավը ավելի բարձրացնելու նպատակով, վերոնշյալ նախագծով հանրային հեռուստատեսությամբ առևտրային գովազդի ցուցադրումն արգելվել է:

Նույն կետի 9.2-րդ ենթակետի առաջարկության վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետևյալը:

Չնայած այն հանգամանքին, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման իրականացման կարգի սահմանումը վերապահված է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, այնուհանդերձ, նկատենք, որ նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով տեղեկատվություն տալու կարգը մշակելու իրավասությունը տրված է կոնկրետ տեղեկատվությունը տնօրինողին:

Իսկ հիշյալ օրենքի 12-րդ հոդվածի առաջին պարբերության 2-րդ կետով սահմանված է, որ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է նաև օրենքով սահմանված կարգով իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը:

Այսինքն՝ տեղեկատվություն տնօրինողը, ըստ էության, օրենքի ուժով պարտավոր է իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը իրականացնել *օրենքով սահմանված կարգով, այլ ոչ թե կառավարության որոշմամբ սահմանված կարգով:*

Կարծում ենք, որ օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով տեղեկատվություն տնօրինող հանդիսացող մարմինների քանակից ու նրանց առանձնահատկություններից ելնելով հնարավոր չէ սահմանել տեղեկությունների մշակման, գրանցման,

դասակարգման, պահպանման և տրամադրման վերաբերյալ մեկ միասնական կարգ:

Գրության «գ» կետի 4-րդ ենթակետով քրեակատարողական համակարգի մասով արված առաջարկության վերաբերյալ.

Կարծում ենք, որ քրեակատարողական համակարգի կառուցվածքը, կադրային կազմը, քրեակատարողական վարչության՝ հատուկ ռեժիմ ապահովող ստորաբաժանումների կառուցվածքը և դրանց ծառայողների թվակազմը հրապարակային դարձնելը արդարացված չէ՝ նկատի ունենալով քրեակատարողական համակարգում պետական ծառայության հիմնական խնդիրներն ու գործառույթային առանձնահատկությունները:

Գրության «գ» կետի 6-րդ ենթակետով քրեակատարողական համակարգի մասով արված առաջարկության վերաբերյալ.

Քրեակատարողական համակարգի գնումների մասով օրենսդրության փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ քրեակատարողական ծառայության գնումները հրապարակային են և իրականացվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Հարգանքով՝



Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան -1, Նալբանդյան փ. 104

№ 11/1065

« 05 » 12 2013թ.

Օր. թ.

«Կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պարոն Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ»

Ի կատարումն «վարչապետի 26.11.2013թ.
N02/12.9/18069-13 հանձնարարականի

Հարգելի պարոն նախարար

Հայաստանի ԲԿԳ առաջիկա գործողությունների ծրագրի համար ժողովախոստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանի առաջարկությունների վերաբերյալ հայտնում եմ, որ «ազգային անվտանգության ծառայության համակարգի համար կատարվող գնումներն ամբողջովին հրապարակային դարձնելը նպատակահարմար չէ՝ ելնելով ծառայության գործունեության առանձնահատկություններից:

Հարգանքով՝

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ.Հ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ
053-34376
05 12 2013



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/2352
Ձեռ

« 03 » 12 2013 թ.
ՍՊԸ
016-34217
04 12 2013

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար - նախարար
պարոն Վ. Գաբրիելյանին**


Հ ա Ր Գ Ե Ղ Ի պ ա Ր Ո Ն Գ ա բ Ր Ի Ե Ղ Յ Ա Ն

Ի կատարումն ՀՀ վարչապետի 26.11.2013 թվականի 02/12.9/18069-13 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում ուսումնասիրվել են ԲԿԳ մախաձեռնության շրջանակներում ժողովախոսքերի «Ասպարեզ» ակումբի խորհրդի առաջարկությունները Հայաստանի Հանրապետության գործողությունների նոր ծրագրի վերաբերյալ:

Առաջարկությունների Գ կետի 4-րդ ենթակետի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանության կառուցվածքում ընդգրկված են ինչպես ՀՀ ոստիկանության գործերը, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներ, որոնց մասին տվյալները «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն համարվում են պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկություններ, և այդ հարցերը կարգավորվում են վերը նշված օրենքի համապատասխան դրույթներով: Միաժամանակ, ՀՀ ոստիկանության www.police.am պաշտոնական կայքեջի «Համակարգ» բաժնի «Ղեկավարություն»¹: «Ստորաբաժանումներ» ենթաբաժիններում հրապարակվում են ՀՀ ոստիկանության ղեկավար կազմի, կենտրոնական ապարատի, ոստիկանության Երևան քաղաքի վարչության, ոստիկանության մարզային վարչությունների և

տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ: Ինչ վերաբերում է Գ կետի 6-րդ ենթակետին, ապա ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքի «Բյուջե» և «Գնումներ» ենթաբաժիններում ըստ հաշվետու ժամանակահատվածների հրապարակվում են ՀՀ ոստիկանության բյուջեի կատարողականները՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների և ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցումից ստացված արտաբյուջետային եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկությունների, և ոստիկանության գնումների ընթացակարգերի առնչությամբ հայտարարված մրցույթների վերաբերյալ հայտարարությունները, որոնք միաժամանակ հրապարակվում են նաև ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am կայքէջում:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ



Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատարող՝ Իրավաբանական վարչություն
Ս. Մարտոյան հեռ՝ 59-68-39



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

“.....” 2013թ.

N.....

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
պարոն Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆԻՆ

ՀՀ վարչապետի՝ 27.11.2013թ.
N 02/12.9/18069-13

Հարգելի պարոն Գաբրիելյան

Նախ և առաջ, մեր երախտագիտությունն ենք հայտնում ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լ. Բարսեղյանին՝ տեղական ինքնակառավարման բնագավառի խնդիրները շահագրգիռ կերպով վերհանելու և առաջարկությամբ հանդես գալու համար:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության 2014-2016 թթ. Հայաստանի Հանրապետության գործողությունների ծրագրի նախագծում ընդգրկելու նպատակով վերջինիս կողմից արված առաջարկությունների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

Լ. Բարսեղյանի առաջարկությունները պայմանականորեն կարելի է բաժանել 2 խմբի. օրենսդրական նախաձեռնությունների և գործող օրենսդրության կիրարկման և դրա նկատմամբ՝ վերահսկողության: Գտնում ենք, թե՛ առաջինը, թե՛ երկրորդը չեն բավարարում «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության գործողությունների ծրագրի չափանիշներին: Բացի այդ, հարկ է նշել, որ ծրագիրը նախատեսված է իրականացնել 2014-2016 թվականների ընթացքում, իսկ ներկայացված առաջարկությունների մի մասը (օրենսդրական) պահանջում է իրականացման անորոշ ժամկետ (նախագծերը պետք է մշակվեն, համաձայնեցվեն շահագրգիռ մարմինների հետ, քննարկվեն տարբեր հարթակներում, ներկայացվեն ՀՀ Ազգային ժողով և այլն), իսկ մյուս մասը (օրինակ, ավագանու նիստերին մասնակցելու համար պայմաններ, ինչպես նաև նիստերի ուղիղ հեռարձակման հնարավորություն ստեղծելու) պահանջում է ֆինանսական և այլ ռեսուրսներ,

ինչի առկայությունը նույնպես հնարավոր չէ կանխատեսել և դրանց կատարման վերաբերյալ ստանձնել հստակ պարտավորություններ:

Գրությամբ բարձրացված բոլոր հարցերն էլ գտնվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարության ուշադրության կենտրոնում. մի մասն արդեն իսկ ընթացքի մեջ է (մասնավորապես, տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ կազմակերպելու, համայնքի բնակիչների համար բավարար պայմաններ ստեղծելու՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց օրենսդրական պահանջներն ապահովվել են): Մյուս մասը (հիմնականում՝ վերահսկողական) իրականացվում է և ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ մարզպետարանների կողմից՝ հաստատած ամենամյա աշխատանքային ծրագրերին համապատասխան:

Ինչևիցե, նման նախաձեռնությունների նկատմամբ մեր պատրաստակամությունը հայտնել ենք բազմիցս, և այսուհետ ևս ակնկալում ենք համագործակցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս կողմից ռացիոնալ առաջարկություններ ստանալով՝ ինչի արդյունքում համայնքները միմիայն կշահեն:

Հարգանքով՝



Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

N

«.....»2013թ.

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պարոն Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 02/12.9/18069-13 հանձնարարականի՝ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի 20.08.2013թ. գրությամբ ՀՀ Կառավարություն ներկայացրած ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը առնչվող առաջարկությունների վերաբերյալ հայտնում եմ հետևյալը՝

Առաջարկությունների Բ. գլխի Հեռուստառադիոհեռարձակման ոլորտում բաժնի 3-րդ կետում ներկայացված առաջարկությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն վերապահված է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին, որպես հեռուստառադիոընկերություններ լիցենզավորող և դրանց հաճախականություններ տրամադրող լիազորված պետական մարմին:

Վերը նշված բաժնի 6-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ-ում վերգետնյա թվային հեռուստառադիոհեռարձակման համակարգին անցումը հրապարակային է և հանրությանը հասանելի, քանի որ ՀՀ-ում վերգետնյա թվային հեռուստառադիոհեռարձակման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության ընդունած որոշումներով: Միաժամանակ ՀՀ-ում վերգետնյա թվային հեռուստառադիոհեռարձակման համակարգի անցման գործընթացին առնչվող պետական մարմինները բազմիցս մասնակցել են քննարկումների, հանդես եկել հայտարարություններով, տվել հարցազրույցներ: Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից նախատեսվում է իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ:

Հարգանքով՝

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



կատարող՝ կապի և տեղեկատվայնացման
վարչության կապի բաժին 590063



Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Դեռ.՝ (374 10) 59 00 03, Ֆաքս՝ (374 10) 56 13 87, էլ. փոստ՝ a.aleksanyan@mtc.am



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱԹԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Երևան, Ալեք Մամուկյան 5
հեռ/ ֆաքս 578 502
№ 12 - 003

«10», 12 . 2013 թ.

Հայաստանի Հանրապետության
Կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պարոն Գաբրիելյանին

Հարգելի՛ պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան Ձեր 26.11.2013 թ-ի թիվ 02/12.9/18069-13 հանձնարարականի՝ կապված ժողովախոսքների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանի գրության հետ, ներկայացնում ենք Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի դիրքորոշումն ընկերության ոլորտին առնչվող առաջարկությունների վերաբերյալ:

- Հանդիսանալով Հանրային հեռուստաընկերություն և ֆինանսավորվելով ՀՀ պետական բյուջեից՝ Հեռուստառադիոհեռարձակման ոլորտի 1-2 կետերում առաջարկություններ չունենք:
- Հեռուստառադիոհեռարձակման ոլորտի 3-5-րդ կետերը դուրս են հեռուստառադիոխորհրդի լիազորությունների շրջանակից:
- Հեռուստառադիոհեռարձակման ոլորտի 6-րդ կետի՝ թվային հեռարձակման անցման մասով, առաջարկում ենք մշակել նշված գործընթացի ռազմավարություն և իրականացնել հանրության հանգամանակից իրազեկման միջոցառումներ:
- Հեռուստառադիոհեռարձակման ոլորտի 7.1-րդ կետի՝ հեռուստաընկերության մասով օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ գտնում ենք, որ առաջարկված մոտեցումը ենթադրում է հանրային եթերաժամանակի ավելացում, պատրաստվող հաղորդումների որակական եւ բովանդակային նոր աստիճան, ինչը, իհարկե, գովելի է: Սակայն պետք է նկատել, որ ֆինանսական միջոցների կրճատման պարագայում՝ միայն պետական միջոցներով եւ առանց ֆինանսական այլ աղբյուրների, անհնար է դա իրականություն դարձնել:
- Հեռուստառադիոհեռարձակման ոլորտի 7.2-րդ կետի՝ Ֆինանսական եկամուտների, ծախսերի և աշխատակազմի ձևավորման մասով, խորհուրդը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա նախահաշիվը (բյուջեն)՝ առանձին տողերով նշելով խորհրդին, Հանրային հեռուստաընկերության


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՆԱՏՈՒՄԸ
ԸՆԴՈՒՄ
Մեզ
051-35067
11 - 12 - 2013

Հանրային ռադիոընկերությանը հատկացվելիք գումարները և ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատման՝ այսպիսով ապահովելով ընկերության ֆինանսական աղբյուրների թափանցիկությունը:

- Հեռուստառադիոհեռարձակման ոլորտի 7-րդ կետի 3-րդ ենթակետի՝ խորհրդի կազմի նշանակմանը ներգրավել ոլորտային հասարակական կազմակերպությունների, համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի, խորհրդի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ լրագրության, իրավագիտության, հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի եւ արվեստի հեղինակավոր գործիչների: Հասարակական կազմակերպությունները բազմաքանակ են, ոլորտը կարգավորող մասնագետների շրջանակը՝ մեծ, հետեւաբար կազմակերպությունների ընտրությունը կստեղծի լարվածություն և մրցակցություն Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպություններին միջև, ինչպես նաև կբարձրացնի կոռուպցիոն ռիսկերը ընտրության ընթացքում: Ուստի, խորհրդի ընտրության գործող կարգը համարում ենք առավել նպատակահարմար:
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով նախատեսված պարտականությունների կատարման վերաբերյալ (8-11 կետեր)՝ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ռուբեն Զաղինյան
Հեռուստառադիոխորհրդի նախագահ



Կատարող՝
Լևոն Խորենյան
Հճ. 57-45-33



**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ԱԶԳԱՑԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ**

Երևան 0009, Բասիսկյան 28
Հեռ. (010) 52-83-70, (010) 52-94-32
Էլ. փոստ: secretariate@tvradio.am
www.tvradio.am

03.12.2013թ. № 01-468

**ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար- նախարար պրն Վ. Գաբրիելյանին**

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան Ձեր 2013թ-ի նոյեմբերի 26-ի թիվ 02/12.9/18069-13 գրության, ներկայացնում եմ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դիրքորոշումը՝ կից գրությամբ ներկայացված Ժռունալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպության առաջարկությունների վերաբերյալ.

Առաջարկության Բ. մասի 2-րդ մասի վերբերյալ հայտնում եմ, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով կարգավորված է նշված հարցը:

Առաջարկության Բ. մասի 4-րդ կետի վերաբերյալ հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները: Հետևաբար, հեռուստառադիոհաճախականությունների համար հայտարարված բոլոր մրցույթների հայտատուների և մրցութային փաթեթների վերաբերյալ տեղեկատվությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվության («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Ինչ վերաբերում է առաջարկության Բ. մասի 5-րդ կետին, ապա նշեմ, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով պարունակվող

ՍՈՒՄԱՐԱՏ
051-34226
12 2013

կարգավորված է նշված հարցը և Հանձնաժողովի անդամ լինելու համար ներկայացված են հստակ պահանջներ:

Առաջարկության Բ. Մասի 8-րդ կետի 8.1 և 8.2 ենթակետերի վերաբերյալ հայտնում եմ, որ ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովը լիարժեք իրականացնում է օրենքով վերապահված իր վերահսկողական գործառույթները և մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում Հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում:

Առաջարկության Բ. Մասի 8-րդ կետի 8.3 ենթակետում բարձրացված հարցին անդրադարձանք սկզբում՝ նշելով, որ նշված հարցը կարգավորվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով:

Հարգանքով՝

Պաշտոնակատար՝



Գ. Դարասյան

1.2.1. Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի առաջարկները

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության առաջարկությունները Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության Հայաստանի գործողությունների նոր ծրագրում ընդգրկվելիք գործողությունների վերաբերյալ

1. Տարածել ՀՀ Տեղեկատվության ազատության մասին օրենքի գործողությունը նաեւ հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպությունների վրա:

2. Կատարել փոփոխություններ եւ լրացումներ ՀՀ Հանրային ծառայության մասին օրենքում նպատակ ունենալով. ա) ամբողջությամբ հրապարակային դարձնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների հայտարարագրերը, բ) ընդլայնել հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող փոխկապակցված անձանց ցանկը, գ) ընդլայնել օրենքի շահերի բախումը կանխարգելող դրույթները բոլոր հանրային ծառայողների, ինչպես նաեւ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների եւ դատախազների վրա:


3. Ընդունել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն իր միջոցառումների ծրագրով՝ կենտրոնա-նալով ոչ պակե քան 3-4 առանցքային ոլորտների վրա եւ նախատեսելով ռազմավարության դրույթների եւ ծրագրի միջոցառումների կիրարկումը համակարգող եւ դրա արդյունքները գնահատող մշտական հիմունքներով գործող մասնագիտացված մարմնի ստեղծում:

4. Անդամակցել Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնության (EITI)՝ ոլորտի ծախսերի եւ եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների եւ պետության հաշվետվողականությունն ապահովելու նպատակով:

5. Մեկ անձից կատարվող գնումների պրակտիկան սահմանափակելու նպատակով ՀՀ Գնումների մասին օրենքում սահմանել «գնման անհետաձգելի պահանջ» դրույթը:

6. Ապահովել գնումների բողոքարկման խորհրդի իրական անկախությունը՝ նախելառաջ սահմանափակելով Գնումների աջակցման կենտրոնի, որպես բողոքարկման խորհրդի քարտուղարություն հանդես եկող մարմնի դերը:

1.2.2. Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի առաջարկներին՝ ՀՀ կառավարության եւ գերատեսչությունների պատասխանները⁶:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**
Երևան-10, Հանրապետության հր., Կառավարական տուն 1

**STAFF OF THE GOVERNMENT
OF THE REPUBLIC OF ARMENIA**
Government House 1, Yerevan-10, Republic Square

«19» 12 2013թ. № 02/12.9/19492-13

«Թրանսփարենսի ինթերնեյշնլ»
հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
պարոն Վարուժան Հոկտանյանին


Հարգելի պարոն Հոկտանյան,

Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի առնչությամբ Ձեր կողմից ներկայացված առաջարկությունները ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ուղարկվել են ՀՀ իրավասու պետական մարմիններին՝ քննության առնելու նպատակով:

Կից ներկայացվում են համապատասխան գերատեսչություններից ստացված պատասխանները վերոնշյալ առաջարկությունների վերաբերյալ:

Առդիր՝ 8 էջ:

Հարգանքով՝



Տիգրան Գևորգյան
ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի առաջին տեղակալ,
ԲԿԳ հայաստանյան համակարգող

⁶ <http://www.asparez.am/wp-content/uploads/2014/04/tigran-gevorgyan-tiac-letter.pdf>



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

0010, ք.երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ. 52-19-64. Ֆաքս 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՋԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ**

Ի կատարումն ՀՀ վարչապետի
28.11.2013թ. թիվ 02/12.9/18272-13 հանձնարարականի.

Հարգելի պարոն Գաբրիելյան

Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) միանալու նպատակով Համաշխարհային բանկի համապատասխան փորձագետների հետ քննարկվել է նշված նախաձեռնությանը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության անդամակցելու հարցը, որը կշարունակվի այդ փորձագետների Երևանյան հաջորդ այցի ընթացքում:

Կատարող՝ Լ. Փաշայան
Հեռ 52-65-18



ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358
Վեբ կայք՝ www.minfin.am

№ _____

«ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար
պարոն Վաչե Գաբրիելյանին»

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն «ՀՀ վարչապետի 28/11/2013թ. թիվ 02/12.9/18272-13 հանձնարարականի /այսուհետ՝ Հանձնարարական/ ուսումնասիրելով կից ներկայացված գրությունը, հայտնում ենք հետևյալը.

Հանձնարարականի 5-րդ կետի վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված են գնման անհետաձգելի պահանջի առաջացման հիմքով բանակցային ընթացակարգը առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ձևի կիրառման դեպքերը, իսկ «ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնման գործընթացի կազմակերպման» կարգով /այսուհետ՝ Կարգ/ նշված գնման ձևի կիրառման պայմանները: Մասնավորապես, Կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի՝

• «ա» կետի համաձայն՝ գնումն իրականացվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված արտակարգ իրավիճակների, կամ օտարերկրյա պետությունների տարածքներում տեղի ունեցած բնական աղետների և արտակարգ իրավիճակների կամ բնական և (կամ) տեխնիկական աղետների և (կամ) վթարների հետևանքով առաջացած և հրատապ համարվող կարիքների բավարարման նպատակով: Հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ընդունվի, տվյալ գնման պահանջի ծագման օրվանից հաշված մինչև վաթսուն օրացուցային օրվա ընթացքում և պարզեցված ընթացակարգով կամ շրջանակային համաձայնագրով տվյալ գնման կատարումը հնարավոր չէ:

Այսինքն՝ այս հիմքով գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացել է հրատապ կարիք տվյալ գնումն իրականացնելու համար:

- <բ> կետի համաձայն՝ պետական գնումների դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից անհետաձգելի և (կամ) հրատապ համարված այլ դեպքերում:

Այսինքն՝ եթե արտակարգ իրավիճակ չի առաջացել, ապա պետական գնումների դեպքում գնումը կարող է համարվել անհետաձգելի միայն ՀՀ կառավարության կողմից: Այլ պատվիրատուների վրա սույն կետի դրույթները չեն տարածվում, ինչը նշանակում է, որ վերջիններս բացի արտակարգ իրավիճակ առաջացած դեպքերի, սույն կետի հիմքով գնում չեն կարող իրականացնել:

- <գ> կետի համաձայն՝ եթե տվյալ գնման առարկան ձեռք բերելու նպատակով հայտարարված գնման մրցակցային ընթացակարգն առնվազն 2 անգամ հայտարարվել է չկայացած՝ բացառությամբ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դեպքի:

Այսինքն՝ եթե մրցակցային ընթացակարգը 2 անգամ չի կայացել և առաջացել է գնման անհետաձգելի պահանջ, ապա գնումը կարող է իրականացվել մեկ անձից:

Հանձնարարականի 6-րդ կետի վերաբերյալ.

2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված և 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած <Գնումների մասին> ՀՀ օրենքով ստեղծվել է բողոքարկման խորհուրդ, որի կազմում ընդգրկվել են ոչ միայն ՀՀ պետական մարմինների, այլ նաև համայնքների, ՀՀ կենտրոնական բանկի և մասնավոր հատվածը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Նախկին օրենքով պետական գնումների վերաբերյալ բողոքները քննում և համապատասխան որոշում էր կայացնում ՀՀ ֆինանսների նախարարությունը: Այսինքն՝ նոր օրենքով ըստ էության բողոքարկման համակարգը անկախացվեց լիազոր մարմնից՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից:

Յուրաքանչյուր կոնկրետ բողոքի քննարկման համար խորհրդից ձևավորվում է 3 հոգուց բաղկացած հանձնաժողով, որը բողոքարկման խորհրդի անունից ինքն է կայացնում որոշում: <Գնումների աջակցման կենտրոն> ՊՈԱԿ-ը հանդես է գալիս ընդամենը որպես գնումների բողոքարկման խորհրդի քարտուղարություն, որի հիմնական նպատակը համապատասխան փաստաթղթաշրջանառություն ապահովելն է: Մասնավորապես, Օրենքի

16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ <Գնումների աջակցման կենտրոն> ՊՈԱԿ-ը.

ա. կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

բ. գնահատում է ստացված բողոքների (դիմումների) ամբողջականությունը և խորհրդին եզրակացություն է ներկայացնում յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ:

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խորհուրդն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող միավոր է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով, և իրենց պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ խորհրդի անդամները պաշտպանված են արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ մանրամասությամբ և անաչառորեն: Խորհուրդը և խորհրդի անդամները Օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից: Բողոքի քննության ժամանակ նրանք չեն հանդիսանում քննվող գործի մասնակից կամ իրենց թեկնածությունն առաջադրած կազմակերպության ներկայացուցիչ և պարտավոր են ղեկավարվել բացառապես Օրենքով և կիրառել այն:

<Գնումների աջակցման կենտրոն> ՊՈԱԿ-ի կողմից Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվող եզրակացությունը խորհրդի համար չի կրում պարտադիր բնույթ և խորհուրդը բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս առաջնորդվում է բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ իրավական ակտերով:

Բացի դրանից ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի համագործակցության մոդելի շրջանակներում նախատեսվել է, որ բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը: Նշված դրույթը ամրագրվել է նաև ՀՀ կառավարության 18/04/2013թ. թիվ 372-Ն որոշմամբ:

Միաժամանակ ձեռնարկվել են միջոցներ բողոքարկման խորհրդի անկախության աստիճանը էլ ավելի բարձրացնելու ուղղությամբ: Մասնավորապես բողոքարկման հանձնաժողովի ձևավորման ռոտացիոն համակարգը այնպես է կազմակերպվում, որպեսզի

ապահովվի խորհրդի յուրաքանչյուր անդամի հավասար չափով մասնակցությունը բողոքարկման հանձնաժողովի աշխատանքներին:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ բողոքարկման խորհրդի անկախությունը ըստ էության ապահովված է:

Հայտնում ենք նաև, որ գնումների բողոքարկման խորհրդում ընդգրկելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է նաև հասարակական կազմակերպություններին, այդ թվում «Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությանը, սակայն վերջինս մինչ այսօր չի արձագանքել այդ հրավերին:

Հարգանքով՝



Դավիթ Սարգսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

0078 Երևան, Հայաթյան 41 *, հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար-նախարար
պարոն Վ. Գաբրիելյանին**

Ի կապարումն ՀՀ վարչապետի 28.11.2013թ.
02/12.9/18272-13 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշումը «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության առաջարկությունների վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:

Հիշյալ օրենքում «հանրային նշանակության կազմակերպություն» են հանդիսանում ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները: Այս իմաստով հստակեցման կարիք ունի «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության առաջարկը, որը վերաբերում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը «հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպությունների» վրա տարածելուն, պարզաբանելու համար այդ կազմակերպությունների կոնկրետ շրջանակը:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ միջազգային պարտավորությունների շրջանակներում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նման լրացում կատարելու վերաբերյալ որևէ խնդիր երբևէ չի դիտարկվել:

Այդուհանդերձ, ՀՀ արդարադատության նախարարությունը, ըստ էության չի առարկում հիշյալ օրենքի գործողության շրջանակն ընդլայնելու նշված առաջարկությանը և պատրաստակամություն է հայտնում նման կազմակերպությունների շրջանակը կոնկրետացնելու պարագայում, քննարկել փոփոխության կատարելու անհրաժեշտության հարցը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նպատակ ունենալով իրականացնել կոռուպցիայի դեմ գործուն և համալիր պայքար, մի շարք զարգացած երկրներ (ԱՄՆ, Ռումինիա, Լիտվա) կիրառում են հանրային բոլոր բարձրաստիճան ծառայողների, պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների, դատախազների կողմից գույքի և եկամուտների հայտարարագրման պրակտիկա:

Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ կիրառվել է գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնող անձանց ընդլայնված ցանկով իրականացման պրակտիկան: Այս առումով հարկ ենք համարում փատել, որ զուտ հայտարարագիր ներկայացնող անձանց ցանկի ընդլայնման մոդելը բավարար չի հանդիսանում, քանի որ ներկայացված հայտարարագրերի ծավալի պատճառով առաջանում է դրանց ուսումնասիրման ոչ թե ամբողջական, այլ տարբերակված մոտեցում, ինչը չի ապահովում նպատակի իրականացումը:

Ընդհանուր առմամբ ընդունելի համարելով «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ը հասարակական կազմակերպության 2-րդ կետում տեղ գտած առաջարկը՝ «Հարգարադատության նախարարությունը գտնում է, որ եկամուտների հայտարարագրեր ներկայացնող պաշտանատար անձանց ցանկի ընդլայնման հարցը լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի՝ հայտարարագրերի ներկայացման գործընթացն ինքնանպատակ և անարդյունավետ չդարձնելու, ինչպես նաև եկամտային հայտարարագրումից ծախսային հայտարարագրմանն անցնելու նպատակահարմարության առումով:

Ինչ վերաբերում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ը հասարակական կազմակերպության 3-րդ առաջարկին, ապա նոր հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացմանն ուղղված միջոցառումների նոր ծրագրի ընդունումը ՀՀ արդարադատության նախարարությունը դիտարկում է այլ հարթության վրա:

Կարևորվորելով Հայաստանի Հանրապետության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացմանն ուղղված գործողությունների համակարգման անհրաժեշտությունը՝ առավել նպատակահարմար ենք համարում միջազգային պայմանագրերի կատարման արդյունքում միջազգային կազմակերպությունների կողմից կազմված զեկույցների և ներկայացված առաջարկությունների (խորհրդատվությունների) հիման վրա բարձրացված խնդիրների և դրանց լուծումների ամրագրումը մեկ միասնական փաստաթղթում՝ նախատեսելով կոռուպցիայի ընկալման չափորոշիչներից ելնելով՝ դրա ընկալման բարելավմանն ուղղված ամենամյա գործողությունների ծրագրի ընդունումը:

Նշենք նաև, որ կոռուպցիայի դեմ պայքարի մշտական հիմունքներով գործող մասնագիտացված մարմինի ստեղծումը առանցքային է նաև մի քանի միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկություններում:

Մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» 10-րդ նիստի ժամանակ 2011 թվականի սեպտեմբերի 29-ին ընդունված Հայաստանի վերաբերյալ երկրորդ փուլի մոնիտորինգի զեկույցում (կետ 1.6. Հակակոռուպցիոն քաղաքականության և համակարգման մասնագիտացված մարմինները) տեղ է գտել հետևյալ առաջարկությունը, ըստ որի Հայաստանը պետք է ուսումնասիրի այն երկրների փորձը, որտեղ ստեղծվել են մասնագիտացված անկախ հակակոռուպցիոն մարմիններ՝ պատժիչ (քննչական,

քրեական հետապնդում իրականացնող), կանխարգելիչ և կրթական գործառույթներով ու լիազորություններով:

Հարկ է նշել նաև, որ այս տարի Հայաստանում իրականացվել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի վերահսկման մեխանիզմի մոնիթորինգ, որի ընթացքում Հայաստանը ներկայացրել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 3-րդ՝ «Քրեականացում և իրավապաշտպան գործունեություն» և 4-րդ՝ «Միջազգային համագործակցություն» գլուխների իրականացման արդյունքները:

Այս կապակցությամբ մոնիթորինգն իրականացնող ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի և մշտադիտարկումն իրականացնող երկրների փորձագետների Հայաստան կատարած այցելության ժամանակ նույնպես հատկանշվել է Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարը համակարգող և վերահսկող մշտապես գործող մարմնի բացակայությունը, ուստի հիշյալ առաջարկության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը չի առարկում:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 4-րդ, 5-րդ և 6-րդ առաջարկությունների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը առարկություններ չունի և պատրաստ է քննարկել դրանք ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ:

Հարգանքով՝



Հ. Թովմասյան

1.3.1. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի առաջարկությունները

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, կարելի էրելով ԲԿԳ նախաձեռնության գործունեությունը, հաշվի առնելով, որ ԲԿԳ նախաձեռնության հիմքում առանցքային են տեղեկատվության ազատության սկզբունքները բաց կառավարման ապահովման համար, առաջարկում է ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագրում ներառել հետևյալ հանձնառությունները.

Հանրային ծառայողների գիտելիքների եւ հմտությունների բարելավում Տեղեկատվության ազատության ոլորտում:

1. Համագործակցելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հիմնադրած Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնի հետ, 200 քաղաքացիական եւ համայնքային ծառայողների համար կկազմակերպվեն դասընթացներ տեղեկատվության ազատության վերաբերյալ: Այս դասընթացները հանրային ծառայողներին կօգնեն բաց եւ հաշվետու աշխատել հանրության հետ, ինչպես նաեւ պատշաճ կերպով մշակել եւ արձագանքել տեղեկատվություն ստանալու հարցումներին:

Ժամանակացույց՝ 2014-2016թթ: Երկօրյա ուսուցումները կանցկացվեն 10 անգամ՝ 20 հոգանոց խմբերով:

Պատասխանատու մարմին՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ:

Գործընկեր կազմակերպություն՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ:

2. Տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներ: ՀՀ կառավարությունը կմշակի եւ կընդունի «Պետական կառավարման համակարգում դիմողներից ստացած տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներին ընթացք տալու վերաբերյալ» որոշում: Որոշմամբ կհստակեցվեն էլեկտրոնային փոստով ստացվող տեղեկություն ստանալու հարցումները գրանցելու, դրանց ընթացք տալու ժամկետներն ու կարգը:

Ժամանակացույց՝ 2014թ.՝ որոշման նախագծի մշակում: 2015թ.-ի հունվար՝ որոշման ընդունում:

Պատասխանատու մարմին՝ ՀՀ կառավարության աշխատակազմ:

Գործընկեր կազմակերպություն՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ:

3. Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն: Պետական կառավարման մարմինները յուրաքանչյուր տարեսկզբին կիրապարակեն նախորդ տարվա տեղեկություն ստանալու հարցումների ամփոփ վիճակագրություն՝ (քանի հարցում է ստացվել, քանիսն է բավարարել, մերժվել եւ ինչ հիմքով եւ այլն):

Ժամանակացույց՝ երկու անգամ՝ 2015թ. հունվար, 2016թ.-ի հունվար: Պատասխանատու մարմին՝ ՀՀ կառավարություն:

4. Հանրության ներգրավում ԲԿԳ գործընթացներին: Համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ՝ կստեղծվի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ցանց: ՀՀ կառավարությունը սերտորեն կաշխատի ցանցի հետ՝ ապահովելու ԲԿԳ Գործողությունների ծրագրի հրապարակայնացումն ու իրականացման արդյունավետ ընթացքը: Ցանցը կաշակցի Գործողությունների ծրագրի իրականացմանը, ինչպես նաեւ կիրականացնի ՀՀ կառավարության հանձնառությունների իրականացման մոնիտորինգ:

Ժամանակացույց՝ ԸՀ ցանցի անդամների հանդիպումները կանցկացվեն եռամսյակը մեկ:

Պատասխանատու մարմին՝ ԲԿԳ հայաստանյան համակարգող:

Գործընկեր կազմակերպություն՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

5. Ստեղծել Անհատական տվյալների պաշտպանության եւ տեղեկատվության ազատության Հանձնակատարի ինստիտուտը ՀՀ-ում: Հանձնակատարը պետական մարմին է?, լիովին անկախ կառավարությունից, պետական բյուջեից ֆինանսավորվող, որի հիմնական նպատակը տեղեկատվություն ստանալու հանրության իրավունքի պաշտպանությունն է՝ նպաստելով պետական մարմինների հրապարակայնությանը եւ տվյալների գաղտնիության ապահովմանը ֆիզիկական անձանց համար:

ՏԱ հանձնակատարի ինստիտուտի հիմնական նպատակները ներառում են նաեւ տեղեկատվության ազատության իրավունքի խթանումը եւ ՏԱ իրավունքի խախտումների բողոքարկումը: Հանձնակատարը արտադատական կարգով լուծում է տեղեկատվության ազատության ոլորտում առաջացած վեճերը: ՏԱ հանձնակատարը հռչակվում է որպես տեղեկատվության ազատության բողոքարկման միակ եւ վերջնական մարմին: Նա դիտարկում է իրականացում, թե ինչպես են պաշտոնյաներն իրականացնում ՏԱ մասին օրենքով սահմանված իրենց իրավունքները եւ այդ մասին զեկույց է ներկայացնում հասարակությանը եւ կառավարությանը, նախաձեռնում է փոփոխություններ եւ լրացումներ ՏԱ ոլորտը կարգավորող իրավական ակտերում, պետական մարմիններին ներկայացնում է առաջարկություններ՝ ՏԱ ոլորտում իրենց աշխատանքը բարելավելու համար, պետական մարմինների աշխատակիցների համար իրականացնում է ՏԱ իրավունքի վերաբերյալ վերապատրաստումներ, դիտարկում է ՏԱ իրավունքի խախտման վերաբերյալ պետական մարմինների որոշումների դեմ բերված բողոքները, իրականացնում է ՏԱ ոլորտի մասին հանրային իրազեկում, ինչպես նաեւ կարող է նախաձեռնել վարույթ (դիմել համապատասխան դատարանին կամ մարմնին) այս կամ այն իրավական ակտի սահմանադրականության եւ օրինականության վերաբերյալ:

Հավելենք, որ Եվրոմիության կազմում գտնվող գրեթե բոլոր պետություններն էլ ունեն անհատական տվյալների պաշտպանության եւ տեղեկատվության ազատության հանձնակատարի կամ դրան համարժեք պաշտոններ, որոնք ստեղծվել են ԵՄ 95/46 հանձնարարականի համաձայն (անհատական տվյալների մշակման եւ դրանց մատչելիության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության մասին):

1.3.2. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի առաջարկներին գրավոր պատասխան չի տրվել:

2. ՀՀ կառավարության մշակած ԲԿԳ-Հայաստան 2014-2016թթ գործողությունների երկրորդ ծրագրի նախագիծը⁷. 2014թ.

**ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրի նախագիծ
(2014-2016 թվականներ)**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակում է հավատարիմ մնալ ավելի բարձր աստիճանի թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու իր հանձնառությանը, ինչպես նաև քաղաքացիների համար ապահովել այնպիսի կառավարում, որը լավագույնս կհամապատասխանի նրանց կարիքներին և ձգտումներին: Հանրային հաստատությունների և արդյունավետ կառավարման ամրապնդումը եղել է պետության առաջնահերթություններից, և վերջին տասնամյակում Հայաստանի իշխանություններն իրականացրել են մի շարք միջոցառումներ այդ կապակցությամբ:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությանը միանալու մասին որոշումը համապատասխանում է այդ քաղաքականությանը և արտահայտում է կառավարության հանձնառությունն էապես բարելավելու վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների որակը: 2011 թվականից սկսած՝ ԲԿԳ գործընթացը կառավարության օրակարգի կարելորագույն մաս է կազմում՝ գտնվելով կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալի անմիջական վերահսկողության ներքո:

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 29-ին հրապարակված՝ «Կարգավորումների ընկալումը ՓՄՁ-ների համար 2014» զեկույցի համաձայն՝ գործարարությամբ զբաղվելու վարկանիշով Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 37-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 3 տեղով: Օգոստոսին «Մուդիս» վարկանիշային կազմակերպությունը Հայաստանի վարկանիշը գնահատել է «կայուն» Baa2՝ նախորդ տարվա «բացասականի» փոխարեն: 2013 թվականի այլ խոշոր միջազգային վարկանիշավորումները նույնպես նպաստավոր են եղել Հայաստանի համար:

ԲԿԳ Հայաստանի առաջին գործողությունների ծրագիրը ներառում է մի շարք հավակնոտ նպատակներ և պարտավորություններ: Ինքնագնահատման գործընթացը, որն իրականացվել է ԲԿԳ-Հայաստան գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կողմից, ցույց տվեց, որ այդ հանձնառությունների մեծամասնությունը հաջողությամբ կատարվել է կամ ավարտին կհասցվի մոտ ապագայում:

Սույն գործողությունների ծրագրում ներառված են առավել մարտահրավերային պարտավորությունները: Այն նաև արտացոլում է այն փորձը, որը կուտակվել է կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ նախադեպը չունեցող համագործակցության արդյունքում, ինչպես նաև քաղված դասերը: Թեև չգրված, սակայն քաղաքացիական հասարակության ներգրավման և ԲԿԳ գործընթացին վերջինիս կողմից ցուցաբերվող աջակցության աստիճանի բարձրացումը մեկ այլ պարտավորություն է, որը Հայաստանի կառավարությունը մտադիր է առավելագույն չափով իրականացնել:

ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկել է մի շարք քայլեր՝ ուղղված կառավարման համակարգի թափանցիկության, հաշվետվողականության եւ արդյունավետության բարձրացմանը: Այս համատեքստում Բաց կառավարման գործընկերությունը եւս մեկ հնարավորություն է կառավարությունները դարձնել առավել բաց եւ հաշվետու, ունենալ այնպիսի ինստիտուտներ, որոնք կնպաստեն քաղաքացու ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման եւ քաղաքականության մշակման գործընթացներում:

Առավել թափանցիկ եւ մասնակցային կառավարում ապահովելու նպատակով կառավարությունը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են պետական մարմինների նկատմամբ մարդկանց վստահության մակարդակի, ինչպես նաեւ պետական պաշտոնյաների պատասխանատվության աստիճանի բարձրացմանը:

Մասնավորապես.

- **Կառավարության որոշումների նախագծերի մշակում.** կառավարության որոշման նախագիծ մշակող մարմիններն այսուհետեւ նախագիծը տեղադրում են իրենց ինտերնետային կայքում, որպեսզի հանրությունը դեռեւս քննարկման փուլում իրազեկվի նախագծի վերաբերյալ եւ իր առաջարկություններով մասնակից դառնա կառավարության որոշումների ընդունմանը:
- **Կառավարության նիստերի օնլայն հեռարձակում.** կառավարության նիստերը բաց են լրագրողների համար, դրանք զուգահեռաբար հեռարձակվում են online եղանակով: Կառավարությունն ապահովելու է կառավարության նիստերի ուղիղ հեռարձակում՝ կառավարության նիստերի դահլիճից կառավարության մամլո ասուլիսների սրահ: Կառավարությունն այսօր ունի հավատարմագրված մեծ թվով լրատվամիջոցներ, որոնք բոլորը հնարավորություն են ունենալու առաջին հարկում գտնվող սրահից հետեւել կառավարության նիստերին՝ օնլայն ռեժիմով: Այնտեղ տեղակայված են համակարգիչներ, որոնցից նրանք ազատորեն պետք է կարողանան օգտվել՝ ապահովելով կառավարության գործունեության հրապարակայնությունը:
- **ՀՀ վերահսկիչ պալատի գործունեության թափանցիկության ապահովում.** այսօր ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքները եւս բաց են ու թափանցիկ: Դրանք գտնված են www.e-gov.am կայքէջում:
- **Գույքի եւ եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում.** այժմ արդեն բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերը հրապարակվում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (www.ethics.am)՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հայտարարագրման ենթակա տվյալների ցանկի:
- **Կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում** (Կարգավորման «Guillotine» ծրագիր). ՀՀ կառավարության՝ 2011թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ ստեղծվել է ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի նպատակն է եականորեն թեթեւացնել բիզնեսի եւ քաղաքացիների վրա ընկնող կարգավորումների բեռը՝ առնվազն երկու անգամ կրճատելով գործառնական ծախսերը:

Պետական կառավարման համակարգում հաշվետվողականության ապահովման նպատակով ներդրվել են նոր սկզբունքներ եւ մոտեցումներ.

- Ցանկացած միջոցառում կամ միջոցառումների ծրագիր, որ ներկայացվում է որեւէ պետական մարմնի կողմից, պետք է պարունակի ծրագրի արդյունքների հստակ ձեւակերպում, ընդ որում այդ արդյունքները պետք է լինեն չափելի:
- Պետական կառավարման մարմինները պարբերաբար ներկայացնում են կատարողական հաշվետվություններ, որոնց հիման վրա գնահատվում է նրանց իրականացրած աշխատանքը:
- Կատարողականի հիման վրա գնահատվում է ոչ միայն պետական մարմնի, այլեւ ամեն մի աշխատակցի կատարած աշխատանքը:
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության թափանցիկության եւ հաշվետվողականության բարձրացման նպատակով առաջարկվել է բարձրագույն ուսումնական հաստատություններին իրենց կայք էջերում ավելացնել բուհերի գործունեության տարեկան հաշվետվությունն (այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունները) ու ռազմավարական ծրագիրը: Այդ փաստաթղթերը քննարկվում եւ հաստատվում են բուհերի խորհուրդներում, որոնց 25%-ը բաղկացած է ուսանողական ներկայացուցիչներից: Այս գործողությունները նպատակ ունեն հասանելի դարձնել բուհերի ֆինանսական գործունեությունը յուրաքանչյուր քաղաքացու եւ, հատկապես, ուսանողների համար:

Մատուցվող ծառայությունների որակի եւ արդյունավետության բարձրացում

ՀՀ կառավարության կողմից մի շարք ոլորտներում իրականացվել են բարեփոխումներ, որոնց նպատակը ՀՀ քաղաքացիների համար որոշ ծառայություններից օգտվելու առավել բարենպաստ պայմաններ ստեղծելն է:

Մասնավորապես.

- **Ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրում եւ փորձաքննության անցկացում.** այժմ մինչեւ 2.5 տոննա գյուղատնտեսական մթերք արտահանող անձինք ներկայացնում են ընդամենը 4 փաստաթուղթ, ստանում հավաստագիր 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նախկինում ծագման երկրի հավաստագիր ստանալու համար արտահանողները պարտավոր էին ներկայացնել թվով 7 փաստաթուղթ եւ սպասել 5 աշխատանքային օր:
- **Քաղաքաշինարարական թույլտվություններ.** այժմ միջին ռիսկայնության օբյեկտի (օրինակ՝ մինչեւ 1500 քմ մակերեսով տնտեսական շինություն) կառուցման համար օրենսդրությամբ սահմանված թույլտվական ընթացակարգերի գումարային ժամկետը կազմում է 27 օր՝ նախկին 5 ամսվա փոխարեն: Եթե բնակելի տուն կառուցելիս նախագիծն ընտրվում է «ՀՀ համայնքներում բազմակի օգտագործման անհատական բնակելի տների նախագծերի կատալոգից» (այսուհետ՝ Կատալոգ) կից աշխատանքային փաստաթղթերով, ապա չի պահանջվի նախագծման առաջադրանք, նախագծային փաստաթղթերի պատվիրում եւ փորձաքննություն, իսկ շինարարության թույլտվությունը կտրամադրվի եռօրյա ժամկետում: Կատալոգները եւ աշխատանքային նախագծերը կարող են ձեռք բերվել ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ մարզպետարանների եւ քաղաքապետարանների պաշտոնական կայք էջերից՝ վերբեռնման միջոցով, ինչպես նաեւ յուրաքանչյուր քաղաքապետարանից եւ գյուղապետարանից:

- **Չայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ.** 2012թ. հունվարի 1-ից գործարկվել է անշարժ գույքի կադաստրի վարման համար նախատեսված՝ «Չայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգը, ինչպես նաև հանրությանը անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, որը, ի թիվս այլ էլեկտրոնային ծառայությունների, հնարավորություն է տալիս նաև էլեկտրոնային եղանակով ներկայացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները:
- **Ճանապարհային ոստիկանության ոլորտի բարեփոխումներ՝ տրանսպորտային միջոցների գրանցման, վարորդական վկայականների տրամադրման, տուգանքների և վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրում.** ստեղծվել է մեկ միասնական կենտրոն, որտեղ կենտրոնացված են ճանապարհային ոստիկանության կողմից իրականացվող բոլոր գործառնություններն ու մատուցվող ծառայությունները: Կենտրոնը հնարավորություն է ընձեռում իրականացնելու այնպիսի գործարքներ, ինչպիսիք են՝ տրանսպորտային միջոցների գրանցումը և հաշվառումը, վարորդական վկայականների տրամադրումը, հաշվառման վկայագրերի ձեռքբերումը, առուվաճառքը և այլն:
- **Գույքահարկի և հողի հարկի վճարման առցանց համակարգի** ներդրմամբ վճարումները կատարվում են www.e-payments.am կայքի միջոցով:
- Դեղերի, դեղանյութերի ներմուծման հավաստագրերի տրամադրման գործընթացը դյուրացնելու, քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակը և օպերատիվությունը ապահովելու նպատակով ներդրվել է **դեղերի ներմուծման և արտահանման հավաստագրերի տրամադրման մեկ պատուհանի սկզբունքով գործող համակարգը**, որի օգտագործողները ՉՀ առողջապահության նախարարությունը և ԿԱ պետական եկամուտների կոմիտեն են: Չհամակարգի միջոցով, էլեկտրոնային եղանակով, առանց առողջապահության նախարարություն և ՊԵԿ այցելելու, հայտատուները (դեղ, դեղանյութ ներմուծողներ) դեղերի, դեղանյութերի ներմուծման հայտերը ներկայացնում են առողջապահության նախարարություն, որը ներմուծման թույլտվության համապատասխան հավաստագրի օրինակը համակարգի միջոցով տրամադրում է ՊԵԿ-ին՝ դեղերի, դեղանյութերի ներմուծումը իրականացնելու համար:

Չարկային վարչարարության ոլորտում իրականացրած հիմնական բարեփոխումներ

- **Էլեկտրոնային ծառայությունների ընդլայնում.**
 - Գործարկվել և ընդլայնվում է էլեկտրոնային հարկային հիշեցում-ծանուցումների համակարգը: 2013թ. 1-ին կիսամյակի դրությամբ հարկ վճարողներին ուղարկվել է 41055 էլեկտրոնային ծանուցում:
 - Ներդրվել են մի շարք այլ էլեկտրոնային ծառայություններ, որոնք ինտեգրված են հարկային ծառայության վեբկայքի հետ և հասանելի են վերջինիս օգտվողներին, այդ թվում՝ «Առցանց նամակագրության համակարգը», «ՉՀ հարկ վճարողների փնտրման համակարգը», էլեկտրոնային «Չարկային օրացույցը», «Ինտերակտիվ հարցման համակարգը», «Էլեկտրոնային փոստային առաքման համակարգը», էլեկտրոնային «Ինտերակտիվ քարտեզը» և այլն:
- **Չարկ վճարողների սպասարկման բարելավում.**
 - Գործարկվել են 14 հարկ վճարողների սպասարկման կենտրոններ, որոնք մասնագիտացված կերպով և պատշաճ պայմաններում այցելուներին մատուցում են սպասարկման ծառայությունների ամբողջ շրջանակը:

- Գործարկվել է հարկային եւ մաքսային մարմինների հեռախոսագանգերի սպասարկման կենտրոնը, որը հեռախոսակապով եւ էլեկտրոնային եղանակով պարզաբանումներ է տալիս դիմողներին՝ հարկային օրենսդրության եւ վարչարարության վերաբերյալ, արձանագրում եւ ընթացք է տալիս դիմողների առաջարկություններին եւ բողոքներին:

- 2012թ. գործարկվել է ՀՀ հարկային ծառայության նոր վեբկայքը, որը կառուցված է նոր տեխնոլոգիական լուծումներով, ապահովում է օգտվողներին ոչ միայն հարկային ամենալայն եւ բազմազան տեղեկատվությամբ, այլեւ մուտք է ծառայում դեպի էլեկտրոնային հարկային ծառայություններ:

- 2013թ. ներդրվել է «Օրինապահ հարկ վճարողի, ինստիտուտը՝ նպատակ ունենալով խրախուսել բարեխիղճ հարկ վճարողներին եւ բարձրացնել նրանց ինքնազնահատումը: Մասնավորապես՝ սահմանված ժամկետներում եւ կարգով հարկային հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնող ու հարկային պարտավորություններ կատարող այն հարկ վճարողների համար, որոնք ինքնուրույն գրանցվում են համապատասխան էլեկտրոնային շտեմարանում, օրենսդրությամբ սահմանված հարկային հսկողության ձեւերն ու մեթոդները սահմանափակվում են ռիսկերի բացահայտմանն ուղղված կամերալ ուսումնասիրություններով եւ վերլուծություններով, ինչպես նաեւ ապահովվում է նրանց գերավճարների առաջնային վերադարձը եւ հաշվանցումների իրականացումը:

- Ամենամյա ծրագրերի հիման վրա իրականացվում է հարկ վճարողների զանգվածային իրազեկումը, այդ թվում՝ տպագրվում են «Մաքսատուն» եւ «Հարկատուն» եռամսյա ամսագրերը, ինչպես նաեւ «Հարկային եւ մաքսային օրենսդրության եւ վարչարարության դայջեստ» ամսագրերը, կանոնավոր լույս է տեսնում «TaxInfo» շաբաթական հեռուստահաղորդաշարը, մշակվում եւ հրատարակվում են իրազեկման նյութեր (ուղեցույցներ, բրոշյուրներ, բուկլետներ, պատամներ), որոնց էլեկտրոնային տարբերակները տեղադրված են նաեւ հարկային ծառայության վեբկայքում, կանոնավոր կազմակերպվում են իրազեկման միջոցառումներ հարկ վճարողների եւ լրատվական միջոցառումներ ՉԼՄ-ների համար:

ԲԿԳ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԾՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՄ

1.1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա երկրաբանական տեղեկության թվայնացում եւ էլեկտրոնային շտեմարանի ներդրում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ ՊՈԱԿ) առկա երկրաբանական ֆոնդային նյութերի թվայնացման ծրագիր՝ ապահովելու ՊՈԱԿ-ում պահպանվող երկրաբանական տեղեկության թափանցիկությունը եւ հասանելիությունը հանրության լայն շրջանակներին, ինչպես նաեւ պահպանելու ՊՈԱԿ-ում գոյություն ունեցող տեղեկությունը:

Ծրագրի նպատակն է ՀՀ օրենսդրությամբ չարգելված երկրաբանական տեղեկությունը դարձնել հասանելի հասարակության լայն շրջանակների համար՝ այդ նպատակով ստեղծված հատուկ կայքի միջոցով:

1.2. Մշակութային ծառայությունների ոլորտում տեղեկատվության եւ ծառայությունների մատչելիության ապահովում

Նախատեսվում է ստեղծել Մշակութային արժեքների տեղեկատվական էլեկտրոնային շտեմարան:

Շտեմարանի ստեղծման նպատակն է ապահովել մշակութային արժեքների վերաբերյալ թվայնացված տեղեկատվության հավաքագրումը, համակարգումը եւ հանրության լայն շերտերին միասնական ձեւաչափով դրանց ներկայացումն ու հասանելիությունը, ինչպես նաեւ շարժական ժառանգության հետազոտման, գիտական ուսումնասիրման ու հանրահռչակման արդյունավետության բարձրացումը:

Արդյունքում՝ կստեղծվի ծրագրաշարերի եւ էլեկտրոնային տիրույթ, որտեղ կներկայացվեն մոտ 136 հազար մշակութային արժեքների վերաբերյալ թվայնացված տվյալներ:

1.3. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ՆԱՏՕ-ի «Բարեվարքության ամրապնդման» նախաձեռնության շրջանակներում

Նախաձեռնության նպատակը պաշտպանության ոլորտում կոռուպցիայի նվազեցումն ու բաց կառավարման էթիկայի բարելավումն է:

1-ին փուլ. ՆԱՏՕ-ի «Բարեվարքության ամրապնդման» նախաձեռնության շրջանակներում ինքնազնահատման իրականացում: Արդյունքում՝ կներկայացվի ինքնազնահատման իրականացման մասին հաշվետվություն:

2-րդ փուլ. ինքնազնահատման արդյունքների հիման վրա բարեվարքության ամրապնդման գործողությունների ծրագրի մշակում եւ իրականացում:

1.4. Ամբուլատոր-պոլիկլինիկական վերլուծական հաշվետվական կայքէջի ստեղծում

Նպատակն է ապահովել բնակչության մասնակցությունը ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի կողմից ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, հայտնաբերման եւ բուժման ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների գնահատմանը՝ տեղեկատվության էլեկտրոնային միջոցների կիրառմամբ: Արդյունքում ակնկալվում է ծրագրի իրականացման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների տեղադրում՝ ըստ մարզերի եւ առանձին բուժօգնականների, բնակչի համար սկրինինգային հետազոտությունների իրականացման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության տեղադրում, բնակչի ԱԿՊ բժշկի մոտ գրանցման եւ սկրինինգային հետազոտությունն անցնելու վերաբերյալ տվյալների ստուգման հնարավորության ապահովում:

1.5. Պետական առողջապահական գործակալության տեղեկատվական-վերլուծական կայքէջի ստեղծում

Նպատակն է ապահովել պետական պատվերի շրջանակներում ցուցաբերված բժշկական օգնության եւ սպասարկման ծավալների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը: Արդյունքում ակնկալվում է պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ քանակագումարային ամփոփ հաշվետվությունների տեղադրում՝ մարզային եւ առանձին բուժօգնականների կտրվածքով, պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների, ծառայությունների որոնման հնարավորության ապահովում, պետական պատվերի շրջանակներում բուժօգնության մատուցման հիմնական սկզբունքների վերաբերյալ թարմացվող տեղեկատվության հրապարակում (բնակչության սոցիալական/հատուկ խմբերի վերաբերյալ, պահանջվող փաստաթղթերի ցանկեր):

2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

2.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի ավտոմատ կերպով հրապարակայնացում՝ էլեկտրոնային համակարգից հանձնաժողովի ինտերնետային կայքի միջոցով

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի 40%-ը կ'էլեկտրոնայնացվի:

2.2. Հանրային ծառայողների գիտելիքների եւ հմտությունների բարելավում՝ տեղեկատվության ազատության ոլորտում

Համագործակցելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հիմնադրած Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնի հետ, 200 քաղաքացիական եւ համայնքային ծառայողների համար կ'կազմակերպվեն դասընթացներ տեղեկատվության ազատության վերաբերյալ: Երկօրյա ուսուցումները կ'անցկացվեն 10 անգամ՝ 20 հոգանոց խմբերով: Այս դասընթացները հանրային ծառայողներին կ'օգնեն բաց եւ հաշվետու աշխատել հանրության հետ, ինչպես նաեւ պատշաճ կերպով մշակել եւ արձագանքել տեղեկատվություն ստանալու հարցումներին:

2.3. Տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներին ընթացք տալու մասին կարգի մշակում

ՀՀ կառավարությունը կ'մշակի եւ կ'ընդունի «Պետական կառավարման համակարգում դիմողներից ստացած տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներին ընթացք տալու վերաբերյալ» որոշում: Որոշմամբ կ'հստակեցվեն էլեկտրոնային փոստով ստացվող տեղեկություն ստանալու հարցումները գրանցելու, դրանց ընթացք տալու ժամկետներն ու կարգը:

2.4. Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության ապահովում

Պետական կառավարման մարմինները յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակում կ'հրապարակեն նախորդ տարվա տեղեկություն ստանալու հարցումների ամփոփ վիճակագրություն՝ (քանի հարցում է ստացվել, քանիսն է բավարարվել, մերժվել եւ ինչ հիմքով):

2.5. Պաշտոնական տեղեկատվության պրոակտիվ հրապարակման ապահովում

Հայաստանի Հանրապետության թվով 200 համայնքներում կ'գործարկվեն համացանցային կայքերը: Նպատակն է բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը, թափանցիկությունը եւ հաշվետվողականությունը: Իրականացվելիք աշխատանքների արդյունքում քաղաքապետարաններում (գյուղապետարաններում) կ'ստեղծվեն անհրաժեշտ կարողություններ համացանցային կայքերի գործարկումն ու դրանց ընթացիկ սպասարկումը կանոնավոր կերպով իրականացնելու համար:

3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՑ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

3.1 Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց թղթային տարբերակով ներկայացվող հայտարարագրերից անցում հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգի

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի 40%-ը կ'էլեկտրոնայնացվի:

3.2. Մաքսային ձեւակերպման ոլորտում նախնական հայտարարագրման եւ ամբողջովին էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրում

Էլեկտրոնային մաքսային հայտարարագրման համակարգի ամբողջականացումը դյուրացնելու եւ հասանելի է դարձնելու հայտարարագրումը՝ անկախ հայտարարատուի գտնվելու վայրից: Արդյունքում ակնկալվում է համակարգից օգտվողների թվաքանակի աճ ինքնահայտարարագրող տնտեսվարող սուբյեկտների շրջանում (առնվազն 5 տոկոս՝ տարեկան):

Միաժամանակ, ակնկալվում է ամրապնդել համակարգի հանդեպ գործարար հանրության վստահությունը՝ շնորհիվ ավտոմատացման արդյունքում հայտարարագրման գործընթացներում մարդկային գործոնի ազդեցության եւ դրանից բխող կոռուպցիոն ռիսկերի նվազման:

3.3. Զաղաքաշինական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում եւ համայնքների կողմից դրանց փուլային գործարկում

Համակարգի ներդրման միջոցով կապահովվի կառուցապատման գործընթացի իրականացման ընթացքում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական թույլատվական փաստաթղթերի ձեռքբերման մատչելիությունը՝ արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Նախատեսվում է մինչեւ 2014թ. ավարտը համակարգը ներդնել եւ գործարկել ՀՀ թվով 37 խոշոր քաղաքային համայնքներում, այլ քաղաքային համայնքներում՝ 2014-2016թթ.:

Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն կբարձրանա կառուցապատման գործառնություններից օգտվողների սպասարկման որակը, գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաեւ կնվազեցվեն կոռուպցիոն ռիսկերը, կապահովվի թույլատվական ընթացակարգերի վերահսկելիությունը ողջ գործընթացի իրականացման ընթացքում:

3.4. Հայաստանի Հանրապետության թվով 250 համայնքներում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում

Նպատակն է հանրային կառավարման ոլորտում փաստաթղթաշարժի միասնական համակարգի ձեւավորումը, կառավարման ոլորտում օպերատիվության եւ որակի բարձրացումը: Արդյունքում ակնկալվում է ապահովել էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակում տեղական ինքնակառավարման մարմինների եւ պետական կամ տարածքային կառավարման մարմինների միջեւ:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

4.1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում

2012 թվականից ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով: Համակարգը հնարավորություն է տալիս ՀՀ քաղաքացիներին աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող որեւէ հարցով դիմել միասնական ընդունարան եւ ստանալ հնարավոր խնդիրների լուծումը՝ բացառելով դրամական վճարների (կենսաթոշակներ, նպաստներ կամ դրամական օգնություն) համար դիմելիս քաղաքացի-սոցիալական աշխատող անմիջական կապը, դրանով նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: 2013թ. օգոստոսի դրությամբ հանրապետությունում գործում են ինտեգրված սոցիալական ծառայությունների 19 կենտրոններ, եւս 35 կենտրոններ նախատեսվում է ձեւավորել մինչեւ 2017թ.:

Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան

**2014-2016թթ Գործողությունների ծրագրի նախագծի առաջարկությունների փաթեթ
քաղաքացիական հասարակությունից**

(քաղաքացի Նարինե Մովսիսյան, Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն,
ՅԵԼՍԻՆԿՅԱՆ քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Բաց հասարակության
հիմնադրամներ-Հայաստան, «Արագ», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
հասարակական կազմակերպություններ)

29 ապրիլի, 2014թ.

Հանձնառություն	Նկարագրություն	ԲԿԳ արժեք
Իրավական ակտերի մշակում եւ ընդունում		
Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում	Ստեղծել պետական կառավարման մարմինների կողմից մշակվող իրավական ակտերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակ (օրինակ՝ ՀՀ կառավարության կայքում)՝ իրազեկելու հանրությանը բոլոր կառույցների կողմից մշակվող իրավական ակտերի մասին (այդ թվում՝ բաժանորդագրման ռեժիմով), ընձեռնելով հնարավորություն հրապարակային ներկայացնելու դիտողություններ ու առաջարկություններ, ներկայացնելով դրանց կարգավիճակը (հաշվի առնված/չառնված) եւ հաշվի չառնելու դեպքում՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Ընդունել ՀՀ կառավարության որոշում՝ բացառելու առանց հանրության պատշաճ իրազեկման իրավական ակտերի ընդունման հնարավորությունը:	Թափանցիկություն Հանրության մասնակցություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում
Հանրային ծառայություն		
Շահերի բախման ռիսկերի նվազեցում	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախաձեռնել փոփոխություն (նաեւ՝ դիտարկել առանձին օրենքի ընդունման հնարավորությունը)՝ ընդլայնելով դրա գործունեության շրջանակը՝ ներառելով բոլոր մակարդակների հանրային ծառայողներին: Ընդարձակել շահերի բախման համատեքստում դիտարկվող փոխկապակցված անձանց շրջանակը՝ ներառելով առնվազն 4-րդ աստիճանի հարազատներին:	Թափանցիկություն Հաշվետվողականություն

<p>Պաշտոնատար անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրում</p>	<p>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախաձեռնել փոփոխություն՝ ընդլայնելով դրա գործունեության շրջանակը՝ հանրային ծառայողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման պահանջները տարածելով Հայաստանի բոլոր համայնքների ղեկավարների վրա, իսկ 30.000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների դեպքում՝ դրանց ղեկավարների, նրանց տեղակալների, աշխատակազմի քարտուղարների եւ ավագանու անդամների վրա: Ընդարձակել հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակը՝ ներառելով նաեւ ամուսնացած եւ առանձին բնակվող 1-ին աստիճանի հարազատներին: Ամբողջությամբ հրապակայնացնել հայտարարագրերը՝ ապահովելով միայն մասնավոր կյանքին առնչվող տվյալների գաղտնիությունը:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն</p>
<p>Հայտարարագրված գույքի եւ եկամուտների աղբյուրների հրապարակում</p>	<p>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախաձեռնել փոփոխություն՝ սահմանելով պահանջ՝ պաշտոնատար անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրերում նշված տվյալները համադրելու նրանց վերջին երեք տարիների աշխատավարձերի հետ եւ դրանցից էական շեղման դեպքում ստանալու համապատասխան հիմնավորում: Ապահովել բաժնեմասով, բաժնետոմսերով կամ այլ կերպ նրանց կամ նրանց փոխկապակցված անձանց պատկանող առետրային կազմակերպությունների եկամուտների եւ հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության կցում հայտարարագրին:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն</p>
<p>Պաշտոնատար անձանց կողմից իրականացված իրավախախտումների վերաբերյալ տվյալների հրապարակում</p>	<p>Պաշտոնատար անձանց կողմից իրականացված խախտումների վերաբերյալ ծառայողական քննության նյութերը հրապարակել այդ մարմինների կայքերում՝ վարչական իրավախախտումների եւ իրավապահ մարմինների կայքերում՝ հանցագործությունների դեպքերում:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն</p>
<p>Ընտրություններ</p>		
<p>Ընտրություններին քաղաքացիների մասնակցության հավաստում</p>	<p>ՀՀ ընտրական օրենսգրքում նախաձեռնել փոփոխություն՝ ներկայացնելով պահանջ տեղական եւ համապետական ընտրությունների հաջորդ օրը հրապարակելու ընտրություններին մասնակցող անձանց անուն-ազգանունները եւ հասցեները՝ համապատասխան ընտրատեղամասերում, իսկ երրորդ օրը՝ տեղադրելու այդ ցուցակները համացանցում:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>

<p>Քվեարկության գործընթացի թափանցիկության ապահովում</p>	<p>ՀՀ ընտրական օրենսգրքում նախաձեռնել փոփոխություն՝ ներկայացնելով պահանջ՝ կահավորելու բոլոր ընտրատեղամասերը եւ դրանց մուտքերը առնվազն 4 համացանցային տեսախցիկներով, տեսանկարահանելու եւ առցանց հեռարձակելու քվեարկության օրվա ողջ գործընթացը, ինչպես նաեւ պահպանելու տեսանկարահանված այդ տեղեկությունները ԿԸՀ արխիվում:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>
<p>Տեղեկատվության ազատություն</p>		
<p>Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկությունների պրոակտիվ տարածում</p>	<p>«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նախաձեռնել փոփոխություն՝ ապահովելու տեղեկատվության վերահսկողական մեխանիզմ տեղեկություն տնօրինողների (տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական մարմիններ, տեղական եւ պետական բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, հանրային նշանակության կազմակերպություններ) կողմից «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված պարտավորությունների կատարումը՝ տեղեկությունների պրոակտիվ ռեժիմով քաղաքացիներին տրամադրման համար:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>
<p>Հանրային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն</p>	<p>«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նախաձեռնել փոփոխություն՝ ընդլայնելու դրա գործողության շրջանակն ու հանրային նշանակության կազմակերպությունների շարքում ներառելով հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպություններին (օրինակ՝ ընդերքօգտագործողներ, հանրային տարածքների վարձակալներ, հեռուստահեռարձակողներ եւ այլն) եւ շրջակա միջավայրի եւ մարդու վրա ազդեցություն ունեցող գործունեության (ծխախոտեղենի, ալկոհոլեղենի եւ այլնի ներկրում, արտադրություն, իրացում) մեջ ներգրավված մասնավոր ընկերություններին:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն</p>

Հանրային ռեսուրսների կառավարում		
Հեռուստառադիոընկերությունների սեփականատերերի եւ եկամուտների թափանցիկության ապահովում	«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում նախաձեռնել փոփոխություն՝ առցանց հրապարակելու հեռուստառադիոընկերությունների սեփականատերերի՝ համապատասխան մասնաբաժիններով եւ ֆինանսավորման աղբյուրները եւ գումարները, իսկ դրանց փոփոխությունները դարձնել հրապարակային 10-օրյա ժամկետում:	Թափանցիկություն Նոր տեխնոլոգիաների կիրառում
Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում	Անդամակցել Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI)՝ ոլորտի ծախսերի եւ եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների եւ պետության հաշվետվողականությունն ապահովելու նպատակով:	Թափանցիկություն Հանրային մասնակցություն Հաշվետվողականություն
Մասնավորեցման գործընթացների թափանցիկության ապահովում	Մշակել իրավական ակտ՝ ապահովելու հանրային սեփականության մասնավորեցման գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման եւ մասնակցության կարգ:	Թափանցիկություն Հանրային մասնակցություն Հաշվետվողականություն
Հանրային ֆինանսներ		
Հանրային միջոցներով աշխատող պետական եւ համայնքային մարմինների, հիմնարկների եւ կազմակերպությունների ստուգումների արդյունքների հրապարակայնության ապահովում	«Ներքին աուդիտի մասին» եւ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներում նախաձեռնել փոփոխություններ՝ ապահովելու պետական եւ համայնքային բյուջետային միջոցներով աշխատող մարմինների, հիմնարկների եւ կազմակերպությունների ստուգումների արդյունքների/եզրակացությունների առցանց հրապարակումը:	Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում
Քաղաքացիական հասարակության կառույցներին տրամադրվող ֆինանսավորման թափանցիկության ապահովում	Սահմանել հստակ ընթացակարգեր քաղաքացիական հասարակության կառույցներին տրամադրվող պետական եւ համայնքային դրամաշնորհների, ֆինանսական եւ/կամ նյութական օժանդակության ու դրանց հրապարակայնացման համար՝ ներառելով գործընկերների ընտրության չափանիշները, դրամաշնորհառու կազմակերպությունների ընտրության չափանիշները, մրցույթների անցկացման կարգը, գնահատման մեխանիզմները, ընտրված կազմակերպությունների եւ դրանց հիմնադիրների/ղեկավարների մարմնի անդամների ցանկը, տրամադրվող գումարները եւ ստացվող արդյունքները:	Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում

<p>Մասնավոր լրատվամիջոցներին տրամադրվող ֆինանսավորման թափանցիկության ապահովում</p>	<p>Իրավական ակտերով ամրագրել մասնավոր լրատվամիջոցներին տրամադրվող օժանդակության առցանց հրապարակման վերաբերյալ պահանջ:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>
<p>Բացահայտված խախտումների քննություն եւ հրապարակում</p>	<p>Օրենքով ամրագրել ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բացահայտված բյուջետային միջոցների եւ պետական ու համայնքային սեփականության օգտագործման խախտումների առնչությամբ քրեական գործ հարուցելու պահանջ եւ ապահովել դրանց հրապարակայնությունը ՀՀ դատախազության կայքում:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>
<p>Հանրային գնումներ</p>		
<p>Մեկ անձից գնումների սահմանափակում</p>	<p>«Գնումների մասին» ՀՀ օրենքում նախաձեռնել փոփոխություն՝ սահմանելով «գնման անհետաձգելի պահանջ» դրույթը՝ մեկ անձից կատարվող գնումների պրակտիկան սահմանափակելու նպատակով:</p>	<p>Թափանցիկություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>
<p>Բողոքարկման գործընթացի թափանցիկության ապահովում</p>	<p>Կազմակերպել գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>
<p>Տեղական ինքնակառավարում</p>		
<p>Համայնքների ներկայացուցչական մարմինների՝ ավագանիների պատշաճ գործունեության ապահովում</p>	<p>Բոլոր համայնքներում ապահովել ավագանու գործունեության պատշաճ աշխատանքային պայմաններ, այդ թվում՝ նստավայր եւ հանրության մասնակցության համար համապատասխան տարածք ու պայմաններ եւ վերահսկել ավագանու գործունեության մասին հանրության իրազեկման եւ մասնակցության գործընթացը:</p>	<p>Թափանցիկություն Հանրային մասնակցություն</p>
<p>Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում</p>	<p>Ապահովել Հայաստանի 20.000 եւ ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծումը, թարմացումը, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակումը, ավագանու նիստերի նիստերի, հանրային քննարկումների եւ լսումների վերաբերյալ ծանուցումը եւ ավագանու նիստերի ուղիղ համացանցային հեռարձակումը:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>

<p>Հանրային մասնակցության հնարավորության ապահովում տեղական խնդիրներին առնչվող հայեցակարգերի, պլանների, ծրագրերի եւ իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացներին</p>	<p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում ամրագրել պահանջ՝ երաշխավորելու տարածքային կառավարմանն ու տեղական ինքնակառավարմանն առնչվող բարեփոխումների հայեցակարգերի, պլանների, ծրագրերի եւ իրավական ակտերի նախագծերի մշակման եւ փոփոխության դեպքում, ինչպես նաեւ համայնքներին առնչվող այլ որոշումների ընդունման գործընթացում շահագրգիռ հանրության պատշաճ ծանուցում (առցանց ծանուցում՝ ինտերնետային կայքեր ունեցող համայնքներում եւ/կամ տպագիր հայտարարություն ՏԻՄ նստավայրում՝ ինտերնետային կայքեր չունեցող համայնքներում) եւ կազմակերպել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հանրային լսումների առնվազն երկու փուլ:</p>	<p>Թափանցիկություն Հաշվետվողականություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>
<p>Համայնքային բյուջեների եւ քառամյա զարգացման ծրագրերի թափանցիկության եւ իրականացման հաշվետվողականության ապահովում</p>	<p>Բոլոր համայնքներում իրականացնել բյուջեների, համայնքի զարգացման քառամյա ծրագրերի նախագծերի եւ բյուջեների տարեկան կատարողականի հաշվետվությունների առնվազն մեկական հանրային լսում: «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքում պատասխանատվություն ամրագրել՝ օրենքով սահմանված կարգով հանրային լսումներ չկազմակերպելու համար:</p>	<p>Թափանցիկություն Հանրային մասնակցություն Հաշվետվողականություն</p>
<p>Ընդհանուր</p>		
<p>Պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառության հանրամատչելիության ապահովում</p>	<p>Ի կատարումն ՀՀ կառավարության 24.09.2010թ. «Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառությունում պարտադիր կիրառման հայկական համակարգչային տառատեսակները հաստատելու մասին» N1259-Ն որոշման, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր կայքերի տեղեկատվությունը գետեղել UNICODE համակարգով, իսկ այլ համակարգով եղած բոլոր տեքստերը եւ տեղեկությունները փոխարինել UNICODE համակարգի տեղեկություններով:</p>	<p>Թափանցիկություն Նոր տեխնոլոգիաների կիրառում</p>

ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագիր (2014-2016 թվականներ)

Հաստատվել է ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի նիստում՝ N32 արձանագրային որոշմամբ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը, Սահմանադրությամբ հռչակվելով որպես ժողովրդավարական երկիր, մշտապես ձգտում է բարեփոխումների ճանապարհով հասնել գործունե ժողովրդավարության: Ժամանակակից աշխարհում հասարակություններն իրենց կառավարություններից պահանջում են լինել բաց, հաշվետու և արդյունավետ՝ ակնկալելով առավել ակտիվ քաղաքացիական մասնակցություն հանրային կառավարման գործընթացներում:

Ելնելով այս հրամայականից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակում է իր ուշադրության կիզակետում պահել պետական կառավարման համակարգի արդյունավետության աստիճանի բարձրացումը:

Ակներև է, որ մեր երկիրն այս ճանապարհին չէր կարող անմասն մնալ «Բաց կառավարման գործընկերություն» (այսուհետ՝ ԲԿԳ) գործընթացից: ԵՎ 2011թ. աշնանը Հայաստանի Հանրապետության որոշումը՝ միանալու ԲԿԳ նախաձեռնությանը՝ վկայում է Հայաստանի պատրաստակամության մասին՝ ապահովելու առավել բարձր մակարդակի թափանցիկություն և հաշվետվողականություն հանրային ծառայություններ մատուցելիս: ԲԿԳ գործընթացը կառավարության օրակարգի կարևորագույն մաս է կազմում՝ գտնվելով ՀՀ կառավարության աշխատակազմի անմիջական վերահսկողության ներքո:

Նախաձեռնությունը հիմնալի հնարավորություն է ընձեռում ունենալ այնպիսի ինստիտուտներ, որոնք կնպաստեն քաղաքացու ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացներում:

Հայաստանի Հանրապետությունը հաջողությամբ կատարել է ԲԿԳ-Հայաստան 2012-2013 թվականների համար նախատեսված իր առաջին գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունները: Դրանց հիմնական դրույթներն առավելապես նպատակաուղղված են եղել Հայաստանում հանրային կառավարման համակարգի արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանը, մասնավորապես՝ հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը, էլեկտրոնային կառավարման զարգացմանը, ներքին աուդիտի համակարգի կատարելագործմանը, պետական գնումների գործընթացի կատարելագործմանը և թափանցիկության ապահովմանը, հանրային ծառայությունների որակի բարելավմանը, տեղեկատվության ազատության զարգացմանը, հարկային վարչարարության թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և այլն: Այս համատեքստում վստահաբար պետք է փաստել, որ Հայաստանը թե իր պարտավորությունների ծավալով և թե դրանց իրականացման աստիճանով զբաղեցնում է բավական առաջատար դիրքեր: Այդ գործընթացում բարձր է գնահատվում, հատկապես, հայաստանյան պարտավորությունների կատարման շրջանակներում ներգրավված բոլոր գործընկերների ցուցաբերած աջակցությունը և ներդրած ջանքերը:

Վերոնշյալ ծրագրի իրականացման արդյունքներն ամփոփված են ԲԿԳ-Հայաստան ինքնագնահատման տարեկան զեկույցում, որը հրապարակվել է 2013 թվականի աշնանը:

Նշենք, որ Հայաստանը այս 2 տարիների ընթացքում զգալիորեն բարելավել է իր դիրքերը մի շարք ցուցանիշներով: Համաաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 29-ին հրապարակված «Կարգավորումների ընկալումը ՓՄՁ-ների համար 2014» զեկույցի համաձայն՝ գործարարությամբ զբաղվելու վարկանիշով Հայաստանը 189 երկր-

Ների շարքում զբաղեցնում է 37-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով իր դիրքերը երեք կետով: 2013 թվականի օգոստոսին «Մուդիս» վարկանիշային կազմակերպությունը Հայաստանի վարկանիշը գնահատել է «կայուն» Baa2՝ նախորդ տարվա «բացասականի» փոխարեն:

ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ

ՀՀ կառավարությունը շարունակում է հավատարիմ մնալ քաղաքացիների համար ավելի թափանցիկ և հաշվետվողական դառնալու իր հանձնառությանը՝ արդյունքում կառավարման համակարգն առավելագույնս համապատասխանեցնելով նրանց կարիքներին և ձգտումներին: Պետական ինստիտուտների և արդյունավետ կառավարման համակարգի ամրապնդումը պետության առաջնահերթություններից է, և վերջին տասնամյակում Հայաստանի իշխանություններն իրականացրել են մի շարք միջոցառումներ այդ ուղղությամբ, մասնավորապես.

Մասնակցային և առավել թափանցիկ կառավարման ոլորտում

- կառավարության որոշումների նախագծերի տեղադրում ինտերնետային կայքում դեռևս քննարկման փուլում.
- կառավարության նիստերի օնլայն հեռարձակում լրագրողների համար.
- ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների տեղադրում www.e-gov.am կայքում.
- բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի հրապարակում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (www.ethics.am).
- կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում (Կարգավորման «Guillotine» ծրագիր)՝ թեթևացնելով բիզնեսի և քաղաքացիների վրա ընկնող կարգավորումների բեռը՝ առնվազն երկու անգամ կրճատելով գործառնական ծախսերը:

Պետական կառավարման համակարգում հաշվետվողականության ապահովմանն ուղղված նոր սկզբունքների և մոտեցումների ներդրման գործում

- ցանկացած միջոցառում կամ միջոցառումների ծրագիր, որը ներկայացվում է որևէ պետական մարմնի կողմից, պետք է պարունակի ծրագրի արդյունքների հստակ ձևակերպում, ընդ որում այդ արդյունքները պետք է լինեն չափելի.
- պետական կառավարման մարմինները պարբերաբար ներկայացնում են կատարողական հաշվետվություններ, որոնց հիման վրա գնահատվում է նրանց և ամեն մի աշխատակցի իրականացրած աշխատանքը:

Մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման ոլորտում

- ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրում և փորձաքննության անցկացում. այժմ մինչև 2.5 տոննա գյուղատնտեսական մթերք արտահանող անձինք ներկայացնում են ընդամենը 4 փաստաթուղթ և ստանում հավաստագիր՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում.
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի, տեղական տուրքի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող

- վճարի կամ վարչական տուգանքների, ինչպես նաև հարկերի առցանց վճարման հնարավորություն.
- քաղաքաշինարարական թույլտվական ընթացակարգերի գումարային ժամկետի կրճատում, սահմանված դեպքերում բնակելի տուն կառուցելիս նախագծման առաջադրանքի, նախագծային փաստաթղթերի պատվերի և փորձաքննության պահանջի վերացում.
- 2012թ. հունվարի 1-ից անշարժ գույքի կադաստրի վարման համար նախատեսված «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի գործարկում (www.e-cadastre.am).
- ճանապարհային ուստիկանության ոլորտում՝ բարեփոխումներ տրանսպորտային միջոցների գրանցման, վարորդական վկայականների տրամադրման, տուգանքների և վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ.
- դեղերի, դեղանյութերի ներմուծման հավաստագրերի տրամադրման գործընթացը դյուրացնելու, քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակը և օպերատիվությունն ապահովելու նպատակով ներդրվել է դեղերի ներմուծման և արտահանման հավաստագրերի տրամադրման մեկ պատուհանի սկզբունքով գործող համակարգը.
- հարկային վարչարարության ոլորտում իրականացրած հիմնական բարեփոխումների արդյունքում էլեկտրոնային ծառայությունների ընդլայնում, հարկ վճարողների սպասարկման բարելավում:

Հատկանշական է, որ ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմի (այսուհետ՝ ԱՀՄ) կողմից, հատկապես, բարձր են գնահատվել ծրագրային բյուջետավորման ներդրմանը, գնումների ընթացակարգերի բարելավմանը, գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովմանը, պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացմանը, տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանը, հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանմանը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված քայլերը: Հիմք ընդունելով այդ քայլերը զարգացնելուն ուղղված ԱՀՄ-ի հորդորը և հաշվի առնելով առաջին ծրագրի մշակման և իրականացման արդյունքում ձեռք բերված աննախադեպ փորձը՝ ՀՀ կառավարությունը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ, մշակել է ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագիրը:

Հարկ է նշել, որ ծրագրի վերջնական ամփոփումը և ՀՀ կառավարության կողմից դրա հաստատումը համընկան ՀՀ վարչապետի գլխավորությամբ ՀՀ կառավարության հրաժարականի և նոր կառավարության ձևավորման հետ: Ուստի, վերոնշյալ հանգամանքով է պայմանավորված ծրագրի՝ սահմանված ժամանակացույցից փոքր-ինչ շեղումով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատելու և ներկայացնելու փաստը:

ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Շարունակելով պետական կառավարման համակարգի արդյունավետությանն ուղղված իր ջանքերը՝ 2013 թվականի վերջից ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նախագծի մշակման գործընթացը: Նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով ԲԿԳ նախաձեռնության հիմնարար սկզբունքները, ինչպես նաև ԲԿԳ-Հայաստան առաջին գործողությունների ծրագրից քաղված դասերը: Նախագիծը կազմվել է ինչպես կառավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացրած առաջարկությունների հիման վրա՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, առողջապահությունը, կրթությունը, տեղական ինքնակառավարումը, տեղեկատվության ազատությունը և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային ծառայությունների բարելավումը, հանրային միջոցների արդյունավետ կառավարումը և հանրային վստահության խթանումը ԲԿԳ հիմնական մարտահրավերներից են, ՀՀ կառավարությունը իր ԲԿԳ երկրորդ գործողությունների ծրագիրը մշակելիս առաջնորդվել է վերոնշյալ մարտահրավերների հաղթահարմանն ուղղված համապատասխան պարտավորությունների ներգրավման սկզբունքով:

Ծրագրում ներառված յուրաքանչյուր պարտավորություն թիրախային է և ընտրված է համակողմանի քննարկումների արդյունքում: Ծրագրի նախնական տարբերակը մշակվել է պետական մարմինների ներկայացրած առաջարկությունների հիման վրա: Այնուհետև հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության առաջարկությունները ստանալու նպատակով նախագիծը տեղադրվել է www.ogp.am կայքում: Ձուգահեռաբար նախագիծը մի քանի անգամ քննարկվել է համապատասխան աշխատանքային խմբի նիստերի ժամանակ (մասնավորապես՝ 2013թ. սեպտեմբերի 9, 2013թ. նոյեմբերի 26): Հանրային քննարկումները շարունակելու նպատակով ՀՀ կառավարությունը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ 2014թ. ապրիլի 5-6-ը Աղվերանում կազմակերպել է «ԲԿԳ-Հայաստան. թափանցիկություն և հաշվետվողականություն. համագործակցություն կառավարության և քաղաքացիական հասարակության միջև» աշխատանքային քննարկումը: Միջոցառման ընթացքում քննարկվել է ինչպես ծրագրի նախագիծը, այնպես էլ վերջինիս առնչությամբ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացրած նոր առաջարկությունները:

Միաժամանակ, ծրագրում նոր առաջարկություններ ընդգրկելու և հանրային իրազեկում ապահովելու նպատակով Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի զխավորությամբ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում մի շարք հասարակական կազմակերպությունների տրամադրած առաջարկություններ ևս ներկայացվել են ՀՀ կառավարություն: Վերոնշյալ առաջարկությունները քննարկելու և լրացուցիչ պարզաբանումներ ստանալու նպատակով 2014թ. հունիսի 5-ին ՀՀ կառավարության աշխատակազմում կազմակերպվել է քաղաքացիական հասարակության և պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ աշխատանքային հանդիպում: Ծրագրի նախագծի վերջնական տարբերակը քննարկվել և հավանության է արժանացել 2014թ. հունիսի 15-ին կայացած ՀՀ վարչապետի 2014թ. հունիսի 15-ի N 656-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստի ժամանակ:

Ծրագրի նախագծի վերջնական տարբերակը քննարկվել է հավանության է արժանացել 2014թ. հունիսի 15-ին կայացած ՀՀ վարչապետի 2014 թ. հունիսի 15-ի N 656-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստի ժամանակ: Նախագծի վերաբերյալ վերջնական հանրային քննարկումը տեղի է ունեցել 2014 թ. հունիսի 18-ին Երեւանում՝ ՀՀ կառավարության եւ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, ինչպես նաև ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ կազմակերպված միջոցառման շրջանակներում: Աշխատաժողովին, վերոնշյալ աշխատանքային խմբի անդամներից բացի մասնակցել են նաև մի շարք այլ քաղաքացիական հասարակության եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ծրագրում չեն ներառվել այն առաջարկությունները, որոնք չեն համապատասխանել ԲԿԳ արժեքներին և ձևաչափին: Նոր օրենքների նախագծերի մշակման և ընդունման, ինչպես նաև գործող օրենքներում փոփոխություններ կատարելու պահանջ ենթադրող առաջարկությունները նույնպես չեն ներառվել ծրագրում, քանի որ ՀՀ-ում օրենքներն ընդունվում են Ազգային ժողովի կողմից, և կառավարությունը չի կարող երաշխավորել դրանց ընդունումը: Չնայած այդ հանգամանքին՝ ՀՀ կառավարությունը պատրաստակամություն է հայտնել քաղաքացիական հասարակության հետ քննարկել ծրագրում չընդգրկված առաջարկությունների իրականացման հնարավոր մեխանիզմները՝ ԲԿԳ նախաձեռնությունից դուրս:

ԲԿԳ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՄ

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ -ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում				
Լիազոր մարմին		ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն		
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն			
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն		
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում հավաքագրվող հանրապետության տարածքում կատարված ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունները, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում ստացված երկրաբանական և այլ տեղեկատվությունը՝ համապատասխան փաստաթղթերի (տեղեկանքների, հաշվետվությունների, գծագրական նյութերի և այլն) տեսքով պահվում է թղթային կրիչների միջոցով, ինչը սահմանափակում է երկրաբանական տեղեկատվության հասանելիությունը հանրության համար:		
Հիմնական նպատակը		Նախատեսվում է ամբողջությամբ թվայնացնել ֆոնդում առկա տեղեկատվական բազան՝ միաժամանակ ապահովելով նոր ստացվող նյութերի (քարտեզներ, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ, այլ փաստաթղթեր) թվայնացումը: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է թվայնացնել օգտակար հանածոների մոտ 750 հանքավայրերի և 600 հանքերակույցների վերաբերյալ կազմված շուրջ 12.000 երկրաբանական հաշվետվություններ և 8.000 միավոր քարտեզագրական և գծագրական փաթեթներ, ստեղծել ինտերնետ կայք, որում զետեղված կլինի ամբողջ նյութը (PDF, JPG, EXEL և այլ ֆորմատներով), գործածելով տեղեկատվության որոնելիության դյուրինության սկզբունքը, ընդ որում կայքում տեղադրվող նյութերի ուսումնասիրության դյուրինությունն ապահովելու համար կստեղծվի ՀՀ ինտերակտիվ քարտեզ և համապատասխան նյութերը կամրակցվեն ՀՀ համապատասխան տարածքներին: Վերոնշյալ ինտերնետ կայքում նաև կիրառարակվի հետևյալ տեղեկատվությունը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին և մետաղային օգտակար հանածոների քարտեզը, որն այժմ հրապարակվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կայքում (http://www.minenergy.am): Այսպիսով բարելավվելու է տեղեկատվության դյուրին հասանելիությունը հանրությանը:		
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում		
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն	
		V	Հանրային մասնակցություն	
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Թվայնացնել ֆոնդի առնվազն 15-20%-ը, ստեղծել նաև ինտերնետ կայք և արդեն իսկ թվայնացված տեղեկատվությունը տեղադրել կայքում		Նոր	2014թ. դեկտեմբեր	2015թ. հունիս
2. Ուսումնական աշխատանքներ ֆոնդի համապատասխան 2-4 աշխատակիցների հետ (թվայնացմանը զուգահեռ)		Նոր	2014թ. դեկտեմբեր	2015թ. հունիս
3. Թվայնացնել ֆոնդի 100%-ը		Նոր	2014թ. դեկտեմբեր	2016թ. դեկտեմբեր և շարունակական
4. Կկազմակերպվի ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ, այդ թվում՝ բուկլետների տպագրություն և բաժանում, կայքի շնորհանդես համապատասխան շահագրգիռ մասնակիցներով և այլ միջոցառումներ		Նոր	2015թ. մայիս	Շարունակական
5. Նոր ստացված երկրաբանական և այլ տեղեկատվության շարունակական թվայնացում		Նոր	2014թ. դեկտեմբեր	Շարունակական

2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում			
Լիազոր մարմին		ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված		
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		Հանքարդյունաբերական ոլորտում առկա ներկայիս իրավիճակը չի բավարարում պետության և հասարակության կողմից ներկայացվող ժամանակակից պահանջներին. մասնավորապես՝ ծախսերի և եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների և պետության հաշվետվողականության մակարդակը բարելավման կարիք ունի:	
Հիմնական նպատակը		Նախաձեռնությանը միանալը կբարձրացնի ոլորտի թափանցիկությունը, կնպաստի հաշվետվողականության բարձր մակարդակի ապահովմանը, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավմանը:	
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային վստահության բարելավում, Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն
		V	V
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր
Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելու գործընթացի մեկնարկ, մասնավորապես՝ բնարկումների, բանակցությունների անցկացում և նախապատրաստական այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացում:		Նոր	2014թ. հոկտեմբեր
			2016թ. դեկտեմբեր

3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում			
Լիազոր մարմին		ՀՀ առողջապահության նախարարություն	
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն		
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված		
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		Առկա է մեծ բաց առողջապահության ֆինանսավորման համակարգում գոյություն ունեցող զարգացումների վերաբերյալ, քաղաքացիները չգիտեն և չեն կարողանում կառավարել իրենց իրավունքները առողջապահության համակարգի մի շարք օղակներում՝ այդ թվում՝ հիվանդանոցային բուժօգնությ. ուն. ստանալիս և առողջության առաջնային պահպանման ծառայություններ ստանալու ընթացքում: Բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման որոշ չափորոշիչներում նկարագրված են այդ գործընթացները, սակայն չկան այդ հարաբերությունների զարգացումները ցուցադրող դինամիկ և թափանցիկ կառավարչություններ:	
Հիմնական նպատակը		Ստեղծել առողջապահության համակարգի ֆինանսական պորտալ, որտեղ բնակչությունը, մասնագետները և հանրությունը կարող են ստանալ տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, հիմնական ծառայությունների փաթեթի վերաբերյալ, երբ պետք է պացիենտը վճարի մատուցված ծառայության դիմաց, իսկ երբ՝ ոչ, ինչպես նրանք կարող են ստանալ ռեցեպտներ, որոնք կարող են պետության կողմից երաշխավորված վճարման ենթակա լինել, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ և այլնի մասին:	
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում, Հանրային վստահության բարելավում	
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն
		V	V
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր
Առողջապահության համակարգի ֆինանսական պորտալի ստեղծում			
<ul style="list-style-type: none"> • Հանրային օգտագործման համար ավելի քան 25 հաշվետվություններ • Մասնագիտական շրջանների շուրջ 1500 օգտվող • Հանրության մասով՝ բոլոր ինտերնետ օգտագործողները 		Նոր	2014թ. սեպտեմբեր
			2015թ. սեպտեմբեր

4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում				
Լիազոր մարմին		Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)		
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն		
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Տեղեկատվության ազատության կենտրոն» ՀԿ, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն (համաձայնությամբ)		
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		ՀՀ կառավարության կողմից 2012թ. մայիսի 3-ի N 627-Ն որոշմամբ հաստատված «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակման ենթակա տվյալների ցանկը» հնարավորություն չի ընձեռում լիարժեքորեն թափանցիկ դարձնելու բարձրաստիճան պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերում ներառված գույքի բոլոր գործարքների վերաբերյալ տվյալները: Մասնավորապես, դրանք սահմանափակված են գործարքների գնի շեմերով: Հանձնաժողովը նախատեսում է վերացնել նման սահմանափակումները և ցանկանում է ընդլայնել հասարակությանը տրամադրվող տվյալների ցանկը և դրանով բարձրացնել հայտարարագրերի մատչելիությունը հասարակության համար:		
Հիմնական նպատակը		ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում		
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային վստահության բարելավում		
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն
		V		
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. «ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում եւ քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ		Նոր	2014թ. սեպտեմբեր	2015թ. փետրվար
2. Նախագծի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ եւ ՀՀ կառավարության որոշման ընդունում		Նոր	2014թ. մարտ	2015թ. հունիս

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում				
Լիազոր մարմին		ՀՀ ֆինանսների նախարարություն		
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն			
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված			
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		Կազմակերպության մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ գնումների բողոքարկման խորհրդի որոշումները շատ դեպքերում հարցեր են առաջացնում, որոնց պատասխանները գտնելու համար միայն դրանց հրապարակումը բավարար չէ, և անհրաժեշտ է ծանոթանալ նաև, թե ինչպես են դրանք ընդունվել խորհրդի նիստերի ժամանակ:		
Հիմնական նպատակը		Գնումների բողոքարկման խորհրդի որոշումների ընդունման թափանցիկության ապահովում		
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, Հանրային վստահության բարելավում		
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն
		V	V	
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Բանակցել մասնավոր ընկերությունների հետ, հստակեցնել համապատասխան աշխատանքների շրջանակը		Նոր	2014թ. սեպտեմբեր	2014թ. դեկտեմբեր
2. Մշակել տեխնիկական առաջադրանք և անցկացնել գնումների գործընթաց		Նոր	2015թ. հունվար	2015թ. մարտ
3. Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը առցանց հեռարձակվում են www.gnumner.am կայքով:		Նոր	2015թ. հունիս	Շարունակելի

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

6. Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում				
Լիազոր մարմին		ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)		
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն		
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (համաձայնությամբ)		
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		Կարճ հաղորդակցությունների միջոցով համայնքի բնակիչները ներգրավվում են տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացին. համայնքի բնակիչներին կարճ հաղորդ ակցության (SMS) միջոցով ուղղվում է համայնքային խնդիրների վերաբերյալ մեկ կամ մի քանի հարց՝ հնարավոր պատասխանների տարբերակներով: 24 ժամվա ընթացքում բնակիչները արձագանքում են հարցմանը՝ պատասխան SMS ուղարկելով, որտեղ նշում են պատասխանի իրենց նախընտրած տարբերակը:		
Հիմնական նպատակը		Համայնքային միկրոհարցումը մատչելի և յուրօրինակ գործիք է, որը կնպաստի համայնքի բնակիչների և ՏԻՄ -երի միջև կապի ամրապնդմանը և որոշումների կայացման գործընթացի թափանցիկության ապահովմանը:		
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային վստահության բարելավում, Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում		
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն
		V		V
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Թվով 10 համայնքներում ներդրվել է «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը		Նոր	2015թ. փետրվար	2016թ. հունիս
2. Բոլոր 10 համայնքներում իրականացվել են SMS հարցումներ և արդյունքները հրապարակվել են		Նոր	2016թ. հունիս	2016թ. դեկտեմբեր

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում			
Լիազոր մարմին		ՀՀ կառավարության աշխարակազմ	
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն	ՀՀ արդարադատության նախարարություն	
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Արագ» բարեգործական հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		Անկախ հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ պետական գերատեսչությունների կառավարման գործընթացը երբեմն ֆորմալ բնույթ է կրում բաց կառավարման հիմնարար արժեքների ընկալման և իրավակիրառական խնդիրների հետևանքով: Սա առաջացնում է հանրային անվստահություն և քաղաքացիական անտարբերություն երկրի կառավարման և վերահսկողության ձևավորման գործում: Ուստի, արդիական է քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության արդյունավետ, թափանցիկ և հաշվետու մասնակցային համակարգի ձևավորման խնդիրը:	
Հիմնական նպատակը		ՀՀ կառավարության նիստի 20 նոյեմբերի 2008թ -ի N 47 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ նախարարությունների կոլեգիաների/խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխությունների և լրացումների կատարում, որոնք - Կհստակեցնեն և կտարանջատեն Կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, կճշգրտեն դրանցում մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները; - Կսահմանեն խորհուրդների ձևավորման և գործունեության՝ բաց, թափանցիկ ընթացակարգերը, ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչները; Կսահմանեն կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվե տվողական համակարգի ներդրում՝ հանրային առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային խորհրդատվական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունը թափանցիկ և հասանելի դարձնելու համար:	
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, Հանրային վստահության բարելավում	
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում	Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն
	V	V	V
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր Ավարտի օր
1. Իրականացնել աշխատակարգերի և միջազգային փորձի ուսումնասիրություն		Նոր	2014թ. սեպտեմբեր 2014թ. դեկտեմբեր
2. Մշակել իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների առաջարկները		Նոր	2015թ. հունվար 2015թ. մարտ
3. Իրականացնել հանրային քննարկումներ, հավաքագրել նոր առաջարկներ, լրամշակել առաջարկների փաթեթը և ներկայացնել կառավարության հաստատմանը		Նոր	2015թ. ապրիլ 2015թ. հունիս
4. Իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների ընդունում		Նոր	2015թ. հուլիս 2015թ. օգոստոս

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում				
Լիազոր մարմին		ՀՀ կառավարության աշխատակազմ		
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն	ՀՀ արդարադատության նախարարություն		
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված			
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվում են իրավական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ հասարակությունը երբեմն տեղեկացվում է ոչ բավարար մակարդակով: Արդյունքում հանրությունը հնարավորություն չի ունենում ծանոթանալ ընդունվող նախագծերին մինչև դրանց ընդունումը, ներկայացնել առաջարկություններ պատասխանատու գերատեսչություններին, ինչպես նաև ներդրում ունենալ դրանց լրամշակման գործում:		
Հիմնական նպատակը		Կստեղծվի պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակ՝ իրազեկելու հանրությանը գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի մասին (այդ թվում՝ բաժանորդագրման սկզբունքով): Քաղաքացիական հասարակությանը հնարավորություն կընձեռվի ներկայացնել առաջարկություններ նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանալ դրանց կարգավիճակի վերաբերյալ (ընդունվել է, թե ոչ, ինչպես է խմբագրվել, չընդունելու հիմնավորումները):		
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային վստահության բարելավում		
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն
		V		V
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումներ ի անցկացում, առաջադրանքի ձևավորում 2. Հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծում 3. Գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցման գործընթացի ապահովում 4. Գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակում ստեղծված հարթակում		Նոր	2014թ. սեպտեմբեր	2016թ. դեկտեմբեր

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՂՈՒՄ

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում			
Լիազոր մարմին		ՀՀ կրթության և գիտության նախարարություն	
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն		
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպություն	
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		<p>ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների (ՊՈԱԿ -ների) կառավարման խորհուրդների ներկայացուցչական բնույթը երբեմն խախտվում է, քանի որ լինում են դեպքեր, երբ կառավարման խորհուրդում ընտրվում է ծնող, որը, միաժամանակ, տվյալ հաստատության մանկավարժ է: Այդ դեպքում ծնողը չի կարող լինել անաչառ, քանի որ նա, լինելով նաև մանկավարժ, աշխատում է տվյալ հաստատության տնօրենի ղեկավարության ներքո: Այդ դեպքում կառավարման խորհուրդն արդյունավետ չի կարող գործել անդամների միջև գոյություն ունեցող ուղղահայաց և հորիզոնական կապերի պատճառով: ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհուրդների ճիշտ համամասնությունն ապահովելու համար կառավարման խորհրդի ընտրության կարգում կկատարվի լրացում, համաձայն որի՝ խորհրդի կազմում ծնողական համայնքից չեն առաջադրվի այն անձինք, ովքեր ընդգրկված են տվյալ դպրոցի մանկավարժական համակազմում:</p> <p>ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության տարեկան բյուջեի պլանավորման եւ բյուջեի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ հասանելի չէ հանրակրթության ոլորտի կրթական ծառայություններ ստացողների համար, որը բացասաբար է անդրադառնում վստահության մթնոլորտի ձեւավորման եւ ծնող-դպրոց արդյունավետ համագործակցության վրա:</p>	
Հիմնական նպատակը		<p>- ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում փոփոխությունների կատարում:</p> <p>- Հանրակրթության ոլորտում մատուցվող կրթական ծառայությունների բյուջեի պլանավորման (տարեկան բյուջեի նախագծի) եւ տարեկան ֆինանսական ծախսերի թափանցիկության եւ հաշվետվողականության ապահովում հանրակրթական դպրոցների կայք էջերում եւ հաստատության հայտարարությունների անկյունում:</p>	
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային վստահության բարելավում Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում	
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն
		V	V
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր
1. Աշխատանքային խմբի ստեղծում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը ներկայացնող ներկայացուցիչների մասնակցությամբ		Նոր	2014թ. սեպտեմբեր
2. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգի լրամշակում եւ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման եւ բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգ»-ի մշակում եւ հաստատում		Նոր	2014թ. դեկտեմբեր
			2015թ. մարտ

IV. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

10. Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտում				
Լիազոր մարմին		ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ)		
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն	ՀՀ տարածքային կառավարման նախա րարություն		
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ) «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ (համաձայնությամբ)		
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		Ներկայումս շատ պետական ծառայողներ կոռուպցիայի դեմ պայքարի և տեղեկատվության ազատության (ՏԱ) ոլորտում չունեն բավարար գիտելիքներ և հմտություններ բաց և թափանցիկ գործելու համար: Հանձնառությունը կօգնի լրացնել պաշտոնյաների մոտ տեղեկատվության և գիտելիքի պակասը:		
Հիմնական նպատակը		200 քաղաքացիական ծառայողների գիտելիքները կոռուպցիայի դեմ պայքարի, ինքզինքի ձեւավորման եւ տեղեկատվության ազատության ոլորտում կբարելավվեն, ինչպես նաեւ կբարելավվեն հանրային ծառայողների գիտելիքները տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հմտությունները: Ուսուցումները կօգնեն հանրային ծառայողներին աշխատել բաց և թափանցիկ՝ առաջնորդվելով հանրային ծառայողի էթիկական կանոններով:		
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում		
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում	Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն	
	V	V		
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Կանցկացվի 10 ուսուցում 2. Կվերապատրաստվեն 200 հանրային ծառայողներ 3. Կլրացվեն 400 հարցաշարեր (200-ը՝ ուսուցման սկզբում, 200-ը՝ վերջում) 4. Հարցաշարերի հիման վրա կիրականացվեն երկու վերլուծություններ		Ընթացիկ	2015թ. փետրվար	2015թ. դեկտեմբեր

11. Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում				
Լիազոր մարմին		ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)		
Այլ շահագրգիռ մարմիններ	Կառավարություն	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն		
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ (համաձայնությամբ)		
Ներկա իրավիճակ/կարգավորման ենթակա հարցեր		Հայաստանի խոշոր համայնքների մի մասը ունեն համացանցային կայքեր, մյուսները՝ ոչ, դրանք թարմացվում են խիստ անկանոն, ոչ բոլոր կայքերում մ են հրապարակվում ՏԻՄ որոշումները (ավագանու որոշումները, համայնքապետի հրամաններն ու կարգադրությունները) կամ դրանք հրապարակվում են մասնակիորեն: Հանրային քննարկումների, լսումների, ավագանու նիստերի մասին իրազեկումն իրականացվում է ոչ բավարար մակարդակով: Ավագանու նիստերը ուղիղ համացանց են հեռարձակվում միայն Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում, իսկ որոշ համայնքներում դահլիճների բավարար տարածքի բացակայության հետևանքով երբեմն հնարավոր չի լինում ապահովել բոլոր հետաքրքրված անձանց մասնակցությունն ավագանու նիստերին:		
Հիմնական նպատակը		Կապահովվի Հայաստանի 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծումը, թարմացումը, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակումը, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցումը և ավագանու նիստերի առցանց հեռարձակումը:		
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, Հանրային վստահության բարելավում		
Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջնահայացմանն է նպաստում		Թափանցիկություն	Հաշվետվողականություն	Հանրային մասնակցություն
		V	V	V
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Նոր կամ ընթացիկ պարտավորություն	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու տեխնիկասարքավորումների գնման, եղած կայքերի վերագիմման կամ ստեղծման համար միջոցների հայթայթում 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար: Տեխնիկասարքավորումների և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթացի ապահովում:		Նոր	2014թ. հոկտեմբեր	2015թ. հուլիս
2. 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերի ստեղծում՝ հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ:		Նոր	2015թ. օգոստոս	2016թ. մարտ
3. Համայնքների համապատասխան աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում:		Նոր	2015թ. սեպտեմբեր	2016թ. փետրվար
4. Կայքերի գործարկում, թիրախ համայնքների ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակում:		Նոր	2016թ. ապրիլ	Շարունակական

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան երկրորդ գործողությունների ծրագրում ներառելու նպատակով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

Ծրագրում ներառված առաջարկություններ

N	Առաջարկություն	Նկարագրություն	Առաջարկություն ներկայացնողը
1.	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում	Տես գործողությունների ծրագրում	Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
2.	Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում	Տես գործողությունների ծրագրում	Թրանսփարենսի ինքերնեշնլ
3.	Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում	Տես գործողությունների ծրագրում	Առողջապահության նախարարություն
4.	ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում	Տես գործողությունների ծրագրում	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով
5.	Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում	Տես գործողությունների ծրագրում	Թրանսփարենսի ինքերնեշնլ
6.	Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում	Տես գործողությունների ծրագրում	Տարածքային կառավարման նախարարություն
7.	Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում	Տես գործողությունների ծրագրում	«Արագ» ԲՀԿ
8.	Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում	Տես գործողությունների ծրագրում	Ասպարեզ ակումբի ներկայացրած փաթեթից
9.	ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում	Տես գործողությունների ծրագրում	Վորլդ վիժն Հայաստան
10.	Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտում	Տես գործողությունների ծրագրում	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
11.	Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում	Տես գործողությունների ծրագրում	Ասպարեզ ակումբ

Առաջարկություններ, որոնք չեն համապատասխանում ԲԿԳ արժեքներին (թափանցիկություն, հաշվետվողականություն, հանրային մասնակցություն, տեխնոլոգիաներ/նորարարություն) եւ/կամ հավակնոտ չեն

N	Առաջարկություն	Նկարագրություն	Առաջարկություն ներկայացնողը	Հատուկ կարծիք
1	Մշակութային ծառայությունների ոլորտում տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովում	Նախատեսվում է ստեղծել Մշակութային արժեքների տեղեկատվական էլեկտրոնային շտեմարան: Շտեմարանի ստեղծման նպատակն է ապահովել մշակութային արժեքների վերաբերյալ թվայնացված տեղեկատվության հավաքագրումը, համակարգումը և հանրության լայն շերտերին միասնական ձևաչափով դրանց ներկայացումն ու հասանելիությունը, ինչպես նաև շարժական ժառանգության հետազոտման, գիտական ուսումնասիրման ու հանրահռչակման արդյունավետության բարձրացումը: Արդյունքում կստեղծվի ծրագրաշարերի և էլեկտրոնային տիրույթ, որտեղ կներկայացվեն 136,148 մշակութային արժեքների թվայնացված տվյալներ:	Մշակույթի նախարարություն	
2	ՀՀ մասնակցությունը ՆԱՏՕ-ի «Բարեվարքության ամրապնդման» նախաձեռնության շրջանակներում	Նախաձեռնության նպատակը պաշտպանության ոլորտում կոռուպցիայի նվազեցումն ու բաց կառավարման էթիկայի բարելավումն է: 1-ին փուլ. ՆԱՏՕ-ի «Բարեվարքության ամրապնդման» նախաձեռնության շրջանակներում ինքնագնահատման իրականացում: Արդյունքում կներկայացվի ինքնագնահատման իրականացման մասին հաշվետվություն: 2-րդ փուլ. Ինքնագնահատման արդյունքների հիման վրա բարեվարքության ամրապնդման գործողությունների ծրագրի մշակում և իրականացում:	Պաշտպանության նախարարություն	
3	Պաշտոնական տեղեկատվության պրոակտիվ հրապարակման ապահովում	Հայաստանի Հանրապետության թվով 200 համայնքներում կգործարկվեն համացանցային կայքերը: Նպատակն է բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Իրականացվելիք աշխատանքների արդյունքում քաղաքապետարաններում (գյուղապետարաններում) կստեղծվեն անհրաժեշտ կարողություններ համացանցային կայքերի գործարկումն ու դրանց ընթացիկ սպասարկումը կանոնավոր կերպով իրականացնելու համար:	Տարածքային կառավարման նախարարություն	
4	Մաքսային ձևակերպման ոլորտում նախնական հայտարարագրման և ամբողջովին էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրում	Էլեկտրոնային մաքսային հայտարարագրման համակարգի ամբողջականացումը դյուրացնելու և հասանելի է դարձնելու հայտարարագրումը՝ անկախ հայտարարատուի գտնվելու վայրից: Արդյունքում ակնկալվում է համակարգից օգտվողների թվաքանակի աճ ինքնահայտարարագրող տնտեսվարող սուբյեկտների շրջանում (առնվազն 5 տոկոս՝ տարեկան): Միաժամանակ, ակնկալվում է ամրապնդել համակարգի հանդեպ գործարար հանրության վստահությունը շնորհիվ ավտոմատացման արդյունքում հայտարարագրման գործընթացներում մարդկային գործունի ազդեցության և դրանից բխող կոռուպցիոն ռիսկերի նվազման:	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	
5	Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում և համայնքների կողմից դրանց փուլային գործարկում	Համակարգի ներդրման միջոցով կապահովվի կառուցապատման գործընթացի իրականացման ընթացքում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական թույլտվական փաստաթղթերի ձեռքբերման մատչելիությունը՝ արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Նախատեսվում է մինչև 2014թ. ավարտը համակարգը ներդնել և գործարկել ՀՀ թվով 37 խոշոր քաղաքային համայնքներում, այլ քաղաքային համայնքներում՝ 2014-2016թթ.: Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն կբարձրանա կառուցապատման գործառնություններից օգտվողների սպասարկման որակը, գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև կնվազեցվեն կոռուպցիոն ռիսկերը, կապահովվի թույլտվական ընթացակարգերի վերահսկելիությունը ողջ գործընթացի իրականացման ընթացքում:	Քաղաքաշինության նախարարություն	

6	<p>Հայաստանի Հանրապետության թվով 250 համայնքներում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում</p>	<p>Նպատակն է հանրային կառավարման ոլորտում փաստաթղթաշարժի միասնական համակարգի ձևավորումը, կառավարման ոլորտում օպերատիվության և որակի բարձրացումը: Արդյունքում ակնկալվում է ապահովել էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակում տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կամ տարածքային կառավարման մարմինների միջև:</p>	<p>Տարածքային կառավարման նախարարություն</p>	
7	<p>Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում</p>	<p>2012 թվականից ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով: Համակարգը հնարավորություն է տալիս ՀՀ քաղաքացիներին աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող որևէ հարցով դիմել միասնական ընդունարան և ստանալ հնարավոր խնդիրների լուծումը՝ բացառելով դրամական վճարների (կենսաթոշակներ, նպաստներ կամ դրամական օգնություն) համար դիմելիս քաղաքացի-սոցիալական աշխատող անմիջական կապը, դրանով նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: 2013թ. օգոստոսի դրությամբ հանրապետությունում գործում են ինտեգրված սոցիալական ծառայությունների 19 կենտրոններ, ևս 35 կենտրոններ նախատեսվում է ձևավորել մինչև 2017թ.:</p>	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	
8	<p>Նախարարական կոմիտեներին կից քաղաքացիական հասարակության խորհուրդների ստեղծում</p>	<p>Հայաստանի սոցիալական և տնտեսական զարգացումն ապահովելու համար՝ հանրային քաղաքականությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավվածության աստիճանի և ազդեցության աճի բարձրացման նպատակով ՀՀ բոլոր նախարարներին և կոմիտեների պետերին կից ստեղծել քաղաքացիական հասարակության խորհուրդներ:</p>	<p>Արմավիրի զարգացման կենտրոն</p>	<p>2008 թվականից գործում է ՀՀ Նախագահին կից Հանրային խորհուրդը, որի լիազորությունների շրջանակներում է ներկայացված առաջարկության կարգավորման առարկան: Բացի այդ գործողությունների ծրագրում ներառված է նմանատիպ պարտավորություն, որը նախատեսում է կատարել փոփոխություններ և լրացումներ ՀՀ նախարարությունների կողեգիաների/խորհուրդների օրինակելի աշխատակարգում: Պետական կառավարման մարմինների կանոնադրությամբ նախատեսված է խորհրդակցական մարմինների ստեղծման հնարավորություն, մասնավորապես՝ պաշտպանության, կրթության և գիտության, արդարադատության նախարարներին կից գործում են հանրային խորհուրդներ: Տես ծրագրի N 7 պարտավորությունը:</p>
9	<p>Մասնավորեցման գործընթացների թափանցիկության ապահովում</p>	<p>Մշակել իրավական ակտ՝ ապահովելու հանրային սեփականության մասնավորեցման գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման և մասնակցության կարգ:</p>	<p>Թրանսփարենսի հնթերնեշնլ</p>	<p>«Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցներով իրապարակվում են անհրաժեշտ տեղեկությունները ՀՀ կառավարության սահմանած կարգին համապատասխան:</p>

10	Քաղաքացիական հասարակության կառույցներին տրամադրվող ֆինանսավորման թափանցիկության ապահովում	Սահմանել հստակ ընթացակարգեր քաղաքացիական հասարակության կառույցներին տրամադրվող պետական եւ համայնքային դրամաշնորհների, ֆինանսական և/կամ նյութական օժանդակության ու դրանց հրապարակայնացման համար՝ ներառելով գործընկերների ընտրության չափանիշները, դրամաշնորհառու կազմակերպությունների ընտրության չափանիշները, մրցույթների անցկացման կարգը, գնահատման մեխանիզմները, ընտրված կազմակերպությունների և դրանց հիմնադիրների/ղեկավարների մարմնի անդամների ցանկը, տրամադրվող գումարները եւ ստացվող արդյունքները:	Ասպարեզ ակումբ	Բարձրացված խնդիրը, հիմնականում, կարգավորված է: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ Նախագահի հրամանագրում փոփոխությունների/լրացումների ընդունումը դուրս է ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակից:
11	Մասնավոր լրատվամիջոցներին տրամադրվող ֆինանսավորման թափանցիկության ապահովում	Իրավական ակտերով ամրագրել մասնավոր լրատվամիջոցներին տրամադրվող օժանդակության առցանց հրապարակման վերաբերյալ պահանջ:	Ասպարեզ ակումբ	Բարձրացված հարցն արդեն իսկ կարգավորված է ՀՀ մշակույթի նախարարի համապատասխան հրամանով: Բացի այդ՝ ներկայացված առաջարկությունը հավակնոտ չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնավոր լրատվամիջոցներին տրամադրվող օժանդակության առցանց հրապարակման վերաբերյալ պահանջի կատարումը կարող է ապահովվել ՀՀ վարչապետի առանձին հանձնարարականով:
12	Համայնքների ներկայացուցչական մարմինների՝ ավագանիների պատշաճ գործունեության ապահովում	Բոլոր համայնքներում ապահովել ավագանու գործունեության պատշաճ աշխատանքային պայմաններ, այդ թվում՝ նստավայր եւ հանրության մասնակցության համար համապատասխան տարածք ու պայմաններ եւ վերահսկել ավագանու գործունեության մասին հանրության իրազեկման և մասնակցության գործընթացը:	Ասպարեզ ակումբ	
13	Պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառության հանրամատչելիության ապահովում	Ի կատարումն է ՀՀ կառավարության 24.09.2010թ. «Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառությունում պարտադիր կիրառման հայկական համակարգչային տառատեսակները հաստատելու մասին» N1259-Ն որոշման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր կայքերի տեղեկատվությունը զետեղել UNICODE համակարգով, իսկ այլ համակարգով եղած բոլոր տեքստերը և տեղեկությունները փոխարինել UNICODE համակարգի տեղեկություններով:	Ասպարեզ ակումբ	
14	Կրթական հաստատությունների բյուջեի նախագծի և եռամսյա կատարողական հաշվետվությունների հրապարակայնության ապահովում՝ ինտերակտիվ ինտերնետային հարթակ ստեղծելու միջոցով	Նախապատրաստել շրջաբերական գրություններ և հրահանգներ ուղղված ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին, առանձին գործող ավագ դպրոցների տնօրեններին՝ ապահովելու հանրակրթական ուսումնական հաստատությունների բյուջեի թափանցիկ/մասնակցային պլանավորումը և բյուջեի ծախսերի վերաբերյալ հաղորդումները, հաշվետվությունները քաղաքացիներին մատչելի տարբերակով	Վորլդ վիժն Հայաստան	

Առաջարկություններ, որոնք ենթադրում են նոր օրենքների նախագծերի մշակման եւ ընդունման, ինչպես նաեւ գործող օրենքներում փոփոխություններ կատարելու պահանջ (նշված պահանջի ապահովումը դուրս է ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակից)

N	Առաջարկություն	Նկարագրություն	Առաջարկություն ներկայացնողը	Հատուկ կարծիք
